

**Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի (AWHHE) և
Եվրոպայի կանայք հանուն ընդհանուր ապագայի (WECF)**

Հայաստան

**Սոցիալ-տնտեսական և գենդերային հետազոտությունը Հայանիստ,
Ֆանտան և Ձորաղբյուր գյուղերում**

Թեմատիկ համաֆինանսավորման (TMF) ծրագրի համար

Սոլունիա Բարիակ

Օգոստոս 2005

Արժույթը և համարժեք միավորները

Արժույթի միավորը՝ ՀՀ դրամ

	Փետրվար 2005 թ.
Դրամ/ԱՄՆ դոլար	498
Դրամ/Եվրո	598
ԱՄՆ դոլար/Եվրո	1.20

Հարմարավետության նկատառումներով, այս զեկույցում բոլոր գները ներկայացված են հայկական դրամով և/կամ ամերիկյան դոլարով (USD), քանի որ ամերիկյան դոլարը պատասխանողների մեծ մասի համար երկրորդ հիմնական տարադրամն է՝ հայկական դրամից հետո:

Աղքատության շեմը

«Հազարամյակի զարգացման նպատակների» (ՀՁՆ) թիրախ 1-ով նախատեսվում է 1990 թ.-ի համեմատ մինչև 2015 թ. կիսով չափ կրճատել օրական մեկ ամերիկյան դոլարից պակաս եկամուտ ունեցող մարդկանց քանակը: Հետևաբար, ՀՁՆ-ի ցուցիչը համարժեք է մեկ ամերիկյան դոլարի: Մինչդեռ Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի երկրներում որպես աղքատության ավելի բարձր շեմ ընդունված է համարել օրական 2 ամերիկյան դոլարի եկամուտը՝ ջրի, ջեռուցման, հագուստի և սննդի համար լրացուցիչ վճարներ կատարելու պարագայում: Այդ պատճառով, այս զեկույցում մենք ենթադրում ենք, որ աղքատության շեմը համարժեք է 2 ամերիկյան դոլարի:

Բովանդակություն

1. Ներածություն	5
1.1 Ծրագիրը	5
1.2 Մեթոդաբանություն	6
1.3 Երախտիքի խոսք	7
2. Ամփոփ հետևություններ	7
3. Ձեռք բերված տվյալներ Հայանիստի վերաբերյալ	12
3.1 Հայանիստ գյուղը	13
3.2 Պատասխանողների և նրանց ընտանիքների նկարագիրը	14
3.3 Աշխատանք, եկամուտ և ծախսեր	14
3.4 Սեռերի դերաբաշխումը	16
3.5 Համայնքի մասնակցությունը և սոցիալական ներքին ցանցը	17
3.6 Հող և հողագործություն	17
3.7 Ջրի աղբյուրներ, որակը և օգտագործումը	22
3.8 Ջրահեռացում, ջրի և թափոնների հեռացում	26
3.9 Առողջություն, սննդակարգ և հիգիենա	28
3.10 Հայանիստի գլխավոր խնդիրները՝ պատասխանողների ընկալմամբ	31
3.11 Տարաբնույթ հարցեր	31
3.12 Եզրակացություն	33
3.13 Առաջարկություններ	35
4. Ձեռք բերված տվյալներ Ֆանտանի վերաբերյալ	37
4.1 Ֆանտան գյուղը	37
4.2 Պատասխանողների և նրանց ընտանիքների նկարագիրը	38
4.3 Աշխատանք, եկամուտ և ծախսեր	38
4.4 Սեռերի դերաբաշխումը	39
4.5 Համայնքի մասնակցությունը և սոցիալական ցանցը	40
4.6 Հող և հողագործություն	40
4.7 Ջրային ռեսուրսներ, որակը և օգտագործումը	43
4.8 Ջրահեռացում և թափոնների հեռացում	45
4.9 Առողջություն, սննդակարգ և հիգիենա	48
4.10 Ֆանտանի գլխավոր հիմնախնդիրները՝ պատասխանողների ընկալմամբ	51
4.11 Եզրակացություններ	51
4.12 Առաջարկություններ	53
5. Ձեռք բերված տվյալներ Ձորաղբյուրի մասին	54
5.1 Ձորաղբյուր գյուղը	54
5.2 Պատասխանողների և նրանց ընտանիքների նկարագիրը	55
5.3 Աշխատանք, եկամուտներ և ծախսեր	55
5.4 Սեռերի դերաբաշխումը	57
5.5 Համայնքի մասնակցությունը և սոցիալական ցանցը	58
5.6 Հող և հողագործություն	59
5.7 Ջրի աղբյուրներ, որակը և օգտագործումը	61
5.8 Ջրահեռացում և թափոնների հեռացում	64
5.9 Առողջություն, սննդակարգ և հիգիենա	65
5.10 Ձորաղբյուրի հիմնախնդիրները՝ պատասխանողների ընկալմամբ	67
5.11 Տարաբնույթ հարցեր	67
5.12 Եզրակացություններ	68

5.13 Առաջարկություններ	69
Հավելված. Շրջագայությունների ժամանակացույցը	70

1. Ներածություն

1980-ական թվականներից սկսած Հայաստանն անցել է շատ փորձությունների միջով: Նախ, 1988 թ.-ի աղետալի երկրաշարժը, որի էպիկենտրոնը գտնվում էր երկրի հյուսիս-արևմուտքում՝ Շիրակի և Լոռու մարզերում, խլեց բազմաթիվ մարդկային կյանքեր, իսկ կենդանի մնացածներին զրկեց գոյատևման միջոցներից: Այնուհետև, վաղ 90-ականներին Խորհրդային Միության փլուզումը հանգեցրեց տնտեսության քայքայմանը, որի հետևանքով փակվեցին խոշոր արդյունաբերական ու ռազմական ձեռնարկությունները: Եվ վերջին, բայց ոչ պակաս կարևոր հանգամանքն Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև 1992-1994թթ. պատերազմն էր, որը հանգեցրեց բացահայտ թշնամանքի, որը շարունակվում է առ այսօր, և այդ երկրները, փաստացի, գտնվում են սառը պատերազմի կարգավիճակում: Արդյունքում, կաթվածահար եղան հարևան երկրների փոխհարաբերությունները: Ադրբեջանի և Թուրքիայի հետ Հայաստանի սահմանները ներկայումս մնում են փակ: Մեկուսացումը խիստ բացասաբար է անդրադարձնում բեռնափոխադրման, էներգամատակարարման և ընդհանրապես՝ երկրի տնտեսության վրա: 90-ականների կեսերին Հայաստանի բնակչությունը ծանր զրկանքներ է կրել ցուրտ ձմեռներին: Ավելին, ադրբեջանցիների արտագաղթը և Ադրբեջանում բնակվող հայ փախստականների մեծաքանակ հոսքն ավելի էր բարդացրել տնտեսության վիճակը և մարդկանց կյանքի պայմանները: Համաձայն աղքատության և սոցիալական ազդեցության վերլուծության տվյալների (2003թ.), աղքատությունը Հայաստանում մեծ չափերի է հասնում, բնակչության 54 %-ի սպառողական մակարդակը ցածր է աղքատության շեմից, որը կազմում է օրական 2 ամերիկյան դոլար:

2005 թ. «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությունը (AWHHE), համագործակցելով «Եվրոպայի կանայք հանուն ընդհանուր ապագայի» միջազգային կազմակերպության հետ (WECF, Նիդեռլանդներ), Հայաստանում սկսեց իրականացնել թեմատիկ համաֆինանսավորման (TMF) ծրագիրը: Այս ծրագրի շրջանակներում 2005թ. փետրվարին Հայաստանի 3 գյուղերում՝ Հայանիստում, Ֆանտանում և Ջորաղբյուրում, անց է կացվել երեք կարճատև հետազոտություն: Վերջինիս նպատակն է եղել՝ ավելի խորը հասկանալ ծրագրում ընդգրկված գյուղերում սոցիալ-տնտեսական իրավիճակը և սեռային դերաբաշխումը՝ ծրագրի հաջող իրականացումն ապահովելու համար:

1.1 Ծրագիրը

TMF ծրագիրը շնորհել է Հոլանդիայի արտաքին գործերի նախարարությունը: Այն բաղկացած է ենթածրագրերից, որոնք պետք է իրականացվեն երեք երկրներում՝ Հայաստանում /3 գյուղում/, Ուզբեկստանում /1 գյուղում/ և Աֆղանստանում /3 գյուղում/: Բոլոր ենթածրագրերի առարկան մեկն է՝ «Ջուր, ջրահեռացում և շրջակա միջավայր»: Համատեղ ծրագրի գլխավոր նպատակն է՝ կրճատել աղքատությունը ծրագրում ընդգրկված տարածքներում՝ բնակչության համար խմելու անվտանգ ջուրը, ջրահեռացումը և օրգանական հողագործությունն ավելի մատչելի դարձնելու և համայնքի զարգացման գործում համայնքի բնակչության մասնակցությունն ակտիվացնելու միջոցով: Ծրագրի նպատակներից է նաև՝ աշխատանքներ ծավալել կայուն զարգացման, հատկապես՝ ջրի և ջրահեռացման (7) ու մայրական

առողջության պահպանման (5) վերաբերյալ ՀԶՆ նպատակների իրականացման ուղղությամբ:

1.2 Մեթոդաբանություն

2005 թ. փետրվարի 7-8-ը Երևանում տեղի ունեցան Հայաստանի, Ուզբեկստանի և Նիդեռլանդների (բացառությամբ Աֆղանստանի)՝ ծրագրում ներգրավված կազմակերպությունների նախնական հանդիպումներ: Այդ հանդիպումների ընթացքում ներկայացուցիչները հնարավորություն ունեցան ներկայացնել իրենց երկրները, ծրագրում ընդգրկված վայրերը և վերջիններիս խնդիրները: Փետրվարի 9-ին և 12-ին ծրագրի մասնակիցները կարճատև այցելությամբ եղան Հայաստանի բոլոր, ծրագրում ընդգրկված գյուղերում և հանդիպեցին տեղեկատվություն տրամադրող անձանց: Ավելին, AWHHE –ի անդամների հետ քննարկվեց և կազմվեց երեք գյուղում փաստացի ուսումնասիրություն կատարելու պլանը, ելնելով տեղական պայմաններից, փոփոխվեցին հարցաթերթիկները և մշակվեցին կարճ հարցաթերթիկներ ցուցիչ հարցերով:

Ուսումնասիրությունները/հարցումներն իրականացվել են 2005 թ. փետրվարի 14-19-ը: Տվյալները ձեռք են բերվել արագ գնահատման մեթոդներով (Rapid Rural Appraisal): Բոլոր երեք գյուղերում անց են կացվել ոչ պաշտոնական հարցազրույցներ՝ օգտագործելով ստուգիչ/ուղղորդող ցուցակներ քննարկումները վարելու և հետաքրքրող հարցերի քննարկումների հաջորդականությունը ապահովելու համար: Այդ հարցազրույցների միջոցով հավաքվել են ավելի շատ որակական, քան քանակական բնույթի տվյալներ: Հարցազրույցներին մասնակցել են ընտանիքների ներկայացուցիչներ և տղեկատու անձինք: Ընտանիքներն հարցազրույցի համար ընտրվել են կանխամտածված, նպատակ ունենալով ընդգրկել գյուղի տարբեր մասերում բնակվող, ինչպես նաև տարբեր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքների ներկայացուցիչներին: Հարցմանը պետք է մասնակցեին համեմատաբար հավասար քանակությամբ կանայք և տղամարդիկ, տարբեր տարիքային խմբերի և տարբեր կատեգորիաների ընտանիքների մարդիկ: Այնուամենայնիվ, փաստորեն պարզվել էր, որ պատասխանողների մեջ գերակշռում են կանայք:

Տարբերակների ընտրությամբ ստուգիչ ցուցակը հիմնված էր ընդհանուր գենդերային վերլուծության վրա և ընդգրկում էր արտադրական, սեռերի դերաբաշխման, համայնքի մասնակցության, առողջության, կրթության, կարիքների և գերակայությունների հարցերը: Ուշադրության կենտրոնում են գտնվել ջրի, ջրահեռացման, թափոնների հեռացման, քիմիական պարարտանյութերի և թունաքիմիկատների հարցերը, քանի որ ծրագրի առանցքային հարցերն են՝ էկոսանիտարիան, անվտանգ խմելու ջուրը, թափոնների կառավարումը և հողագործությունը՝ կապված վերոհիշյալ խնդիրների հետ: Միևնույն ժամանակ պատասխանողներն քննարկման են դրել աղքատության, աշխատանքի (ավելի շուտ աշխատանքի բացակայության), բուժօգնության հարցերը: Քննարկվող հարցերի ծավալի և հարցման համար նախատեսված առավելագույն ժամանակի (մոտ 50-75 րոպե) պատճառով միշտ էլ, որ հնարավոր էր լինում շոշափել բոլոր հարցերը մեկ հարցազրույցի ընթացքում, բայց, ընդհանուր առմամբ ընդգրկվում էին բոլոր կարևոր հարցերը: Ավելին, AWHHE –ի անդամները ծրագրային բոլոր գյուղերում անց են կացրել լրացուցիչ հարցումներ, հիմնվելով ավելի ֆորմալ «երկար» և «կարճ»

հարցաթերթիկների վրա: AWHHE –ն Հայանիստում իրականացրել է 11 «երկար» և 22 «կարճ» հարցում, Ֆանտանում՝ 3 «երկար» և 20 «կարճ», իսկ Ձորաղբյուրում՝ 12 «երկար» և 18 «կարճ» հարցում:

1.3 Երախտիքի խոսք

Հեղինակն իր շնորհակալություն է հայտնում հարցված բոլոր մարդկանց՝ իրենց կյանքի, ապրելու պայմանների, հաճախ խիստ անձնական բնույթի հարցերի շուրջ տեղեկատվություն տրամադրելու համար, ինչպես նաև նրանց ցուցաբերած բարյացկամության ու պատրաստակամության համար: Հեղինակն իր շնորհակալական խոսքն է հղում AWHHE-ի նախագահ Ելենա Մանվելյանին, նաև ՀԿ անդամներին, ովքեր շատ օգտակար գործ կատարեցին՝ կազմակերպելով գործնական այցեր և ապահովելով անհրաժեշտ տեղեկատվությամբ: Հատուկ շնորհակալություն էմմա Անախասյանին, Լուսինե Նալբանդյանին և Քնարիկ Գրիգորյանին՝ ցուրտ եղանակին համբերատար ձևով թարգմանություններ կատարելու համար: Հեղինակն իր խորին երախտագիտությունն է հայտնում Քիթի Բենթվելսենին, ում զգալի ներդրումների շնորհիվ հնարավոր եղավ իրականացնել այս ուսումնասիրությունը:

2. Ամփոփ հետևություններ

Աշխատանք, եկամուտ և աղքատություն

Հայաստանում աղքատությունը տարածված երևույթ է, բնակչության 54 % -ի սպառողական մակարդակը աղքատության շեմից ցածր է (Աղքատության և սոցիալական ազդեցության վերլուծություն, 2003թ.): Իրականացրած ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ծրագրում ընդգրկված գյուղերի բնակչության 90 %-ը գտնվում է աղքատության շեմից ցած: Իրավիճակն առավել վատթար է Ֆանտան և Հայանիստ գյուղերում, և մի փոքր բարվոք է Ջորաղբյուրում: Ընդհանրապես աշխատանք ունեցող հարցվողների աշխատավարձը ցածր է: 56 % պատասխանողների և/կամ իրենց ընտանիքների աշխատանքով ապահովված հարցվող անդամների աշխատավարձը ամսական 30 000 դրամից (60 ամ. դոլ.) պակաս է: Բոլոր պատասխանողների (և իրենց ընտանիքների անդամների) աշխատավարձերը տատանվում են ամսական 15 000 –ի և 150 000 դրամի սահմաններում (30-300 ամ. դոլ./ամսական): Աղքատության գլխավոր պատճառը գյուղերում գործազրկության բարձր չափերն են: 40% հարցված ընտանիքների աշխատանքային տարիքի և ոչ մի անդամ աշխատանք չունի: Շատ ընտանիքների (հատկապես Ֆանտանում և Հայանիստում) եկամտի միակ աղբյուրը թոշակառուների նպաստներն են (10-20 ամ. դոլ./ամսական): Կան նաև ընտանիքներ, որոնք ընդհանրապես եկամտի աղբյուր չունեն: Գումարի պակասից բացի, ընտանիքների կյանքի պայմանները դժվարանում են նաև այն պատճառով, որ նրանք ի վիճակի չեն տնամերձ հողամասում սեփական կարիքների համար աճեցնել բավարար քանակի միրգ ու բանջարեղեն:

Ծախսեր

Ծրագրում ընդգրկված գյուղերում պատասխանողների ծախսերն հիմնականում կապված են սննդի, վառելիքի և կոմունալ վարձավճարների հետ (օր.՝ ջուր, էլեկտրաէներգիա և այլն): Պատասխանողների 90 %-ը հայտարարում էր, որ իրենք եկամտի առավել քան 50 %-ը ծախսում են սննդամթերքի վրա: Իրականում, սնվելու համար երբեմն ծախսերն ավելի քիչ են լինում (հատկապես Հայանիստում), քանի որ եկամտի մեծ մասը, հատկապես ծմռան ամիսներին, մարդիկ ծախսում են վառելիք ձեռք բերելու համար (օր.՝ վառելափայտ, հեղուկ/բալոնով գազ կամ կենտրոնացված ջեռուցում), և մարդիկ հարկադրված խնայում են սննդի համար նախատեսված գումարը, որպեսզի ի վիճակի լինեն վճարել հարկերը: Ֆանտան գյուղում տնտեսությունների 40 %-ը հնարավորություն չունի վճարել կոմունալ վարձերը, քանի որ ծախսերը գերազանցում են եկամուտը: Ձմռանը, ամբողջ տունը տաքացնելու համար, կենտրոնացված ջեռուցում ունենալու պարագայում, ընտանիքը ստիպված է ամսական ծախսել մոտ 90 000 դրամ: Իրականում, տնտեսությունները վառելիքի վրա ամսական ծախսում են 4-50 000 դրամ (Ջորաղբյուրում՝ ամսական 5-50 000 դրամ, մինչդեռ Ֆանտանում և Հայանիստում այն կազմում է ամիսը 4-12 000 դրամ): Գյուղաբնակները մեծ ծախսեր են կատարում բուժօժանդությունից օգտվելու, դեղորայք գնելու համար (եթե ընտանիքն ի վիճակի է վճարել, կամ առձեռն գումար է ստանում հարազատներից): Երեք գյուղերի շատ պատասխանողների կարծիքով, եթե իրենք լրացուցիչ գումար ունենային, ապա կծախսեին հիվանդանոցի, բժշկի և /կամ ատամնաբույժի ծառայությունից օգտվելու համար: Սակայն, մարդկանց եկամտի համեմատ բուժօգնության ծառայության գներն ավելի բարձր են՝ սկսած 20 ամ. դոլարից քարտ դուրս գրելու (պատասխանողներ Ֆանտանից և Ջորաղբյուրից), 80 ամ. դոլ. ծննդաբերության համար (պատասխանող Հայանիստից), 220 ամ. դոլ. երեխայի աչքի վիրահատության համար (պատասխանող Ֆանտանից) և այլն:

Հող և հողագործություն

Ֆանտան և Ձորաղբյուր գյուղերի բոլոր բնակիչները բացի տնամերձ հողամասից, ունեն նաև հողակտոր երկրագործությամբ զբաղվելու համար: Հայանիստում կան տնտեսություններ, որոնք երբևէ հողակտոր չեն ունեցել: Ներկայումս, մի շարք պատճառներով (օր.՝ ներդրումների համար անհրաժեշտ մեծ ծախսեր, ոռոգման բացակայություն և հետևաբար՝ ցածր բերքատվություն, ոչ բերրի հողեր, հատկապես՝ Հայանիստում) շատ տնտեսություններ կամ դադարեցրել են իրենց հողերի մշակումը (օր.՝ Ձորաղբյուրում՝ տնտեսությունների 25 %-ը, իսկ Ֆանտանում՝ 10 %-ը) կամ ունեն չհերկած հողեր (օր.՝ Հայանիստում՝ տնտեսությունների 46 %-ը, իսկ Ձորաղբյուրում՝ 37 %-ը): Մարդիկ այս գյուղերում մշակում են հիմնականում հացահատիկային բույսեր (ցորեն, գարի, կորեկ և այլն) և կերի մշակաբույսեր: Ֆանտանի ոչ մի տնտեսություն չի մշակում տնամերձ այգին՝ ոռոգման ջրի բացակայության պատճառով: Այգեգործության վիճակը համեմատաբար լավ է Ձորաղբյուրում, բայց դեռևս թերի է զարգացած՝ ոռոգման ջրի պակասի հետևանքով:

Քիմիական պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործումը

Քիմիական պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործումը վերջին 15 տարիներին նշանակալիորեն կրճատվել է եկամտի պակասի պատճառով: Ֆանտանում հարցված ընտանիքների 20, Ձորաղբյուրում 40 և Հայանիստում 47 %-ն այժմ օգտագործում է ազոտական քիմիական պարարտանյութ: Մեկ հեկտարի համար օգտագործվող պարարտանյութի քանակը տատանվում է 20-625 կգ-ի սահմաններում: Դրանք մեծ քանակությամբ օգտագործվում են Հայանիստում, մինչդեռ Ձորաղբյուրում ամենամեծ քանակը 280 կգ/հա է: Ֆանտանի բոլոր պատասխանողները մեկ հեկտարի համար օգտագործում են 100-200 կգ քիմիական պարարտանյութ: Ակնհայտ է, որ բացի ազոտական հիմքով պարարտանյութից, այլ պարարտանյութ չի օգտագործվում: Օրգանական պարարտանյութեր շատ քիչ են օգտագործվում, քանի որ գոմաղբն հիմնականում օգտագործվում է որպես վառելիք: Գոմաղբի օգտագործումը որպես վառելիք լայն կիրառություն է գտել Ձորաղբյուրում: Թունաքիմիկատներն ամենից մեծ քանակներով կիրառվում են Հայանիստում: Այս գյուղում պատասխանողների 75 %-ը պեստիցիդներն օգտագործում է այգիների մշակման համար: Այտեղ բարձր է նաև պեստիցիդների կիրառության և հաճախականությունն ըստ տարվա եղանակի (3-4 անգամ): Ամենից շատ օգտագործվող պեստիցիդներն են՝ Կարատեն (Karate) և B-58 –ը (B-58): Արգելված (օր.՝ ԴԴՏ) կամ ծայրահեղ վտանգավոր (օր.՝ Մեթաֆոս (Metaphos)) թունաքիմիկատներ նույնպես օգտագործվում են Հայանիստում: Ձորաղբյուրում և Հայանիստում պեստիցիդներն հիմնականում օգտագործվում են լվիճների և թրթուրների ոչնչացման համար, մինչդեռ Ֆանտանում պեստիցիդներ են օգտագործվում նաև կրծողների դեմ:

Զուր

Ծրագրում ընդգրկված երեք գյուղերում ջրի հիմնախնդիրները տարբեր են: Հայանիստում առկա է ջրի որակի, կեղտաջրերով աղտոտման և դաշտերի համար ոռոգման ջրի բացակայության հիմնախնդիրը: Ֆանտանում գլխավոր հիմնախնդիրն անվտանգ ջրի մատչելիությունն է: Այստեղ անվտանգ խմելու ջրի

միան մեկ աղբյուր կա, բայց տեղի բնակիչների կողմից վարձավճարները չապահովելու պատճառով ջրամատակարարումը շարունակ դադարեցվում է: Արդյունքում, գյուղի բնակիչները հարկադրված են լինում օտվել չապաշտպանված ջրային աղբյուրների անորակ և աղտոտված ջրից: Այս իրավիճակը հաճախ վարակիչ հիվանդությունների կանոնավոր բռնկումների պատճառ է դառնում (օր.՝ տուլարեմիայի բռնկումը 2004 թ.): Գլխավոր հիմնախնդրներից է նաև այն փաստը, որ ոռոգման համակարգը վերացել է 1990-ականներին և այլևս երբեք չի վերականգնվել:

Ձորաղբյուր գյուղում խմելու ջուրը նույնպես վատորակ է: Խմելու ջրի աղբյուրները պաշտպանված չեն և մշտապես աղտոտվում են կեղտաջրերով և գոմաղբի կույտերից արտահոսող ջրերով: Կանոնավոր բռնկումներ են գրանցվում նույնիսկ ձմռան ամիսներին: Գյուղապետարանը փորձում է ամռանը ջրամատակարարման կանոնավոր ընդհատումների ճանապարհով կրճատել էլեկտրաէներգիայի ծախսերը: Ահա թե ինչու, գյուղի բնակիչները խմելու ջուր ստանում են օրեկան մի քանի ժամ, իսկ որոշ տնտեսություններ ընդհանրապես ջուր չեն ունենում (քանի որ գտնվում են ջրի աղբյուրից հեռու): Ձմռանն, այնուամենայնիվ, ջրի մեծ կորուստ է լինում, որովհետև ջուրը պետք է մատակարարվի 24 ժամ շարունակ, որպեսզի ջրի խողովակները չսառչեն: Ոռոգման ջրի բացակայությունը և պակասը Ձորաղբյուր գյուղի մեծ մասի համար նույնպես գլխավոր հիմնախնդրներից է:

Ջրահեռացում

Ջրահեռացման ենթակառուցվածքը ծրագրում ընդգրկված գյուղերում տարբեր է: Ֆանտան և Հայանիստ գյուղերի տնտեսությունները գերազանցապես ունեն ավանդական հորատիպ զուգարաններ, իսկ Ձորաղբյուրում բնակիչներն օգտվում են և հոսող ջրով գործարկվող, և ավանդական հորատիպ զուգարաններից (վերջիններս միայն ձմռանն են օգտագործվում): Հոսող ջրով զուգարաններից կեղտաջրերը թափվում են սեպտիկ տարաները (Ձորաղբյուր) կամ դրենաժային առուները (Ձորաղբյուր և Հայանիստ): Թե Հայանիստում (ոռոգման առուների ջուրը), թե Ձորաղբյուրում (արհեստական լճակի ջուրը) ոռոգման ջուրն աղտոտված է թափոնաջրերով, ներառյալ՝ հոսող ջրով գործածորկվող զուգարանների կեղտաջրերով:

Թափոնների հեռացում

Ծրագրում ընդգրկված գյուղերից ոչ մեկում չկա թափոնների հավաքման ծառայություն: Այդ պատճառով, բնակիչներն աղբը թափում են չթույլատրված վայրերում կամ այրում են (թափոններն հաճախ պարունակում են պլաստիկ նյութեր): Ընդունված երևույթ է պլաստիկ առարկաների այրումը սենյակային պայմաններում՝ որպես վառելիք, հատկապես աղքատ ընտանիքներում: Արգելված աղբավայրերը ծանր անհարմարություններ են ստեղծում, օր.՝ քամու պատճառով թափոնները լցվում են փողոցները (գանգատվում են Ֆանտանի բնակիչները) և շրջակայքում տարածում գարշահոտություն (գանգատվում են Հայանիստի բնակիչները):

Առողջություն

Ծրագրում ընդգրկված բոլոր երեք գյուղերում աղքատությունը խիստ բացասաբար է անդրադառնում մարդկանց առողջության վրա: Համարյա բոլոր տները բավարար չափով չեն ջեռուցվում, բուժօժանայության/դեղորայքի գները

շատերի համար մատչելի չեն, այդ պատճառով նրաք անհրաժեշտ բուժում չեն ստանում և չեն կարողանում դեղորայք գնել: Թերսնուցումը հիմնախնդիր է Ֆանտանում և Հայանիստում: Վատթարագույն վիճակում է խմելու ջրի մատակարարումը և ջրահեռացումը, որը մեծ վնաս է հասցնում մարդկանց առողջությանը: Բոլոր երեք գյուղերում վարակիչ հիվանդությունները տարածված երևույթ են:

Համայնքի մասնակցություն

Բոլոր ուսումնասիրված գյուղերում բնակիչների մասնակցությունը համայնքի գործունեությանը շատ ցածր է; Նախկին Խորհրդային Միության փլուզումից հետո շատ ակումբներ և կազմակերպություններ դադարեցին գործել, այդպիսով խաթարելով սոցիալական ներքին ցանցը: Այնուամենայնիվ, միմյանց օգնելու հայկական ավանդույթը դեռևս պահպանվել է: Շատ ընդունված է այն, որ երիտասարդներն օգնեն իրենցից տարիքով ավելի մեծ մարդկանց: Միևնույն ժամանակ, Ձորաղբյուրի բնակիչները հետաքրքրություն էին հանդես բերում կոմիտեի աշխատանքներին մասնակցելու, որոշումներ կայացնելու գործընթացների վրա ազդեցություն ունենալու հնարավորության առումով: Հայանիստ և Ֆանտան գյուղերում հետաքրքրությունը կոմիտեների հանդեպ խիստ ցածր էր: Այնուամենայնիվ, Ֆանտանում հարցվողների 62 %-ը և Հայանիստում 17 %-ն առաջարկում է ստեղծել գյուղական ակումբ, ուր երիտասարդները կարող են հավաքվել և հաղորդակցվել միմյանց և ներգրավվել սոցիալական բնույթի աշխատանքներում:

Սեռային (գենդերային) հարցեր

Հայաստանում գոյություն ունի սեռային խիստ դերաբաշխում: Կանայք մեծ մասամբ տնային տնտեսուհիներ են և պատասխանատու են տնտեսությունը վարելու և երեխաների խնամքը հոգալու համար: Տղամարդիկ պատասխանատու են գումար հայթայթելու և հողագործական աշխատանքներ կատարելու համար: Եթե ամուսինը հիվանդ է կամ անաշխատունակ, հողագործական աշխատանքների ողջ ծանրությունն կամ ընկնում է կնոջ ուսերին, կամ տվյալ ընտանիքը դադարում է զբաղվել հողագործությամբ:

Ընդունված է, որ տանը և տնից դուրս հիմնական որոշումները կայացնում են տղամարդիկ: Շատ քիչ են այն ընտանիքները, ուր որոշումը կայացնում է ամուսնու մայրը: Տեղական ինքնակառավարման մարմիններում հիմնականում տղամարդիկ են ընդգրկված (Ձորաղբյուրում միայն տղամարդիկ են, իսկ Հայանիստում առավել մեծ թիվ են կազմում կին ներկայացուցիչները):

Այժմ տարածված երևույթ է նաև այն, որ երիտասարդ կանայք նախընտրում են ստանալ բարձրագույն կրթություն, որպեսզի հետագայում լինեն ավելի անկախ և ինքնուրույն, այնուամենայնիվ, գործազրկությունը մնում է որպես խանգարիչ հիմնախնդիր այդ նպատակին հասնելու համար:

Ծրագրում ընդգրկված գյուղերի հիմնական խնդիրներն՝ ըստ պատասխանողների ընկալման

Հայանիստ գյուղում պատասխանողների կարծիքով գերակայություններ են համարվում տների միացումը կենտրոնացված գազամատակարարմանը (61 %) և ճանապարհների ասֆալտապատումը: Ֆանտանի բնակիչների համար գերակա են ակումբի և մանկապարտեզի բացումը (62 %), խմելու ջրի մատակարարման բարելավումը և ոռոգման համակարգի վերականգնումը (50 %): Ձորաղբյուրի

բնակիչները միասնական էին խմելու ջրի համակարգի բարելավման անհրաժեշտության հարցում, բայց նաև առաջարկում էին կառուցել հանրային օգտագործման բաղնիք, բարելավել հեռախոսակապի ծառայությունը, վերականգնել նախկինում գործող կոյուղու համակարգը և այլն: Այնուամենայնիվ, երեք գյուղերի բնակիչների ներկայացրած առաջարկներում շատ ընդհանուր բան կար: Բոլոր երեք գյուղերի համար հիմնական խնդիրներն են՝ բարելավել խմելու ջրի մատակարարումը և ոռոգման համակարգը, վերանորոգել գյուղերի ճանապարհները և բացել ակունք: Ֆանտանի (25 %) և Հայանիստի (11%) բնակիչների կարծիքով պետք է լուծվի նաև գործազրկության հարցը: Հայանիստում պատասխանողների 17 %-ը նաև նշում էր, որ անհրաժեշտ է գյուղում ստեղծել աղբահավաքման պատշաճ համակարգ:

Այս գեկույցում առանձին ներկայացված են ծրագրում ընդգրկված բոլոր գյուղերը: Գլուխ 3-ում ներկայացված են ձեռք բերված տվյալները Հայանիստի մասին, գլուխ 4-ում՝ Ֆանտանի և գլուխ 5-ում՝ Ձորաղբյուրի մասին: Յուրաքանչյուր գլուխ ավարտվում է եզրակացություններով և առաջարկներով՝ ենթագլուխներ 3.12 և 3.13, 4.11 և 4.12, 5.12 և 5.13՝ համապատասխանաբար Հայանիստի, Ֆանտանի և Ձորաղբյուրի համար:

Որպես ամփոփում, պետք է նշել, որ անհրաժեշտ է բարձրացնել ծրագրում ընդգրկված բոլոր գյուղերի բնակիչների իրազեկությունը շրջակա միջավայրի, հիգիենայի և ջրահեռացման, քիմիական պարարտանյութերի օգտագործումը կրճատելու և այլընտրանքային միջոցների կիրառումը խթանելու վերաբերյալ և ցույց տալ, թե ինչպես են այդ հարցերն անդրադառնում մարդու առողջության վրա:

Երեք գյուղերում առկա է խմելու ջրի որակը բարելավելու և այն մատչելի դարձնելու կարիքը: Ոռոգման բարելավումը նույնպես կենսական նշանակություն ունի բնակիչների համար: Համապատասխան ոռոգման համակարգի ստեղծումը նշանակալիորեն կնվազեցնեի այդ գյուղերի բնակիչների աղբատության չափը: Հայանիստ և Ֆանտան գյուղերի դպրոցների տնօրեններն հետաքրքրություն ցուցաբերեցին իրենց դպրոցների համար էկոսան զուգարանների կառուցման նկատմամբ: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ Հայաստանում էկոսան զուգարանների ներմուծման համար կան նախադրյալներ: Ինչ վերաբերում է Ձորաղբյուրին, ապա այնտեղ անհրաժեշտ է գերակա խնդիր համարել կոյուղու համակարգի վերականգնումը, քանի որ խմելու ջրի համակարգի բարելավումն առանց ջրահեռացման բարելավման չի տա ցանկալի արդյունք:

Անհրաժեշտ է բարձրացնել գյուղաբնակների իրազեկությունը մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա պլաստիկ թափոնների այրման բացասական հետևանքների մասին: Միաժամանակ, հարկավոր է ներմուծել թափոնների հեռացման և աղբահավաքման համակարգ, քանի որ բնակիչներն աղբը թափելու և պլաստիկ թափոններն այրելու նկատմամբ այլընտրանք չունեն:

Որպես եզրակացություն նշենք, որ ծրագրում ընդգրկված բոլոր երեք գյուղերը սոցիալական և շրջակա միջավայրի պահպանության առումով ձգնաժամային իրավիճակում են, որն հնարավոր է հաղթահարել միայն սիներգիկ (համատեղ ազդեցության) եղանակով:

3. Ձեռք բերված տվյալներ Հայանիստի վերաբերյալ

3.1 Հայանիստ գյուղը

Հայանիստ գյուղը պատկանում է Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանին: Այն գտնվում է Մասիս քաղաքից (մոտ 1900 բնակիչ) 6 կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 15 կմ հեռավորության վրա: Գյուղն ունի նորմալ ճանապարհ և ապահովված է փոխադրամիջոցով: Գյուղը տարբեր ճանապարհներով կապված է այլ գյուղերի հետ, ժամը մեկ ավտոբուսները մեկնում են Մասիս և Երևան:

Մինչ հայ-ադրբեջանական հակամարտության սկիզբը /1988թ./, Հայանիստ գյուղը հիմնականում բնակեցված է եղել ադրբեջանցիներով, բայց կոնֆլիկտի հետևանքով տեղի է ունեցել երկկողմանի ներգաղթ: Ադրբեջանցիները տեղափոխվել են Ադրբեջան, և գյուղը հիմնականում բնակեցրել են հայ փախստականները: Արդյունքում, 1989թ. Հայանիստի բնակչության 100%-ը կազմել են Ադրբեջանից գաղթած հայերը: Այժմ գյուղի բնակչության 90%-ը փախստականներ են, իսկ 10 %-ը՝ տեղաբնակ հայեր, որոնք համեմատաբար վերջերս են տեղափոխվել այդ գյուղ:

Պաշտոնական վիճակագրության համաձայն, 2001 թ. Հայանիստն ուներ մոտ 2046 բնակիչ (46.5 % տղամարդիկ, 53.5 % կանայք): Գյուղապետի ներկայացմամբ, բնակչության մեծ մասը թոշակառուներ են և, ինչպես ասում են, «Հայանիստը նման է ծերանոցի»: Այնուամենայնիվ, հարցվողները մեծամասամբ եղել են համեմատաբար երիտասարդ տարիքի կամ կամ երեխաներ ունեցող մարդիկ: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ թոշակառու անձանց մասնակցությունը հարցումներին թերի է:

Հայանիստի տները մեկ կամ երկու հարկից բաղկացած քարե տներ են (ինչպես ամբողջ Հայաստանում): Ինչպես փաստում է գյուղապետը, գյուղում կա 950 տուն, բայց ներկայումս այնտեղ ապրում է միայն 500 ընտանիք, 450 ընտանիք (կամ ընտանիքով, կամ ընտանիքի մի քանի անդամ) գաղթել է արտերկիր՝ աշխատանք որոնելու: Ֆինանսական ծանր իրավիճակից ելնելով, արտերկիր մեկնած մարդկանց ընտանիքի անդամները, ովքեր մնացել են գյուղում, հարկադրված են ապրել բարեկամների տանը, մեկ տանիքի տակ, որպեսզի ավելի հեշտ գոյատևեն: Տնամերձ հողամասերն առանձնացված են փողոցներից քարե պարիսպներով, որի պատճառով դժվար է նկատել, արդյոք տունը բնակեցված է, թե՛ ոչ:

Գյուղում շատ քիչ թվով փողոցներ, որոնք գտնվում են Հայանիստն այլ գյուղերի հետ կապող ճանապարհների վրա, ասֆալտապատ են: Ավելի փոքր փողոցները հողոտ են և հեշտությամբ ցեխոտվում են, քանի որ գյուղը գտնվում է ճահճոտ տարածքում: Գրունտային ջրերի մակարդակը բարձր է և գյուղում կա դրենաժային առուների ցանց: Յուրաքանչյուր փողոցի կողքին կան փոքր, ոչ խորը ջրահեռացման առուներ: Գյուղի այն մասը, ուր կան մի քանի ասֆալտապատ փողոցներ, համարվում է Հայանիստի կենտրոնական մասը: Այստեղ են գտնվում բուժկետը, դպրոցը, ավտոբուսի կանգառը և մի քանի տարբեր մեծության խանութներ, սկսած հացի խանութից, վերջացրած թունաքիմիկատների խանութով: Մոտակայքում է գտնվում նաև գյուղապետարանը:

Հայանիստի մերձակայքում կա մի թաղամաս, որտեղ ընտանիքներն ապրում են վազոններում: Այս ընտանիքները կառավարությունից ստացել կամ գնել են հող՝ տուն կառուցելու համար: Սակայն, ֆինանսական ծանր վիճակի, բարձր

գործազրկության և այն պատճառով, որ փախստականների մեծ մասն իր ունեցվածքը թողել է Ադրբեջանում, այդ ընտանիքները չունեն գումար տուն կառուցելու համար: Ավելին, այս թաղամասի որոշ բնակիչներ դեռևս չունեն անձնագիր, որի պատճառով չեն կարող պետությունից ստանալ որևէ օժանդակություն (ինչպես օրինակ, սուբսիդիա փախստականների համար, բուժխնամք երեխաների համար և այլն):

3.2 Պատասխանողների և նրանց ընտանիքների նկարագիրը

Հայանիստում իրականացրած ուսումնասիրության ընթացքում բացի տեղեկատու անձանց և ագրո-քիմիական խանութի վաճառողուհու հետ ունեցած հարցազրույցից, իրականացվել է 7 «երկար» հարցում տեղի բնակիչների հետ: Բացի այդ, AWHHE –ն անց է կացրել 11 «երկար» և 22 «կարճ» հարցում՝ օգտագործելով Քիթի Բենթլիսենի պատրաստած հարցաթերթիկները:

Անձնական կյանքի պայմանների վերաբերյալ 18 հարցումներից 13-ի հիմնական պատասխանողը եղել է իգական սեռի ներկայացուցիչ, 3 հարցմանը մասնակցել են թոշակառու ամուսիններ, իսկ 2 հարցմանը՝ այրիացած թոշակառու տղամարդ: Հիմնական պատասխանողները ներկայացնում էին 25 տարեկան և բարձր տարիքային խմբեր (20-30 տարեկան 3 պատասխանող, 30-40 տարեկան 2, 40-50 և 50-60 տարեկան 4 և 60-ից բարձր 5 պատասխանող): Պատասխանողների մեծ մասը և վերջիններիս ընտանիքների ավագ անդամներն ունեին միջնակարգ կրթություն: Միայն մեկ հարցված ընտանիքում կային բարձրագույն կրթություն ստացած կամ դեռևս ԲՈՒՀ-ում սովորող անձինք: Մեկ այլ ընտանիքում երկու երեխաներն էլ համալսարանի ուսանողներ էին:

Պատասխանողների մեկ երրորդն այնպիսի ընտանիքներից էին, որոնք բաղկացած էին երկու ծնողից, 2-3 տարբեր տարիքի երեխաներից, ներառյալ մանկահասակ, դպրոցական տարիքի երեխաներ կամ չափահաս չամուսնացած երեխաներ: Հայերին հատկանշական է մեծ ընտանիք ունենալը (ծնողներն ապրում են իրենց ամուսնացած երեխաների և թոռների հետ կամ առանց թոռների), կան միացյալ, համատեղ ապրող ընտանիքներ (ծնողներն ապրում են իրենց որդիների ընտանիքների հետ): Հայանիստում 4 պատասխանող մեծ ընտանիքի, իսկ մեկ պատասխանող՝ միացյալ ընտանիքի անդամներ էին: Հարցվածներից 4 հոգի ծեր զույգեր էին (հիմնականում թոշակառու), ում երեխաները մեկնել էին, մեկ պատասխանող այրի կին էր, իսկ մեկ այլ պատասխանող՝ այրիացած տղամարդ, ովքեր ապրում էին իրենց միջոցներով:

Շատ դեպքերում հարցումներն անց էին կացվում ընտանիքի մյուս անդամների, հիմնականում՝ երեխաների և/կամ հարևանների մասնակցությամբ: Քիթի Բենթլիսենի և/կամ Սոլոմիա Բաբիակի անցկացրած 7 հարցումներից հինգի ժամանակ ներկա է եղել մեկ կամ մի քանի հարևան:

3.3 Աշխատանք, եկամուտ և ծախսեր

Աշխատանք

Հայանիստում աշխատանքի հնարավորությունները շատ սահմանափակ են: Գյուղում բացի դպրոցից, բուժկետից, գյուղապետարանից և մի քանի փոքր խանութներից, այլ գործատուներ չկան: Ավելին, դպրոցի տնօրենը գտնում է, որ

ինքը ստիպված կլինի կրճատել ուսուցիչների թիվը, քանի որ աշակերտների քանակը տարեցտարի նվազում է: Գյուղից դուրս աշխատանքի հնարավորությունները նույնպես քիչ են, և, ընդհանրապես շատ դժվար է որևէ աշխատանք գտնելը, հատկապես՝ երիտասարդների համար: Հայանիստի երիտասարդների համար, ըստ գյուղապետի, միակ հնարավոր տարբերակը կամ Ռուսաստանի Դաշնություն մեկնել է կամ զինծառայության անցնելը: Յուրաքանչյուր ընտանիքից համարյա 1-2 հոգի մեկնել է արտերկիր: Նրանք մեծ մասամբ աշխատում են Ռուսաստանում և հիմնականում՝ անլեգալ:

Հայանիստում գործազրկության խնդիրն իրոք լուրջ է: Հարցումներին մասնակցած 14 ընտանիքից, որոնց անդամները աշխատանքային տարիքի են, միայն երեքում կար առնվազն մեկ աշխատող: Հարցված երեք ընտանիքի անդամներ զբաղվում էին գյուղատնտեսական մթերքների արտադրմամբ ու դրանց վաճառքով և/կամ անասնապահությամբ: 36 պատասխանողներից և նրանց ընտանիքների աշխատանքային տարիքի անդամներից (ուսանողներից և անաշխատունակներից բացի), միայն 6 հոգի էր ստանում աշխատավարձ: Դա նշանակում է, որ Հայանիստում հարցված բնակիչների 80 %-ը կամ գործազուրկներ են, կամ տնային տնտեսուհիներ:

Եկամուտ

Հայանիստում հարցված ընտանիքների մեկ երրորդի եկամտի միակ աղբյուրը ընտանիքի մեկ կամ երկու անդամի նպաստներն են: Պատասխանողների ամսեկան նպաստը տատանվում է 5 000 -11 000 դրամի (մոտ 10-22 ամ. դոլ.) սահմաններում, միջինը 7000 դրամ (14 ամ. դոլ.):

Թեև աշխատավարձերը թոշակների համեմատ բարձր են, բայց դրանք համարվում են դեռևս ցածր: Օրինակ, գյուղական խորհրդի քարտուղարի աշխատավարձը կազմում է 45 000 դրամ (90 ամ. դոլ.), մեխանիկինը՝ 25 000 դրամ (50 ամ. դոլ.), մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցողի համար շատ լավ վարձատրություն է համարվում 85 000 դրամը (170 ամ. դոլ.):

Որոշ տնտեսություններ եկամտի մեծ մասը և երբեմն ամբողջ եկամուտը ստանում են իրենց գյուղատնտեսական մթերքների վաճառքից: Եկամուտները կարող են տարբեր լինել և երբեմն ամսեկան կազմել 15 000 դրամ: Հայանիստի բնակիչների մոտ ընդունված է նաև բնամթերքով փոխանակումը:

Մեկ պատասխանող նշում էր, որ ինքն ունի մեկ կով և իր եկամուտը զոյանում է կաթնամթերքի վաճառքից: Միևնույն ժամանակ, իր ընտանիքի անդամները, նույնիսկ երեխաները, կաթից օգտվելու հնարավորություն չունեն: Կաթի վաճառքից ստացված գումարը շաբաթական մոտ 3 000 դրամ է:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայանիստում մեկ շնչի ամսեկան եկամուտը տատանվում է 3.36 – 91.20 ԱՄՆ դոլարի սահմաններում (համեմատեք աշխարհում աղքատության ընդունված շեմի հետ, այն է՝ մեկ անձի համար 2 ամ. դոլ./օրական):

Եկամուտը ծախսերի համեմատ

Պատասխանողներն ընդգծում էին, որ իրենք հիմնականում գումարը ծախսում են սննդի, վառելիքի, հագուստի, էլեկտրաէներգիայի և ջրի վրա: Բոլոր պատասխանողներն էլ նշում էին, որ իրենց ընտանիքի եկամտի 50 % -ը ծախսվում է սննդի վրա: Իրականում, համաձայն 11 հարցվածների պատասխանների վերլուծության, սննդի համար ծախսերն ավելի քիչ են, որովհետև եկամտի մեծ մասը, հատկապես ձմռան ամիսներին, ծախսվում է վառելիք ձեռք բերելու համար (օր.՝ փայտ կամ բալոնով գազ), և մարդիկ հարկադրված են խնայել սննդի համար անհրաժեշտ գումարը, որպեսզի կաողանան վճարել ջեռուցման վարձերը: Սակայն, վառելիքի համար գումար խնայելու նրանց փորձերն հաճախ ձախողվում են: Իրենց ցածր եկամուտների պատճառով Հայանիստի բնակիչները կարողանում են տաքացնել միայն մեկ սենյակը՝ միևնույն ժամանակ ճաշ պատարաստելով այդ նույն սենյակում տեղադրված վառարանի վրա: Էլեկտրաէներգիան նույնպես մեծ ծախսեր է պահանջում, որի համար տեղի բնակիչներն ամսեկան վճարում են 800 – 15 000 դրամ, համապատասխանաբար՝ 32 կվ-ի և 600 կվ-ի: համար: Աղքատ ընտանիքները գումարի խնայողության նպատակով ամբողջ տունը լուսավորում են միայն մեկ էլեկտրական լամպիկով և չեն միացնում հեռուստացույց ու սառնարան: Բարեկեցիկ կյանքով ապրող ընտանիքը, որի եկամուտը մոտ 372 ԱՄՆ դոլար է, եկամտի մոտ 8 % -ը ծախսում է վառելիքի, ջրի և էլեկտրաէներգիայի վրա: Մինչդեռ այդ կարիքների համար ծախսված գումարը որոշ ընտանիքների ամբողջ ամսվա եկամուտն է: Հետևաբար, դժվար է հասկանալ, թե ինչպես են մարդիկ խնայողություններ անում հագուստ գնելու համար:

3.4 Սեռերի դերաբաշխումը

Ընտանիքներում սեռերի դերաբաշխումը բավական ակնհայտ է հատկապես Հայաստանի գյուղական բնակավայրերում: Ընդունված է, որ կանայք պետք է զբաղվեն տան գործերով և երեխաների խնամքով, իսկ տղամարդիկ՝ գումար վաստակեն: Նախկին խորհրդային տարիներին հռչակվում էր կանանց և տղամարդկանց հավասարություն, բայց նույնիսկ այն ժամանակներում տղամարդիկ կանանց նախընտրում էին տեսնել «տնային տնտեսուհու» դերում: Կրթությունը, ներառյալ բարձրագույն կրթությունը, էր և մնում է մատչելի երկու սեռերի համար: Հարկ է նշել, որ պատասխանողների կարծիքով, ավելի հաճախ աղջիկներն էին ընդունվում ԲՈՒՀ, քան տղաները: Այնուամենայնիվ, գործազրկությունը դեռևս բարձր է և նույնիսկ համալսարանական կրթությամբ անձանց համար ծայրահեղ դժվար է աշխատանք գտնել: Այդ պատճառով, բոլոր ամուսնացած կանայք հարցման ժամանակ հայտարարում էին, որ իրենք տնային տնտեսուհիներ են, այնինչ, չամուսնացած կանայք իրենց համարում էին գործազուրկ: Պատասխանողներից մեկը նշում էր, որ իր ամուսինը չի թողնում իրեն աշխատել, և դա այն դեպքում, երբ ինք էլ է գործազուրկ, ընդ որում կինն ավելի լավ կրթություն է ստացել և աշխատանք գտնելու ավելի մեծ հնարավորություն ունի: 14 հարցված ընտանիքներից միայն մեկում և կինը, և տղամարդն ապահովված էին աշխատանքով: Նրանք երկուսն էլ բարձրագույն կրթություն ունեին, և նրանց եկամուտը մնացած բոլոր հարցված ընտանիքների համեմատ ամենաբարձրն էր:

Ընտանիքում առկա է սեռերի դերաբաշխումը: Կանայք տնտեսությունն են վարում և խնամում երեխաներին, իսկ տղամարդիկ իրենց վրա են վերցնում

Ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, ներառյալ հողագործությունը և անասնապահությունը: 11 պատասխանողներից միայն երեքը նշեցին, որ իրենց ընտանիքներում կանայք են զբաղվում երկրագործությամբ: Այդ երեք դեպքերից միայն մեկի դեպքում էր, որ ամուսինն անաշխատունակ էր, և ամբողջ ծանրությունն ընկած էր կնոջ ուսերին:

Հայանիստի կանանց շատ հատկանշական է նաև այն, որ նրանք տղամարդկանց են համարում պատասխանատու՝ ընտանիքից դուրս որոշումների կայացման գործընթացներում: Երբ պատասխանողներին հարց էր տրվում, թե ով պետք է լինի գյուղի կոմիտեի անդամ, երեք կին- պատասխանող կարճ պատասխանեցին՝ տղամարդիկ: Ինչևէ, արված ենթադրություններն այդ հարցում երեք գյուղերում տարբեր են: Օրինակ, Հայանիստի կոմիտեում ընտրված 7 անդամներից 3-ը կանայք են, մինչդեռ Ձորաղբյուրի գյուղապետարանում չկան կին անդամներ: Միևնույն ժամանակ, ընտանիքներում գումարը ծախսելու վերաբերյալ որոշումը կայացնում են կամ կինն ու ամուսինը համտեղ, կամ գերազանցապես կանայք:

3.5 Համայնքի մասնակցությունը և սոցիալական ներքին ցանցը

Հայանիստում բնակչության մասնակցությունը համայնքի գործունեությանը շատ ցածր է: Գյուղապետի կարծիքով, մարդկանց ոչ ակտիվ մասնակցությունը բացատրվում է համապատասխան շենքային պայմանների բացակայությամբ, և ցանկություն հայտնեց գյուղում ունենալ ակումբ: Միակ ակտիվ համայնքային կազմակերպությունները գյուղապետարանի ավագանիների խորհուրդն է և դպրոցի ծնողական կոմիտեն: Միևնույն ժամանակ, մնացած բոլոր պատասխանողները նշում էին, որ ոչ իրենք, ոչ իրենց ընտանիքների անդամները ներգրավված չեն համայնքի որևէ գործունեությունում: Ավելին, այն հարցին, թե ով պետք է լինի կոմիտեի անդամ, որի նպատակն է քննարկել և գտնել գյուղի հիմնախնդիրների լուծումներ, որոշ պատասխանողների կարծիքով, ոչ ոք չպետք է մասնակցի կոմիտեի աշխատանքներին, մեկ պատասխանող նշեց, որ ինքը չգիտի, 3 պատասխանող գտնում էր, որ դա տղամարդկանց գործն է, և միայն մեկ կին երկար մտորումներից հետո ասաց, որ ինքը կարող է կոմիտեի անդամ դառնալ, բայց մարդիկ չեն սիրում իրեն, որովհետև ինքը ճշմարտախոս է:

Մյուս կողմից, որոշ պատասխանողներ նշեցին, որ իրենք իրենց ընդհանուր հարցերը լուծում են հարևանների հետ համատեղ և միշտ կարող են դիմել հարևանի օգնությանը: Օրինակի համար, Հայանիստի փողոցներից մեկի բնակիչները միացյալ ուժերով կառուցել են արտեզյան խորը ջրհոր, այդպիսով լուծելով 20 ընտանիքի խմելու ջրի մատակարարման հարցը: Նույն փողոցի բնակիչները նշեցին նաև, որ իրենք են մաքրում իրենց ջրահեռացման առուները և չեն սպասում հատուկ ծառայության ներկայացուցիչների գալուն:

Միևնույն ժամանակ, պատասխանողների 45 % -ը գտնում էր, որ չկա որևէ մեկը, որին իրենք կարողանան դիմել օգնության համար, կամ ուրիշին դիմելը համարում էր անիմաստ և գերադասում էր չխնդրել:

3.6 Հող և հողագործություն

Հողի սեփականություն

Հայանիստի բնակչության հիմնական մասը տեղափոխվել է Հայաստան 1988 թ.: Այդ ժամանակ Հայաստանը դեռևս նախկին Խորհրդային Միության մասն էր կազմում, և նոր եկող մարդիկ իրենց տնամերձ հողամասերից բացի, պետությունից կարող էին անվարձահատույց հող ստանալ՝ սեփական օգտագործման նպատակով: Խորհրդային Միության փլուզումից համարյա անմիջապես հետո հողերը սեփականաշնորհվեցին (1991-1992 թթ.), և այն հողակտորները, որոնք մարդիկ ստացել էին պետությունից, դարձան իրենց սեփականությունը: Ներգաղթը դեռ շարունակվում էր, բայց ներգաղթյալները չէին կարող այլևս անվճար հող ձեռք բերել: Նրանց թույլատրվում էր գնել միայն 800 քառ.մ հող՝ տուն կառուցելու նպատակով, որի մոտ կեսը կգբաղեցներ տան հիմքը: Ահա թե ինչու, պատասխանողների հավաստմամբ, իրենց ունեցած հողը (տնամերձ հողամասով և/առանց մշակաբույսերի դաշտի) կազմում է 0.03 - 0.45 հա:

Հողագործություն

Հայանիստում ներկայումս չկա կոմերցիոն հողագործական արտադրություն: Չնայած թվում է, թե ոչինչ չի խանգարում մարդկանց գնել ավելի շատ հող, բայց իրականում տեղի բնակիչները շահագրգռված չեն ավելի մեծ հողակտորների սեփականացման գործում: Հայանիստում, հողագործական արտադրությունը շահութաբեր չէ՝ ելնելով հետևյալ պատճառներից.

1. Հողի որակը շատ վատն է, որի պատճառով բերքատվությունը ցածր է: Հայանիստի հողը համարվում է ոչ պիտանի հողագործության համար գրունտային ջրերի բարձր մակարդակի /0.3 մ/ և հողի խիստ ալկալիական լինելու պատճառով: Ջրի բարձր մակարդակը թույլ չի տալիս աճեցնել մրգատու ծառեր, իսկ խոտաբույսերը և կարճ արմատային համակարգ ունեցող բանջարանոցային բույսերը ամռանը ոռոգման կարիք ունեն: Ինչևէ, գյուղի մի մասում հողը, կարծես թե, համեմատաբար բարվոք է և այդ պատճառով մարդիկ, ովքեր ունեն դաշտեր և/կամ այգիներ, կարողանում են աճեցնել բանջարեղեն: Քչերն են մշակում հացահատիկ:
2. Ընտանիքների անդամները հիմնականում ծեր մարդիկ են, որոնց ֆիզիկական ուժը բավարար չէ այլևս հողի վրա աշխատելու համար:
3. Մարդիկ ցանկություն չունեն զբաղվել երկրագործությամբ, որովհետև նրանք այստեղ են տեղափոխվել քաղաքային վայրերից և սովոր չեն այդ աշխատանքներին: Բնակիչների մեծ մասը նախկինում ապրել է քաղաքներում, այդ պատճառով էլ քչերն են հարմարվել հողագործական աշխատանքներին, ավելին, գյուղատնտեսական աշխատանքների ոչ մի ավանդույթ չի փոխանցվել ներկայիս բնակիչներին:
4. Բացակայում են գյուղատնտեսական մեքենաները և չկա գումար՝ ներդրումներ կատարելու համար: Ինչպես նախկինում նշվեց, նախկին ադրբեջանցի բնակիչները բավական հաջող զբաղվել են այգեգործությամբ: Այլ կարգի տեղեկատվություն չկա: Եվ վերջին, բայց ոչ պակաս կարևոր հանգամանք է այն, որ հողի յուրաքանչյուր սեփականատեր պետք է վճարի բարձր հողահարկ (տարեկան 14 000 դրամ/հա կամ 28 ԱՄՆ դոլ./հա): Արդյունքում, հողագործությունը Հայանիստում միտված է միայն մարդկանց սեփական գոյության պահպանմանը:

Չնայած ցածր բերքատվությանը, յուրաքանչյուր ընտանիքի եկամուտը բարելավելու համար մեծ առավելություն է սեփական կարիքների համար բանջարեղեն աճեցնելու հնարավորություն ունենալը: Հայնախտում հիմնականում աճեցնում են լոլիկ, վարունգ, պղպեղ, սմբուկ, խոտաբույսեր: Բերքը հիմնականում օգտագործվում է սեփական կարիքների և պահածոների պատրաստման համար: Որոշ տնտեսություններ աճեցնում են կարտոֆիլ, եթե հողը համեմատաբար լավ որակի է, գրունտային ջրերի մակարդակը՝ ոչ շատ բարձր, և նաև, եթե ընտանիքն ունի ներդրումներ կատարելու հնարավորություն (օր. կարտոֆիլի սերմեր գնելու):

18 հարցվածներից 11-ը նշել է, որ իրենց տնտեսության սեփական հողակտորը 0.1 հա-ից պակաս է: Այս 11 ընտանիքներից 7-ը որոշ եկամուտ են ստանում իրենց գյուղատնտեսական մթերքների վաճառքից: Ավելին, այդ 7 ընտանիքներից երկուսի համար դա նրանց եկամտի միակ աղբյուրն է, մինչդեռ մնացած երեք ընտանիքների համար սեփական մթերքների վաճառքից ստացած գումարը ընդհանուր եկամտի զգալի մասն է կազմում:

Գյուղատնտեսական մթերքների վաճառքից գոյացած եկամուտը կարող է տարբեր լինել (տարեկան 30 000 դրամից մինչև 180 000 դրամ կամ ամսեկան 2500-15 000 դրամ):

Միաժամանակ, պատասխանողների համարյա կեսը նշում էր, որ իրենք բոլոր հողերը կամ այգիները մշակելու հնարավորություն չունեն: Այսպիսի տնտեսություններն ունեն 60-90 % չհերկած հողեր:

Պարարտանյութերի օգտագործումը

«Երկար» և «կարճ» հարցումների ժամանակ ընդհանուր առմամբ 40 հոգու հարց է տրվել այն մասին, թե օգտագործում են արդյոք քիմիական պարարտանյութեր իրենց դաշտերում կամ այգիներում: 19 պատասխանող հաստատել է, որ իրենք օգտագործում են, իսկ 21 հարցվող պատասխանել է, որ չեն օգտագործում: Միայն մի քանի պատասխանող են նշել, որ իրենք չեն օգտագործում ոչ օրգանական և ոչ էլ քիմիական պարարտանյութեր:

Քիմիական պարարտանյութերի օգտագործման չափը տնտեսությունների այգիներում խիստ տարբեր է՝ 30կգ/հա - 625 կգ/հա: Այն ընտանիքները, որոնց եկամուտը կախված է հիմնականում բանջարեղենի վաճառքից, մեկ հեկտարի համար ավելի շատ պարարտանյութ են օգտագործում (250 – 500 կգ): Ընդհանրապես, այս ընտանիքները գնում են 1 պարկ հանքային պարարտանյութ (մոտ 40-50 կգ) ողջ դաշտի համար, բայց քանի որ նրանց հողակտորների չափերը տարբեր են, հետևաբար տարբեր է նաև օգտագործվող պարարտանյութի քանակը:

11 «երկար» հարցումների ժամանակ 6 պատասխանող նշել է, որ իրենք օգտագործում են օրգանական պարարտանյութեր, նրանցից 4-ը օգտագործում է միայն օրգանական պարարտանյութեր: Հայնախտում որպես օրգանական պարարտանյութ օգտագործվում է գոմաղբը կամ հավի ծերտը: Պարարտանյութի ընտրությունը կախված է այն բանից, թե տվյալ տնտեսությունն ինչ կենդանիներ է պահում: Շատ քիչ են այն տնտեսությունները, որոնք գոմաղբ են գնում իրենց այգիների պարարտացման համար:

Թունաքիմիկատների օգտագործումը

Հայանիստում թունաքիմիկատների օգտագործումը շատ ընդունված է: Դրանք հիմնականում օգտագործում են բանջարեղենի, ներառյալ կարտոֆիլի, աճեցման համար: Շատ պատասխանողներ գանգատվում էին բույերի անառողջ վիճակից: Մի կնոջ կարծիքով, հողի անորակության պատճառով գյուղում շատ են վնասատուները:

40 հարցվածներից 25-ը պատասխանել են, որ իրենք օգտագործում են թունաքիմիկատներ (այսինքն՝ պատասխանողների մոտ 2/3-ը պեստիցիդներ օգտագործում է տարվա բոլոր եղանակներին): 10 պատասխանող միայն երկու տեսակի թունաքիմիկատ է օգտագործում:

Հայանիստում օգտագործվող թունաքիմիկատներն են՝ Karate (14 անգամ), B-58 (9 անգամ), Metaphos (5 անգամ), DDT (2 անգամ), Chlorophos (2 անգամ), Dimethoate (1 անգամ): Karate և B-58 պեստիցիդներն օգտագործվում են տարբեր բանջարանոցային կուլտուրաների համար: Կոլորադյան բզեզի դեմ օգտագործվում է Metaphos, Dimethoate և Karate: Հարկ է նշել, որ Metaphos-ը (պարաֆին մեթիլը), ըստ ԱՀԿ-ի դասակարգման, պատկանում է Ա կարգի (ծայրահեղ վտանգավոր) պեստիցիդների թվին: ԱՀԿ-ն խստորեն զգուշացնում է չօգտագործել այդ կարգի թունաքիմիկատները զարգացող երկրներում: Metaphos-ը խոլինեսթերազի ինհիբիտոր է և կասկած կա, որ այն կարող է վնասել էնդոկրին համակարգը: Միևնույն ժամանակ, Dimethoate –ը պատկանում է Բ կարգի (միջին վտանգավոր) պեստիցիդների թվին: Վերջինս համարվում է հնարավոր քաղցկեղածին, խոլինեսթերազի ինհիբիտոր և վերարտադրողական համակարգի վրա ազդող թույն:

Շատ պատասխանողներ մեկ սոզոնի/ տարվա շրջանի ընթացքում պեստիցիդներ կիրառում են միջինը 3-5 անգամ: Պատասխանողների մեծ մասը օգտագործում են Karate, միջինը 3-4 անգամ տարվա սեզոնին:

3.1 Գյուղատնտեսական խանութ

Այս խանութը գտնվում է դպրոցի շենքի դիմացի փողոցում: Խանութը բաղկացած է 2 սենյակից, որոնք միմյանցից առանձնացված են պլաստիկ միջնորմով: Սենյակներից մեկում վաճառվում են սերմեր՝ լոլիկի, պղպեղի, սմբուկի, վարունգի, սեխի, ձմերուկի, սամիթի և այլն: Մյուս սենյակում տեղադրված են տարբեր տեսակի ագրոքիմիական նյութեր՝ բանջարանոցային կուլտուրաների, մրգատու ծառերի և ծաղիկների համար: Հայանիստի բնակիչներին շատ են անհանգստացնում կանաչ ձանձերը, կարտոֆիլի Կոլորադյան բզեզը և թրթուրները: Վաճառքում կային Karate, Konfidor, Aktara, Skor, B-58 և այլն: Ըստ վաճառողուհու վկայության, ամենից շատ վաճառվում է Durzban-ը (Բ կարգի, միջին վտանգավորության պեստիցիդ): Խանութային պեստիցիդները պահվում են բավական մեծ փաթեթներում կամ տարաներում: Գնորդները, սակայն, գնում են փոքր քանակներով: Այդ պատճառով, հենց խանութային թունաքիմիկատները վերափաթեթավորվում են ձեռքի տակ եղած դատարկ շշերում: Վաճառողուհին պեստիցիդները կշռելիս և փաթեթավորելիս հազնում է պաշտպանիչ արտահագուստ, ձեռնոցներ և դիմակ: Միևնույն ժամանակ խանութում առկա է պեստիցիդների սուր, ուժեղ հոտը:

Պեստիցիդները ներմուծում են Չինաստանից իրենք՝ խանութի սեփականատերերը: Այդ նյութերը համարվում են շահութաբեր, մինչդեռ սերմերը քիչ պահանջարկ ունեն:

Վաճառողուհին մասնագիտությամբ կենսաբան է և կարող է խորհուրդներ տալ գնորդին: Հայանիստում կան նաև պեստիցիդների վաճառքի այլ կետեր: Սակայն, նշված խանութում դրանց պահպանումը և վաճառքն, այլ խանութների համեմատ, ավելի լավ է:

25 պատասխանողներից, ովքեր իրենց այգիներում օգտագործում են պեստիցիդներ, միայն 7-ն էր նշում, որ իրենք ծառերը մշակելիս հագնում են պաշտպանիչ արտահագուստ: Այս պատասխանողներից ոմանք հագնում են միայն շնչադիմակներ, մյուսները՝ արտահագուստ: 8 պատասխանող գանգատվում էր այն բանից, որ ծառերի սրսկումներից հետո թե իրենք, և թե ընտանիքի անդամները վատ ինքնազգացողություն են ունենում: Ամենից հաճախ նրանք գանգատվում են գլխացավից և ալերգիայից: Տարօրինակ է այն, որ 3 հոգի այն 7 պատասխանողներից, ովքեր պեստիցիդների հետ աշխատելիս հագնում են պաշտպանիչ հագուստ և/կամ շնչադիմակներ, նույնպես ունենում են առողջական խնդիրներ պեստիցիդներով ծառերը մշակելուց հետո: Ինչևէ, այս պատասխանողներից 2-ը նշում էր, որ իրենք DDT են օգտագործում և նրանցից մեկը նույնիսկ ստիպված է եղել դիմել բժշկի (սա նշանակում է, ինտոքսիկացիան ուժեղ է եղել, որովհետև Հայաստանում մարդիկ դիմում են բժշկի միայն շատ լուրջ դեպքերի ժամանակ, երբ տնային օգնությունը բավարար չի լինում): Պատասխանողներն առողջության հետ կապված գանգատներ են ունենում նաև Karate և Metaphos օգտագործելուց հետո: Karate օգտագործող 14 պատասխանողներից 4-ը գանգատվում էին առողջությունից, մինչդեռ Metaphos օգտագործող 5 պատասխանողներից 3-ն ունեին գանգատներ առողջական վիճակից (2 անգամ՝ ալերգիայից, 1 անգամ՝ գլխացավից):

Անասնապահություն

Ըստ Հայանիստի գյուղապետի ներկայացման, տնտեսությունների միայն 10 %-ն է կով պահում, ընդ որում՝ միջինը 1 կով: Այստեղ խոզ, այծ կամ ծի հիմնականում չեն պահում: Ընտանի թռչուններից ամենից շատ ունեն հավեր և հնդկահավեր:

40 հարցված ընտանիքներից 25 %-ն առնվազն մեկ կով ունի: 4 տնտանիք ունի 1, 4 այլ ընտանիք ունի 2, իսկ մեկ ընտանիք՝ 3 կով: Հարցվածներից միայն մեկն ուներ 10 կով և հորթ, 1 խոզ, 10 ոչխար և 50 հավ: Այս պատասխանողի միակ եկամուտն, այնուամենայնիվ, գոյանում է պահած կենդանիների ց ստացված մթերքների վաճառքից (օր.՝ կաթ, միս, ձու, բուրդ և այլն):

18 ընտանիքի հարցում է արվել այն մասին, թե պահում են արդյոք ընտանի թռչուններ: Հարցվածներից 8-ը պահում էր միայն հավ, 2 պատասխանող՝ հավ և հնդկահավ: Ընտանի թռչունների թիվը շատ փոքր է: 10 ընտանիքներից 4-ն ունի 10 հավից ու հնդկահավից ավել թռչուն:

Սեռային դերաբաշխումը հողագործությունում

Ընդունված է, որ տղամարդիկ պատասխանատվություն են կրում ֆիզիկական ավել մեծ ուժ պահանջող գործերի կատարման համար: Հարցվածների մեծ մասը նշում էր, որ իրենց ընտանիքներում տղամարդն է զբաղվում գյուղատնտեսական

աշխատանքներով: Այնուամենայնիվ, ըստ հարցվածների պատասխանների, շատ աշխատանքներ տղամարդիկ կատարում են իրենց կանանց հետ միասին (օր.՝ հողի փխրեցում, մուլախոտերի քաղհանում, բերքահավաք): Ավելի ծանր աշխատանքները, օր.՝ պարարտացում, թունաքիմիկատներով մշակում, կատարում են հիմնականում տղամարդիկ: Տնտեսության արտադրանքը վաճառում է կամ կինը, կամ ամուսինը, կախված ընտանիքում ձևավորված ավանդույթից:

3.7 Ջրի աղբյուրներ, որակը և օգտագործումը

Ջրի աղբյուրները և ջրի որակը

Հայանիստում խմելու ջրի գլխավոր աղբյուրը արտեզյան հորերն են (ոչ ծանծաղ), որոնց համար պոմպեր չեն պահանջվում, միևնույն ժամանակ, 90 ընտանիք միացել է Երևանից սպասարկվող խմելու ջրի ջրատարին: Գյուղում կա 17 խորը հոր: Շատ տներ սեփական նախաձեռնությամբ միացել են այդ հորերից մեկին և այժմ բակերում ունեն ջրի ուղիղ մատակարարում: Շատ քիչ են այն տնտեսությունները, որոնց ջրամիացումը տան ներսում է: Պաշտոնատար անձինք /օր.՝ տեղական մարմինները, և այլն/ զարմանալի է, որ այդպիսի միացումները համարում են կենտրոնացված: Այն տնտեսությունները, որոնք չեն կարողացել կատարել այդպիսի միացումներ, ջուրը կրում են դուլերով: Քանի որ խոր հորերը սովորաբար տեղակայված են փողոցներում, տների հարևանությամբ, ջուր բերելու համար հեռավորությունն այնքան էլ մեծ չէ: Այնուամենայնիվ, վագոններում ապրողները ստիպված են բավական հեռու գնալ /500մ կամ ավել/ ջուր բերելու համար:

Չնայած այն փաստին, որ բնակիչները խորը հորերից վերցրած ջուրն օգտագործում են խմելու նպատակով, պաշտոնական փաստաթղթերում այդ ջուրը նշվում է որպես ոռոգման ջուր /Հայանիստում փաստացի խմելու ջուր չկա/: Այս իրավիճակը պայմանավորված է կառավարության գնային քաղաքականությամբ խմելու ջրի / գները շատ բարձր են, մարդիկ չեն կարողանում վճարել/ և ոռոգման ջրի վերաբերյալ (այն խմելու ջրի համեմատ է ժան է): Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ բոլոր բնակիչները կանոնավոր վճարում են ոռոգման դիմաց: Գործնականում, դա նշանակում է, որ խմելու ջուրը հատուկ մշակման չի ենթարկվում, և ջրի աղբյուրների շուրջ պաշտպանիչ գոտիներ չկան: Ավելին, շատ դեպքերում ջրի աղբյուրները գտնվում են մասնավոր տների անասնաբակերի /փարախների/ և գոմաղբի կույտերին անընդունելի հարևանությամբ, և, հետևաբար, առկա է միկրոօրգանիզմներով և մակաբույծերով խմելու ջրի աղտոտման վտանգը: Ջրի որակը նշանակալիորեն նվազում է հատկապես ամռանը, երբ ավելանում է ջրօգտագործումը: Ջրի մեծ չափով սպառումը հանգեցնում է խողովակներում ճնշման իջեցմանը, որի պատճառով էլ աղտոտված գրունտային ջրերը ներթափանցում են համակարգ: Միևնույն ժամանակ, ջրի քիմիական չափորոշիչները, ըստ գյուղացիների հավաստման, լավ են: Չնայած Հայանիստի ջրում հայտնաբերված միտրատների խտությունը Եվրամիության ընդունած ստանդարտից (50 մգ/լ) ցածր է, գրանցված խտությունը՝ 30 մգ/լ NO₃, վկայում է անթրոպոգեն գործոնով պայմանավորված աղտոտվածության մասին:

Խմելու ջրի որակի վերաբերյալ Հայանիստի բնակիչների տված գնահատականները ներկայացված են աղյուսակ 3.1 –ում: Պատասխանողների

համարյա կեսը գոհ չէ ջրի որակից: Նրանք բողոքում են ջրում աղի բարձր քանակությունից: Իհարկե, Հայանիստի ջրհորներից մեկից վերցրած ջրի անալիզի արդյունքները վկայում են սուլֆատների բարձր խտության մասին (190 մգ/լ), սակայն, խտության այդ մակարդակը բավարարում է Եվրամիության ստանդարտները (250 մգ/լ):

Աղ. 3.1 Ջրի աղբյուրները և ջրի որակի գնահատականը

N	Ջրի աղբյուրը	Ջրի որակը	Դիտողություններ
1	Երևանի խմելու ջրի ջրատար	Լավ	Տան կողքից անցնող խողովակի մի մասը ձմռանը սառչում է
2	Արտեզյան ջուր, որը մտնում է տան բակը	Ջուրն աղի է, խմելու համար ոչ պիտանի, բայց իրենք սովորել են դրան	
3	Երևանի խմելու ջրի ջրագիծը միացված է տան բակին	Լավ	Ձմռանը ջրամատակարարումն ընդհատվելու դեպքում, ջուրը բերում են ջրի աղբյուրից և եռացնում
4	Արտեզյան ջուր, որը հոսում է 900 մ հեռու գտնվող աղբյուրից	Ջուրը շատ աղ է պարունակում	
5	Արտեզյան ջուր, որը հոսում է 700 մ հեռու գտնվող աղբյուրից	Ոչ շատ լավ	Խմելու նպատակով երեխաների համար ջուրը եռացնում են
6	Արտեզյան ջրհորը գտնվում է տան մոտակայքում	Ջուրը շատ աղ է պարունակում և նեխած հոտ է գալիս	Իրենց անասունները այդ նույն աղբյուրից են ջուր խմում և ջրի վատորակության պատճառով նրանց լյարդում որդեր կան: Ընտանիքի անդամները ջուրը չեն եռացնում խմելուց առաջ
7	Արտեզյան ջրհորը գտնվում է տան մոտակայքում	Լավ որակի է և մաքուր	Ջրհորի խորությունը 80 մ է: Կառուցել են իրենք:
8	Արտեզյան ջրհորը տանից 10 մ հեռավորության վրա է	Որակը գոհացուցիչ է	
9	Արտեզյան ջրհորը տանից 10 մ հեռավորության վրա է	Բավարար որակի է	
10	Արտեզյան ջրհորը տանից 5 մ	Նորմալ որակի է	

	հեռավորության վրա է		
11	Արտեգյան ջրհորը տանից 10 մ հեռավորության վրա է	Աղի, անորակ ջուր է	Խմում են միայն եռացրած ջուր
12	Արտեգյան ջրեր և կենտրոնացված մատակարարվող ջուր	Շատ վատ որակի է, ջուրը ժանգոտ է, քանի որ համակարգը հին է	
13	Արտեգյան ջուր	Լավ որակի է	
14	Արտեգյան ջուր, աղբյուրի հետ կա խողովակային միացում	Բավարար որակի չէ խմելու համար, մեծ քանակությամբ աղ է պարունակում	Ջուրը հարմար է ոռոգման համար
15	Արտեգյան ջուր, որը հասնում է մինչև տան բակ	Բավարար չէ խմելու համար, մեծ քանակությամբ աղ է պարունակում	Ջուրը հարմար է ոռոգման համար
16	Արտեգյան ջուր, որը հասնում է մինչև տան բակ և խոհանոց	Ոչ լավ	Ջուրը եռացնում են խմելուց առաջ
17	Արտեգյան ջուր, որը հասնում է մինչև տան բակ	Անբավարար	
18	Արտեգյան ջուր, որը հասնում է մինչև տան բակ և խոհանոց	Անբավարար	

Ջրի օգտագործումը

Ջուրն օգտագործվում է խմելու, եփելու, մաքրելու և լվացքի համար: Ընդհանուր առմամբ, Հայանիստում մարդկանց փաստացի օգտագործած ջրի քանակը բավական քիչ է: Այնուամենայնիվ, այն պատճառով, որ գրունտային ջրերը բարձր ճնշման պատճառով խողովակներից դուրս են հոսում ինքնահոս ձևով, տեղի է ունենում ջրի մեծ կորուստ: Եթե ընտանիքում կան երեխաներ, և եթե տվյալ ընտանիքը անասուններ է պահում (հիմնականում կով), ջուրն ակնհայտորեն ավելի շատ է օգտագործվում (100-150 լ/օր):

Ջրի աղբյուրների առատությունը մարդկանց հիմք է տալիս ենթադրելու, թե ջուրն ընդհանրապես անվճար ապրանք է: Ընտանիքները, որոնք շահագրգռված են ունենալ անվտանգ խմելու ջուր, միացել են Երևանից մատակարարվող կենտրոնացված ջրամատակարարման համակարգին և հետևաբար, ստիպված են վճարել սպառած ջրի դիմաց՝ ըստ ջրաչափի ցուցմունքի: Երբեմն այդ համակարգում լինում են ջրամատակարարման ընդհատումներ: Նման դեպքերում բնակիչները ստիպված են լինում ջուրը բերել ամենամոտ աղբյուրներից:

Հայանիստում շատ քիչ են այն տները, որոնք ունեն լողասենյակ: Որոշ տներ բաղնիքը կառուցել են բակում: Մարդիկ մետաղյա տարաներ են տեղադրել, որոնցում ամռանը ջուր են հավաքում: Արևը ցրելը տաքացնում է ջուրը և այդ կերպ ամռան բոլոր ամիսներին մարդիկ լողանք ընդունելու հնարավորություն են

ունենում: Ձմռանը մարդիկ լվացվում են տանը՝ օգտվելով լվացարանից: Ոմանք նշում են, որ իրենք լողանալու համար գնում են այլ տեղ, օր.՝ Երևանում գտնվող որևէ սաունա կամ այլ տեղ, ինչն այնքան էլ հարմարավետ չէ:

Հայանիստում կան ընտանիքներ, որոնք չունեն լվացքի մեքենա, կամ դրանք կոտրված են, և կանայք ստիպված են ձեռքով լավանալ: Լվացքի մեքենա ունեցող 5 պատասխանողներից 4-ը նշում էին, որ իրենց մեքենաները թեև հին են, բայց, բարեբախտաբար, դեռ աշխատում են:

Համարյա բոլոր պատասխանողները նշում էին, որ իրենք կուզենային ունենալ բարվոք ջրամատակարարում և պատրաստ են նույնիսկ վճարել, թեև գումարի պակաս են զգում: Ամսեկան նրանք պատրաստ էին վճարել 1000 դրամ: 7 պատասխանողներից միայն մեկն էր ցանկանում վճարել ըստ ջրաչափի ցուցմունքի:

Ղրենաժային և ոռոգման ջրեր

Հայանիստ գյուղն ունի ջրի երկու տարբեր հիմնախնդիր, որոնց պատճառով տուժում է հողագործությունը: Մի կողմից, գրունտային ջրերի բարձր մակարդակը թույլ չի տալիս մրգատու ծառեր աճեցնել, մյուս կողմից ամռանը էքստենսիվ ոռոգում է պահանջվում կարճ արմատային համակարգ ունեցող բույսերի և բանջարեղենի աճեցման համար: Պատասխանողների միայն 10 % -ն էր նշում, որ իրենք ղրենաժային ջրերն են օգտագործում այգու կամ դաշտի ոռոգման նպատակով: Պատասխանողներից ոմանք բողոքում էին, որ իրենք հարկադրված են վճարել ոռոգման դիմաց, մինչդեռ ղրենաժային առուներից ջուրը չի հասնում իրենց դաշտերը:

Գյուղն ունի ղրենաժային առուների խիտ ցանց, որն անցնում է գյուղի համարյա յուրաքանչյուր փողոցով և մշակովի դաշտերով: Այնուամենայնիվ, կան որոշ տներ, որոնց ներսում խոնավությունը խիստ բարձր է: Շատ քիչ են այն տնտեսությունները, որոնք իրենց դաշտերի ոռոգման համար օգտագործում են ղրենաժի ջուրը: Միևնույն ժամանակ, այն տնտեսությունները, որոնք ունեն հոսող ջրով զործարկվող զուգարաններ, դրանց կեղտաջրերը թափվում են այդ նույն ղրենաժային առուները: Հետևաբար, ղրենաժային առուների ջրի որակը և հետևաբար, ոռոգման ջրի որակը շատ վատն է: Նախկին խորհրդային տարիներին եղել են ղրենաժների ֆիլտրեր, որոնք այժմ չեն գործում: Շատ պատասխանողներ գանգատվում էին ոռոգման ջրի աղտոտվածությունից և սարսափելի գարշահոտությունից: Ավելին, ջրահեռացման ջրանցքները կանոնավորապես չեն մաքրվում, այդ պատճառով էլ այդ տեղերից ջուրը դուրս է հոսում և ողողում բակերը: Միևնույն ժամանակ, այլ ընտանիքներ դժգոհում էին, որ թեև ղրենաժային առուները ձգվում են մինչև իրենց դաշտերը, սակայն ջուրը այնտեղ չի մտնում: Համաձայն գյուղապետի վկայության, Ջրային պետական կոմիտեն (գյուղատնտեսության նախարարության բաժին) պատասխանատու է գյուղում ղրենաժային ջրանցքների շահագործման և տեխնիկական սպասարկման համար: Այդ ջրանցքները մաքրվում են 2-3 տարին մեկ, քանի որ այն խիստ աշխատատար գործ է: Այնուամենայնիվ, այս ջանքերը բավարար չեն, քանի որ ջուրը գարնանը դուրս է հոսում: Որոշ պատասխանողներ հայտարարում էին, որ եթե լինեի համապատասխան ոռոգման համակարգ իրենց դաշտերի համար, կամ գոնե ղրենաժային ջրերը հասնեին իրենց դաշտերը, ապա զգալիորեն կբարելավվեի իրենց եկամուտը, որովհետև կկարողանային աճեցնել

հացահատիկ: Արդյունքում, 75 % պատասխանողներ (33 հարցվողից) դժգոհ էին Հայանիստում ոռոգման վիճակից:

3.8 Ջրահեռացում, ջրի և թափոնների հեռացում

Ջրահեռացում

Հայանիստում չկա կենտրոնացված կոյուղու համակարգ: Տնտեսությունների գերակշիռ մասն ունի 1մ-ից պակաս խորությամբ հորատի պարտաքնոցներ: Այդպիսի խորությունը պայմանավորված է գրունտային ջրերի բարձր մակարդակով: Երբ բարձրանում է այդպիսի ջրերի մակարդակը, դրանք հեշտությամբ լցվում են հորատի պարտաքնոցները և աղտոտվում են կղանքով: Միայն մի քանի ընտանիք նշում էր, որ իրենց պարտաքնոցը մեկուսացված է (հորերը բետոնապատ են (4 պատասխանող) կամ մետաղական ռեզերվուարն է ծառայում՝ որպես հոր (1 պատասխանող): Երբ պարտաքնոցը լցվում է, բնակիչներն ուղղակի թաղում են այն և բակի մեկ այլ մասում փորում են նորը: Այն ընտանիքները, որոնց զուգարանների հորերը մեկուսացված են, 2-4 տարին մեկ կամ մարդկանց են վարձում դրանք դատարկելու համար, կամ իրենք են դատարկում, կամ էլ թափում են մոտակա ջրանցքները/առուները:

3.2 Ջրահեռացման համակարգը Հայաստանում

Հայաստանում բոլոր քաղաքային բնակավայրերը և քաղաքատիպ ավաններն ունեն ջրահեռացման համակարգ, մինչդեռ գյուղական բնակավայրերի միայն 20 % - ն է ապահովված կոյուղու համակարգով: 1988 թ. ընդհանուր հաշվով մոտ 760 մլն. խոր. մ կեղտաջուր է լցվել ջրամբարները: Բնակեցված կենտրոններից, որոնք ապահովված են կոյուղով, կեղտաջրերը լցվում են բաց ջրամբարները, բացառությամբ Արտաշատ քաղաքի, ուր կան կենսաբանական լճակներ/ավազաններ: Հանրապետությունում կա 20 մաքրման կայան, որտեղ մշակվում և ախտահանվում է քաղաքների կեղտաջրերը: Այնուամենայնիվ, դրանք բոլրն էլ, առանց բացառության, չեն ապահովում կեղտաջրերի մշակման և ախտահանման համապատասխան մակարդակ՝ անբավարար կարողությունների և ոչ արդյունավետ շահագործման պատճառով:

Երևանում մաքրման կայանները հնարավորություն ունեն մշակել արտադրված կեղտաջրերի 40 % -ը, Վանաձոր քաղաքի կայանները՝ կեղտաջրերի 48, իսկ Հոկտեմբերյանի կայանները՝ 75 %-ը:

Աղբյուր՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2001թ. Առողջապահության առանձնահատկությունները Հայաստանում: Էլեկտրոնային տարբերակ <http://www.euro.who.int/document/e72377.pdf>

Հարցվողների կեսից ավելին գոհ չեն իրենց մոտ տիրող ջրահեռացման վիճակից: Դժգոհ պատասխանողների մեծամասնության համար ամենամեծ խնդիրը ցնցուղի կամ բաղնիքի բացակայությունն է: Շատ քիչ պատասխանողներ էին գերակա համարում դրենաժային առուների հիմնախնդրի լուծումը: Մի ընտանիքի ներկայացուցիչ բառացիորեն հուսահատ էր, որովհետև դրենաժային ջրանցքն իր դուրս հոսող արտաթորանքներով անցնում է հենց իր տան հարևանությամբ:

Կեղտաջրերի և կոշտ թափոնների հեռացում

Հայանիստի բոլոր բնակիչներն իրենց տնտեսություններում գոյացող կեղտաջրերը թափում են դրենաժային առուները: Կոշտ թափոնների հեռացման խնդիրն այս գյուղում նույնպես չի լուծված: Գյուղում չկա աղբահավաքման համակարգ, բայց Հայանիստի մերձակայքում մի տեղ է հատկացված աղբանոցի համար: Այդ վայրը ամրացված չէ: Դա որոշակի տարածք է, ուր մարդիկ կարող են թափել աղբը: Որոշ պատասխանողներ ասում են, որ իրենք աղբը հավաքում և դեն են նետում աղբանոցում, մինչդեռ պատասխանողներից շատերը զլանում են այդքան հեռու գնալ և աղբը կամ այրում են իրենց բակերում, կամ երբեմն դեն են նետում դրա համար չնախատեսված վայրերում: Գյուղաբնակները, ովքեր ապրում են աղբանոցի մերձակայքում, զանգատվում են այնտեղից փչող գարշահոտությունից: Պատասխանողների համարյա 85 %-ը այրում են կամ ողջ աղբը կամ դրա մի մասը: 10 հարցվող նշում էր, որ իրենք աղբը թափում են չթույլատրված տեղերում՝ ճանապարհի եզրին, դրենաժային ջրանցքը կամ մոտակա առուները: Շատ քիչ էին այն պատասխանողները, ովքեր հավաքում են աղբը իրենց բակում: 60 % պատասխանողները, ովքեր սովորաբար այրում են իրենց աղբը, այրում են նաև պլաստիկ նյութերը: Պատասխանողների մեծ մասը պլաստիկ առարկաներն այրում է դրսում, մինչդեռ 4 պատասխանող դա կատարում է սենյակային պայմաններում: Ջարմանալի էր այն բանի բացահայտումը, որ 7 պատասխանող թեև գիտեր, որ առողջության վրա պլաստիկ նյութերի այրմունը կարող է վնասակար ազդեցություն ունենալ, բայց շարունակում էր այրել դրանք: Պատասխանողներից և ոչ մեկը, ով տան պայմաններում այրում է պլաստիկ առարկաներ, չգիտեր մարդու առողջության վրա պլաստիկ նյութերի այրման վնասակար հետևանքների մասին:

Բոլոր պատասխանողները շատ շահագրգռված են գյուղում ունենալու աղբահավաքման համապատասխան համակարգ: Ավելին, նրանք պատրաստ են վճարել այդ ծառայության դիմաց, ըստ պատասխանողներից մեկի առաջարկի՝ մոտ 100 դրամ: Տեղի բնակիչների ցածր եկամտով է, հավանաբար, պայմանավորված այն, որ Հայանիստում աղբահավաքման համակարգ չի ստեղծվել:

Օրգանական թափոններ և կոմպոստացում

Հայանիստում օրգանական թափոնները 2 տեսակի են՝ գոմաղբ կամ անասունների արտաթորանք և այգում գոյացած թափոն: Հայանիստի ոչ բոլոր բնակիչներն են կենդանիներ պահում, այդ պատճառով նույնիսկ գոմաղբի պակասություն է զգացվում: 15 պատասխանողներից, ովքեր անասուններ են պահում, միայն 5 հոգի են չորացնում գոմաղբը և այն օգտագործում որպես վառելիք: 6 պատասխանող նշում էին, որ իրենք գոմաղբն օգտագործում են և որպես վառելիք և որպես պարարտանյութ, իսկ 4 պատասխանող այն օգտագործում էին հիմնականում որպես պարարտանյութ: Որոշ պատասխանողներ նշում էին, որ իրենք գոմաղբը նույնիսկ գնում են այգիների և դաշտերի պարարտացման համար, մինչդեռ կային մարդիկ, ովքեր պարարտացման նպատակով օգտագործում են թռչունների ծերուր/արտաթորանքը: 10 պատասխանողներից, ովքեր օգտագործում են գոմաղբ, միայն 3-ն են կատարում կոմպոստացում: Մեկ պատասխանող նույնիսկ նկարագրել է, թե ինչպես է ինքը կոմպոստացնում իր այգին. «Մենք աշնանը

գոմաղբը շաղ ենք տալիս հողի վրա, թողնում ենք այն մնա ողջ ծմեռ, իսկ գարնանը ուղղակի փորում ենք հողը և ցանք կատարում»:

Հայանիստում ընդունված չէ օգտագործել այգում գոյացած թափոնը՝ որպես պարարտանյութ: Հարցվողներից միայն 4-ն էին նշում, որ իրենք կոմպոստացնում են այգու թափոնը և օգտագործում այն որպես պարարտանյութ: Մեկ պատասխանող էլ հայտարարում էր, որ ինքը չի հավաքում այգու թափոնը: Վերջինս մնում է հողի վրա, իսկ գարնանը փորում է այն: Մնացած 28 պատասխանողները նշում էին, որ իրենք չեն կոմպոստացնում այգու թափոնը, այն ուղղակի այրում են:

3.9 Առողջություն, սննդակարգ և հիգիենա

Հայանիստի շատ բնակիչների համար բուժօժանայությունը մատչելի չէ: Այն անվճար չէ, երկրում չկա առողջության ապահովագրման համակարգ: Մարդիկ ստիպված են վճարել բժշկին այցելելու համար, բայց աղքատության պատճառով մարդկանց մեծ մասը չի այցելում բժշկին կամ օգտվում որևէ բուժօժանայությունից: Ահա թե ինչու, շատ պատասխանողներ գանգատվում էին առողջական վիճակից, բայց հայտարարում էին, որ իրենք հնարավորություն չունեն օգտվելու որևէ բուժօժանայությունից: Մեկ պատասխանող գանգատվում էր, որ իր ընտանիքի միակ եկամուտը իր թոշակառու սկեսրոջ նպաստն է, որն ամբողջությամբ ծախսվում է նրան անհրաժեշտ դեղորայքի վրա (սկեսուրը հիվանդ է շաքարախտով): Նույնիսկ դեպքեր են եղել, երբ մարդիկ վիրահատության կարիք են ունեցել, բայց գումարի բացակայության պատճառով չեն դիմել բժշկի: Արդյունքում նրանց առողջական վիճակն ավելի է վատթարանում: Երեխաների շրջանում ամենից շատ տարածված են շնչառական վարակները, իսկ չափահասները հաճախ տառապում են արթրիտից/հոդացավերից և արյան բարձր ճնշումից: Շատ հիվանդություններ հնարավոր է, որ պայմանավորված լինեն շրջակա միջավայրի պայմաններով, քանի որ տները լավ չեն ջեռուցվում ցուրտ եղանակներին և հաճախ խոնավ են: Գյուղի թերապևտի վկայությամբ, Հայանիստի 5-6 բնակիչ տառապում է քրոնիկ տուբերկուլոզից: Այս հիվանդությունը բերվել է Ռուսաստանում աշխատած մարդկանցից: Հայանիստի բնակիչների առողջական վատ վիճակի հիմնական պատճառը աղքատությունն է:

3.3 Բուժօգնությունը Հայաստանում

Նախկին խորհրդային տարիներին բուժօժանայությունն անվճար էր: 1996 թ. ընդունվել է Առողջապահության մասին օրենքը, որն օրինականացրել է ֆինանսավորումը տարբեր աղբյուրներից (օր.՝ պետական բյուջե, մունիցիպալ բյուջեներ, բուժապահովագրություն և ուղղակի վճարումներ հիվանդների կողմից): Արդյունքում, 1997 թ. բուժօժանայության ծախսերը ՀՆԱ-ում (համախառն ներքին արդյունք) 5 %-ից նվազեցին մինչև 1.3 % (օր.՝ Եվրամիության բուժօժանայության ծախսերը 1998 թ. կազմել է մոտ 9 %, մինչդեռ ԱՊՀ երկրներում՝ միջինը մոտ 3 %): Հայաստանի համախառն ներքին արդյունքում կտրուկ անկումը 1990-ականներին, դեռևս խիստ բացասական հետևանքներ է ունենում: Պետության կողմից բուժօժանայությանը հատկացված միջոցները բավարար են միայն բնակչության ամենախոցելի խմբերի բուժօժանայությունն ապահովելու համար (7 տարեկանից ցածր տարիքի երեխաներ, հաշմանդամներ, պատերազմի

վետերաններ, 18 –ից ցածր տարիքի միակողմանի ծնողազուրկ երեխաներ, 16 տարեկանից փոքր հաշմանդամ երեխաներ, չորս և ավել երեխա ունեցող ընտանիքներ, պատերազմում զոհվածների ընտանիքներ, բանտարկյալներ, հաշմանդամ ծնողների երեխաներ, Չեռնոբիլի աղետի հետևանքների վերացմանը մասնակցած անձինք, փրկարար ծառայության անձինք)։ Վերջին տվյալների համաձայն՝ առողջության ապահովագրման գործընթացը Հայաստանում դեռևս այն փուլում է, երբ անհրաժեշտ օրենսդրությունը դեռևս մշակման փուլում է։ Առողջապահական ծառայության գները շատ բարձր են։ Հիվանդանոցներում վիրահատությունները կարող են արժենալ մի քանի հազար ամերիկայն դոլար։ Ահա թե ինչու, Հայաստանի շատ քաղաքացիներ կամ ստիպված պարտքով գումար են վերցնում բարեկամներից և տարիներ շարունակ աշխատում են, որպեսզի կարողանան պարտքը վճարել։ Ավելի հաջողակները ֆինանսական օգնություն են ստանում արտերկրում ապրող իրենց բարեկամներից։ Իսկ եթե չկա պարտքով գումար վերցնելու հնարավորություն, կամ եթե տվյալ հիվանդը չունի արտասահմանում ապրող հարազատներ, ապա ստիպված է հրաժարվել վիրահատությունից։ Ներկայումս շատ տարածված երևույթ է բժշկին այցելել միայն ծայրահեղ իրավիճակում։ Վերջերս ընդունվել է նոր որոշում, ըստ որի 65 տարեկանից բարձր անձինք կարող են օգտվել անվճար բուժօգնման ծառայությունից։ Հայանիստի բնակիչներն, այնուամենայնիվ, տեղյակ չեն այս նոր որոշման մասին։

Տեղեկատվությունը հիմնված է հետազոտության արդյունքների և աղբյուրի վրա, այն է՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2001թ. Առողջապահության առանձնահատկությունները Հայաստանում։ Էլեկտրոնային տարբերակ <http://www.euro.who.int/document/e72377.pdf>

Հայանիստում մարդու առողջության վրա բացասաբար են անդրադառնում խմելու ջրի ոչ հիգիենիկ վիճակը և որակը։ Գրանցվել են լուծի կանոնավոր բռնկումներ և դրանց թիվը շարունակում է աճել։ Երբեմն գրանցվում են հեպատիտ Ա-ի բռնկումներ։ Մանկաբույժի կարծիքով, աղիքային վարակները նույնպես հաճախակի երևույթ են երեխաների շրջանում։ Միևնույն ժամանակ շատ դժվար է գրանցել վարակիչ բռնկումների իրական քանակն այն պատճառով, որ մարդիկ բժշկի են դիմում միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, քանի որ բուժօգնությունը մատչելի չէ բնակչության համար։

3.4 Բուժկետը (ֆելդշերական ծառայություն) Հայանիստում

Առաջնային բուժօգնությունը Հայանիստում ապահովում է տեղի ֆելդշերական ծառայությունը, որի աշխատակազմում կա 1 թերապևտ 1000 – 2000 բնակչի համար, 1 մանկաբույժ 700 – 800 երեխայի համար։ Բուժկետն ապահովված է նաև միջին կարգի բուժանձնակազմով և իրականացնում է երեխաների, չափահասների, հղի կանանց հիմնական բուժխնամքը, շտապօգնության ծառայությունը և գնահատում է երեխաների ֆիզիկական զարգացումը։ Բուժկետը տեղակայված է համենմատաբար տաք, երկհարկանի շենքում։ Թեև շենքը կառուցվել է անցյալ տարի, առաջին հարկի նորոգումը դեռևս ամբողջությամբ չի ավարտված (բացակայում է հատակի ծածկը, ոչ բոլոր պատերն են ներկված)։ Ողջ անձնակազմն աշխատում է առաջին հարկում և

նախընտրում է մնալ մեկ սենյակում, քանի որ այնտեղ ավելի տաք է: Հիվանդներն իրենց հերթին սպասում են միևնույն սենյակում, որովհետև միջանցքը չի ջեռուցվում:

Հայանիստի բնակիչները կարող են օգտվել բուժկետի ծառայությունից, սակայն նրանց մեծ մասը նախընտրում է գնալ Երևան կամ մեկ այլ քաղաք, քանի որ կարծում է, որ քաղաքային հիվանդանոցների անձնակազմն ավել լավ է պատրաստված և հիվանդանոցները հագեցած են ավելի լավ սարքավորումներով: Քանի որ բուժօգնությունը չափահասների համար անվճար չէ, հիվանդները հակված են դիմել բժշկի միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, և ակնհայտ է, որ այդ ժամանակ նրանք նախընտրում են գնալ հիվանդանոց: Այդ է պատճառը, որ տեղի բուժկետն ի վիճակի չէ ցույց տալ Հայանիստի բնակչության առողջության իրական վիճակը:

Հայանիստում անցկացրած հարցումների մասնակիցների սննդակարգը սովորաբար բաղկացած է հացից, կարտոֆիլից և հացահատիկից: Չվի և կաթնամթերքի սպառումը կախված է այն բանից, թե ընտանիքը հավ կամ կով պահում է, թե՛ ոչ: Մսի և/կամ ձկան օգտագործումը շատ սահմանափակ է: Հարցվածների արտահայտմամբ, իրենք միս ուտում են միայն տոն օրերին, օր.՝ Սուրբ Ծննդյան տոնին, Ջատիկին և երբեմն ծննդյան տարեդարձերին:

Պատասխանողների համարյա կեսի վկայությամբ, խմելու ջրի որակը կարող է ազդել իրենց և իրենց ընտանիքների անդամների առողջության վրա: Քիչ են այն պատասխանողները, ովքեր օգտագործում են միայն եռացրած ջուր: Դրանք կամ բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ են, կամ ներկայացնում են այն ընտանիքները, որոնց անդամներն ունեցել են աղիքային խանգարումներ: Որոշ պատասխանողներ ենթադրում են, որ արթրիտը պայմանավորված է խմելու ջրի վատ որակով (աղի բարձր պարունակության պատճառով): Արդյունքում, թվում է, թե մարդիկ պետք է մտածեն այն մասին, որ ջրի որակը կարող է ազդել իրենց առողջության վրա, բայց ոչ բոլորն են անհանգստացած ջրի կենսաբանաական աղտոտմամբ:

Պատասխանողների 36 % -ը կարծում է, որ ջրահեռացման տեսակը և պայմաններն ազդում են իրենց և իրենց ընտանիքների անդամների առողջության վրա: Մեծ մասամբ պատասխանողները նշում են, որ դրենաժային առուների վատթար վիճակը ամենից շատ է ազդում իրենց առողջության վրա, հատկապես երբ կեղտաջրերը առուներից արտահոսում են և ողողում իրենց բակերը և/կամ տները: Այդ պատճառով այդ մարդիկ նախընտրում են ինքնուրույն մաքրել ջրահեռացման առուները, քան սպասել հաջորդ հեղեղումներին:

Տպավորությունն այնպիսին է, որ Հայանիստի բնակիչների իրազեկությունն անձնական հիգիենայի մասին ցածր է: Այն հարցին, թե երբ է անհրաժեշտ լվանալ ձեռքերը, ամենից շատ լսվող պատասխաններն էին՝ «Միշտ», «Առավոտյան», «Յուրաքանչյուր աշխատանքից հետո»: Մեկ պատասխանողի կարծիքով, ձեռքերը պետք է լվանալ կեղտոտվելու դեպքում: Միայն 4 պատասխանող էր նշում, որ ձեռքերը պետք է լվանալ ուտելուց առաջ, իսկ 4 հոգու կարծիքով՝ յուրաքանչյուր անգամ զուգարանից օգտվելուց հետո:

3.10 Հայանիստի գլխավոր խնդիրները՝ պատասխանողների ընկալմամբ

Հայանիստի բնակիչների կարծիքով գյուղում կան մի շարք խնդիրներ, որոնք պետք է լուծվեն հնարավորինս շուտ: Դրանք հետևյալներն են.

1. Գազաֆիկացման բացակայությունը (պատասխանողների 61 %-ը)
2. Ճանապարհների նորոգումը և ասֆալտապատումը (պատասխանողների 39 %-ը)
3. Խմելու ջրի մատակարարման հարցերը (պատասխանողների 33 %-ը, մեծ մասն առաջարկում է տեղադրել կենտրոնացված ջրամատակարարման համակարգ)
4. Ոռոգման վիճակը (33 %)
5. Աղբահավաքման համակարգի բացակայությունը (17 %)
6. Գյուղում ակունքի բացակայությունը (17 %)
7. Ծայրահեղ բարձր գործազրկությունը (11 %)
8. Դպրոցի վերանորոգումը (0.6 %)
9. Վագոններում բնակվողների համար խմելու ջրի մատչելիության սահմանափակությունը (0.6 %, սակայն, թվում է, որ վագոններում բնակվողների համար սա գերակա խնդիր է):

Տարվա ցուրտ շրջանում տների ջեռուցումը Հայանիստի բնակիչների համար թիվ մեկ հիմնախնդիրն է: Տեղաբնակների կարծիքով, եթե իրենք ապահովված լինեին գազամատակարարմամբ, ապա իրենց տներն ավելի լավ կջեռուցվեին: Միևնույն ժամանակ, ըստ մի քանի պատասխանողների, ովքեր միացել են այդ համակարգին, գազատար համակարգին միանալու համարանհրաժեշտ է վճարել մոտ 200-300 ամ. դոլ.: Ներկա դրությամբ, Հայանիստի բնակիչների մեծ մասն ի վիճակի չէ վճարել դրա համար: Մյուս կողմից, ծրագրում ընդգրկված մյուս գյուղերում ստացած մեր տպավորությունն այնպիսին էր, որ կենտրոնացված գազամատակարարման գինը բարձր է, այդ պատճառով տնտեսությունների մեծ մասը, թեև միացել է համակարգին, սակայն իրականում գազը չի օգտագործում տան ջեռուցման նպատակով (հատկապես՝ Ֆանտանում, որտեղ ընտանիքների եկամուտները նույնն են, ինչ Հայանիստում): Ավելին, Ֆանտանում տներն, ընդհանուր առմամբ, ավելի վատ են ջեռուցվում, քան Հայանիստում: Ահա թե ինչու, կենտրոնացված գազամատակարարման համակարգին միացած լինել՝ դեռևս չի նշանակում լուծված համարել տան ջեռուցման հարցը:

Հայանիստում փողոցներն, անշուշտ, վատ վիճակում են: Ասֆալտապատ է միայն հիմնական փողոցը, մնացած փողոցները ծածկված են ցեխի հաստ շերտով: Դրանք երբեմն դժվարանցանելի են, հատկապես՝ անձրևոտ եղանակներին:

3.11 Տարաբնույթ հարցեր

Աղքատություն և վառելիքի սպառում

Աղքատության մակարդակն անասելի չափերի է: Տնտեսությունների 30-40%-ը չափազանց աղքատ է, և, շատ հավանական է, որ այդ մարդիկ տառապեն թերսնուցումից: Ֆինանսի բացակայությունը մի կողմից /բարձր գործազրկություն, ծայրահեղ ցածր նպաստներ՝ ամսական մոտ 10-12 դոլար/ և իրենց սեփական արտադրանքն աճեցնելու անհնարինությունը մյուս կողմից /հողի վատ հատկանիշների պատճառով շատ տնտեսություններ չունեն նույնիսկ տնամերձ հողամասեր/ ստիպում են մարդկանց ապրել անտանելի պայմաններում:

Քանի որ ձմեռները Հայաստանում ցուրտ են /մեր մնալու ժամանակ ցերեկվա ջերմաստիճանը մի քանի օր -10°C -ից ցածր էր/ և գյուղը դեռ զազաֆիկացված չէ, մարդիկ փորձում են խնայել կենսական անհրաժեշտության միջոցների (սնունդ, անձնական հիգիենայի միջոցներ, և այլն) ձեռք բերման համար անհրաժեշտ գումարը վառելիքի համար: Հարցվածների մեծ մասը նշում է, որ ցուրտ սեզոնին ընդհանրապես ստիպված են լինում ծախսել \$120-250, կախված այն բանից, թե որքան ծախս կարող են իրենց թույլ տալ: Մեծ մասամբ, նույնիսկ եթե վառելիքի համար խնայվել է գումար, այն չի բավարարել ողջ ցուրտ սեզոնի ընթացքում /հոկտեմբեր-ապրիլ/ տունը տաքացնելու համար: Արդյունքում Հայանիստի բնակիչները փորձում են օգտագործել այլընտրանքային ցածրորակ վառելանյութ (օր.՝ չորացրած գոմաղբ, սեփական այգուց ստացված փայտը, փայտյա տաշեղներ կահույքի ֆաբրիկայից, կերոսին կամ դիզելային վառելանյութ, որոնք օգտագործվում են դպրոցում և այլն) և տաքացնում են 1 կամ 2 սենյակը: Մարդիկ օգտագործում են այն ամենն, ինչ հնարավոր է այրել, օր.՝ տարածված երևույթ է պլաստիկ շշերի այրումը: Ամռանը որոշ մարդիկ սնունդը պատրաստում են իրենց բակում կրակի վրա, որպեսզի խնայեն բալոնով գազի համար ծախսերը: Ցուրտ սեզոնին ջեռուցումը հիմնախնդիր է ոչ միայն մասնավոր տների, այլև պետական հիմնարկների /գյուղապետարան, դպրոց, բուժկետ/: Վիճակն ավելի վատթար է դպրոցում, որտեղ դասասենյակները տաքացվում են կերոսինով կամ դիզելային վառելիքով աշխատող վառարաններով: Դասասենյակները չեն օդափոխվում, քանի որ շատ ցուրտ է լուսամուտը բացելու համար: Արդյունքը լինում է այն, որ սենյակների օդը աղտոտվում է թերայրումից առաջացող մնացորդային մասնիկներով, որոնք ավելի ուշ նստում են դասասենյակների առաստաղներին ու պատերին: Միևնույն ժամանակ, դասասենյակները բավարար չափով չեն տաքացվում և երեխաները դասերին նստում են վերարկույններով: Քանի որ վերջերս վթար էր տեղի ունեցել վառարանի պատճառով (փոքր հրդեհ էր բռնկվել), դպրոցի տնօրենը որոշել է իրենց ունեցած վառարանները փոխարինել ավելի անվտանգ ջեռուցման (օր.՝ էլեկտրական) միջոցներով: Առաջարկություն է արվել նախքան փոխարինելը, կատարել արդյունավետության վերլուծություն: Ստորև ներկայացվում է տեղեկատվություն Հայանիստի դպրոցի մասին:

3.5 Դպրոց

Դպրոցը գտնվում է Հայանիստ գյուղի կենտրոնում: Մեր հետազոտության ժամանակ դպրոց էր հաճախում 6.5 – 17 տարեկան 374 աշակերտ (194 տղա և 180 աղջիկ): Բացառությամբ 5-րդ և 10 –րդ դասարանների, մնացած բոլոր դասարանները 2-ական են: Դպրոցն ունի 25 ուսուցիչ և 3 հոգուց բաղկացած ադմինիստրատիվ անձակազմ:

Դպրոցն անմխիթար վիճակում է: Ցուրտ շրջանում չջեռուցվելու և զարնանը դրենաժային առուներից դուրս թափվող կեղտաջրերի պարբերական հեղեղումների պատճառով շենքը մշտապես քայքայվում է: Ընդհանուր առմամբ, դպրոցին անհրաժեշտ են ֆինանսներ շենքի վերակառուցման (վերջին անգամ դպրոցում ներկարարական աշխատանքներ կատարվել են 1988թ., որոշ դասասենյակներում մանրահատակը դուրս է եկել խոնավության պատճառով, և այլն), ինչպես նաև դպրոցի նյութական բազան բարելավելու համար (օր.՝ դասասենյակներում բացի հին նստարաններից ու աթոռներից ուրիշ ոչ մի կահույք չկա, բացակայում են նաև ուսումնական նյութերը, և այլն):

Յուրաքանչյուր դասարան ունի ծնողկոմիտե, որն օգնում է մաքրել և ինչ-որ կերպ վերանորոգել դասասենյակը: Դպրոցն ունի նաև Խորհուրդ, որը լուծում է դպրոցի ֆինանսական հարցերը և դիմում ծնողներին՝ լրացուցիչ ներդրումների համար: Դպրոցի խորհրդի օգնությամբ նաև վերանորոգվել է միջանցքը, որն հետագայում զարդարվել է աշակերտների և նրանց ծնողների ստեղծած նկարներով: Այնուամենայնիվ, այս ջանքերը բավարար չեն դպրոցի վիճակը բարելավելու համար:

Դպրոցը չունի բուֆետ և աշակերտները ստիպված նախաճաշը բերում են տանից: Նախկին խորհրդային տարիներին դպրոցում կար բուֆետ, բայց այն փակվել է Հայաստանի անկախացումից հետո: Տնօրենը դեռևս փորձում է վերաբացել բուֆետը:

Խորհրդային տարիներին դպրոցի ներսում գործում էին հոսող ջրով արտաքնոցներ: Ներկայումս այդպիսի միայն մեկ արտաքնոց կա, և աշակերտները ստիպված օգտվում են դպրոցի մուտքից 200 մ հեռավորության վրա գտնվող հորատի արտաքնոցներից: Ավելին, վերջիններս գարշահոտ են և կեղտոտ:

Դպրոցի բակում կա խմելու ջրի 2 ցայտաղբյուր, բայց չկան լվացարաններ: Դպրոցի բոլոր շրջանավարտները ձգտում են ստանալ բարձրագույն կրթություն (քոլեջ, համալսարան): Ավելի շատ աղջիկներ են ընդունվում ԲՈՒՀ (20 %-ից ավել): Նրանք, ովքեր դպրոցն ավարտելուց անմիջապես հետո չեն ընդունվում, կրկին փորձում են մեկ կամ 2 տարի անց: Բարձրագույն կրթությունն անվճար է միայն ծայրահեղ աղքատ և հաշմանդամ երիտասարդների համար: Հայանիստի դպրոցի արական սեռի շրջանավարտները դիմում են Ռազմական ակադեմիա, քանի որ ուսումն այնտեղ անվճար է: Անցյալ տարվա շրջանավարտներից ներկայումս 6-ը Ռազմական ակադեմիայի սաներ են:

3.12 Եզրակացություն

1. Աղքատությունը բնակչության մեծամասնության համար գլխավոր հիմնախնդիրն է: Բարձր գործազրկությունը, հետագա աշխատանքային հնարավորությունների բացակայությունը, ցածր թոշակները և աշխատավարձերը, գյուղատնտեսական աշխատանքների համար անբարենպաստ պայմանները հանգեցնում են այն բանին, որ Հայանիստի բնակիչների մեծ մասն ապրում է ծայրահեղ աղքատ վիճակում: Մարդիկ բավարար գումար չունեն կենսական անհրաժեշտությունների համար /սնունդ, ջեռուցում, անձնական հիգիենայի միջոցներ/:

2. Առողջապահական ծառայությունը Հայանիստի շատ բնակիչների համար մատչելի չէ: Բուժօգնությունն անվճար է միայն մինչև 7տ. երեխաների համար: Աղքատության պատճառով շատ մարդիկ չեն կարողանում ոչ այցելել բժշկին, ոչ էլ ստանալ համարժեք բուժօգնություն: Ահա թե ինչու, շատ պատասխանողներ զանգատվում են, որ ունեն առողջական խնդիրներ, բայց չեն կարողանում ստանալ որևէ բուժօգնություն:

3. Բնակիչների մեծ մասը չի օգտվում անվտանգ խմելու ջրից: Չնայած ջրի բավարար աղբյուրների առկայությանը /գյուղում կա 17 խորը հոր/, ջրի որակը չի

վերահսկվում խմելու ջրի ստանդարտներին համապատասխան: Հորերը պաշտպանված չեն /հորերի շուրջ չկան պաշտպանական գոտիներ/: Կանոնավոր հիմքով չի կատարվում ջրի ախտահանում: Ավելին, շատ դեպքերում խորը հորերը գտնվում են մասնավոր տների անասնաբակների կամ կեղտաջրերով աղտոտված դրենաժային առուների հարևանությամբ: Այդ պատճառով, գոյություն ունի միկրոօրգանիզմներով աղտոտման մեծ վտանգ, որն իր հերթին պատճառ է դառնում վարակիչ հիվանդությունների առաջացմանը: Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ ջուրն աղտոտվում է խողովակների /կոտրված/ մեջ լցված գրունտային ջրերով:

4. Գյուղում ջրահեռացման վիճակը շատ վատ է: Տների մեծ մասն ունի ոչ խորը հորատիպ արտաքնոցներ, որոնք գրունտային ջրերի աղտոտման պատճառ են դառնում /գրունտային ջրերը կարող են հեշտությամբ թափանցել հորատիպ արտաքնոցները և աղտոտվել կղանքով/: Հոսող ջրով արտաքնոցներից/ որոնք թվով քիչ են տներում/ կեղտաջրերն անմիջապես լցվում են դրենաժային առուների մեջ՝ առանց որևէ մշակման ենթարկվելու: Դրենաժային առուներն, իրենց հերթին, հեշտ հասանելի են, քանի որ բաց են և գտնվում են փողոցների մայթերի վրա: Ավելին, դրենաժային առուների ջուրն օգտագործվում է այգիների ոռոգման համար:

5. Պեստիցիդների վաճառքը, պահպանումը և օգտագործումը Հայանիստում և, հավանաբար, ողջ Հայաստանում, բավարար չափով կարգավորված չէ: Հայանիստում դեռևս օգտագործվում է այնպիսի ժամկետանց պեստիցիդ, ինչպիսին է ԴԴՏ-ն: Պեստիցիդների ճիշտ պահպանման մասին (օր.՝ հեղուկ պեստիցիդները պահել շշերում) իրազեկության բացակայությունը հանգեցնում է պատահական թունավորումների (մարդիկ սխալմամբ ակոհոլի կամ այլ խմիչքի փոխարեն պեստիցիդ են խմում) և նաև ոչ պատահական թունավորումների (առանց պաշտպանիչ արտահագուստի այգում սրսկումներ կատարելիս):

6. Աղբահավաքման համակարգի բացակայությունը և թույլատրված աղբավայրից մեծ հեռավորությունը ստիպում է տեղաբնակներին կամ այրել գոյացած կոշտ թափոնները կամ դեն նետել չթույլատրված վայրերում: Միևնույն ժամանակ, աղբավայրի գարշահոտությունը տհաճություն է պատճառում մոտակայքի բնակիչներին:

7. Պլաստիկ շշերի այրումը սենյակային պայմաններում և տանից դուրս տարածված երևույթ է: Աղքատության և նաև անտեղյակության պատճառով Հայանիստում հարցվողների 30%-ը պլաստիկ շշերն օգտագործում է որպես վառելիք իրենց վառարանների համար:

8. Հողագործությունը քիչ է զարգացած հողի վատ հատկանիշների, գրունտային ջրերի բարձր մակարդակի և հողագործական գիտելիքների պակասի պատճառով: Շատ տնտեսություններ գյուղատնտեսական մթերքներ չունեն, քանի որ բերքատվությունը ցածր է լինում վատ եղանակների պատճառով:

9. Բնակիչները չունեն գիտելիքներ և/կամ հնարավորություններ բարելավելու հողի հատկանիշները: Օր.՝ պատասխանողներից շատերը նշում են, որ իրենք այգու թափոնները չեն կոմպոստացնում, դրանք ուղղակի այրում են: Բնակիչներն

հիմնականում օգտագործում են միայն քիմիական ազոտական պարարտանյութեր, բայց ֆինանս չունենալու պատճառով չեն կարողանում գնել դրանք: Այնուամենայնիվ, նույնիսկ այսօր, որոշ տնտեսություններ մեկ հեկտարի վրա օգտագործում են 250-500 կգ ազոտական պարարտանյութ:

10. Հայանիստում թեև հողագործությունը թերի է զարգացած, սակայն տնտեսությունների մի մասի եկամուտը մասամբ կամ ամբողջովին կախված է հողագործական աշխատանքներից: Ավելի մեծ եկամուտ ունեցող տնտեսությունները զբաղվում են անասնապահությամբ: Միևնույն ժամանակ, շատ պատասխանողներ նշում էին, որ գյուղում ոռոգման պատշաճ համակարգ ունենալու դեպքում իրենց եկամուտները զգալի չափով կավելանային և շատ տնտեսություններ կցանկանային աճեցնել ցորեն:

11. Սենյակային օդի աղտոտումը զգալի է Հայանիստի դպրոցում: Դասասենյակները ջեռուցվում են վառարաններով, որոնք աշխատում են կերոսինով: Սենյակները չեն օդափոխվում: Արդյունքում, աշակերտները ցուրտ սեզոնի ողջ ընթացքում ենթարկվում են սենյակի օդի՝ կերոսինի թերայրումից առաջացող մնացորդներով խիստ աղտոտվածության ազդեցությանը:

12. Հանրային մասնակցության մակարդակը, հատկապես՝ կանանց շրջանում, ցածր է: Ավանդույթի համաձայն, կանայք որոշումների կայացման պատասխանատվությունը դնում են տղամարդկանց վրա:

3.13 Առաջարկություններ

1. Անչափ կարևոր է բարձրացնել իրազեկությունը շրջակա միջավայրի, հիգիենայի, սանիտարական մաքրության և մարդու առողջության վերաբերյալ բնակիչների շրջանում: Առաջարկվում է ապահովել տեղեկատվությամբ անվտանգ խմելու ջրի, էկոլոգիական մաքրության, օրգանական կամ պեստիցիդների քիչ օգտագործմամբ հողագործության, երեխաների առողջության և նրանց ֆիզիկական զարգացման վրա սենյակային օդի աղտոտվածության ազդեցության մասին: Օր.՝ կարելի է պատրաստել և տարածել բուկլետներ, ուսուցողական բրոշյուրներ կոմպոստացման, պեստիցիդների հետ աշխատելու, խմելու ջրի միկրոկենսաբանական աղտոտման, և այլնի մասին:

2. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել պեստիցիդների խնդրին (օր.՝ դրանց կրճատմանը և պահպանմանը): Տեղի բնակիչները պետք է տեղեկացված լինեն մարդու առողջության համար վտանգավոր և ժամկետանց պեստիցիդների (օր.՝ ԴԴՏ) ցանկի մասին: Բնակչությունը պետք է տեղյակ լինի նաև Հայաստանում արգելված պեստիցիդների ցանկի, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա թունաքիմիկատների բացասական ազդեցության մասին:

3. Հողագործական աշխատանքների բարելավումը զգալիորեն կնվազեցնի աղքատության մակարդակը: Այգիների մշակմանը խոչընդոտում է 2 հիմնախնդիր՝ 1. հողի վատ հատկությունները /գրունտային ջրերի բարձր մակարդակը, հողի խիստ ալկալիականությունը/ և 2. ավանդական հողագործության մասին բնակիչների գիտելիքների և գործնական փորձառության բացակայությունը: Այդ պատճառով, խորհուրդ է տրվում հրավիրել հողի

փորձագետի և/կամ օրգանական հողագործության փորձագետի, որը կարող է այդ շրջանի համար մշակել ամենից հարմար մշակովի բույսերի ցանկը, մշակել ցանքափոխության ժամանակամիջոցի պլան, տեղեկատվություն ապահովել այն մասին, թե ինչպես խուսափեն պեստիցիդների օգտագործումից, և այլն: Միևնույն ժամանակ կարիք կա հավաքելու տվյալներ կլիմայական պայմանների մասին /օր.՝ նվազագույն, առավելագույն և միջին ջերմաստիճանները և տեղումները, սեզոնների տևողությունը, և այլն/: Հավանաբար, կարիք կլինի կատարել հողի նմուշի ստուգում:

4. Գլխավոր խնդիրներից է գրունտային ջրերի բարձր մակարդակը, որը խոչընդոտում է հողագործական աշխատանքներին և վնասում շինությունները: Առաջարկվում է հավաքել գեոմորֆոլոգիական /երկրամակերևութաբանական/ և գեոհիդրոլոգիական տվյալներ տարածքի մասին պարզելու համար, թե արդյոք հնարավոր է բարելավել դրենաժային համակարգը և նվազեցնել գրունտային ջրերի մակարդակը:

5. Անհրաժեշտ է ուսումնասիրել 17 խորը հորերի ջրի որակը, համաձայնության գալ տնտեսությունների հետ իրենց անասնաբակերը խմելու ջրի աղբյուրներից հեռու տեղափոխելու հարցի շուրջ և ստեղծել, եթե հնարավոր է, պաշտպանական գոտիներ խմելու ջրի աղբյուրների շուրջ: Բնակչությանը պետք է խորհուրդ տալ ջուրը եռացնել օգտագործումից առաջ: Հին խողովակները պետք է նորացվեն:

6. Քանի որ դպրոցի տնօրենը խիստ շահագրգռված է էկոսանիտարական արտաքնոցների ստեղծմամբ, անհրաժեշտ է գտնել համապատասխան տեղերը արտաքնոցների համար, համաձայնության գալ դրանց հետագա պահպանման շուրջ, նշանակել պատասխանատու անձնակազմ արտաքնոցների պահպանման և աշխատեցման համար: Ավելին, քանի որ աղիքային մակաբույծների հիմնախնդիրը զգալի է հատկապես երեխաների շրջանում, առաջարկվում է կատարել դպրոցի բոլոր աշակերտների կղանքի անալիզ մակաբույծների նկատմամբ, որպեսզի հնարավոր լինի կանխորոշել կոմպոստացման խցիկներում կղանքի պահպանման ժամկետը և այդպիսով նվազեցնել ոչ լրիվ մշակված կոմպոստային նյութի կիրառման վտանգը դաշտերում: Միևնույն ժամանակ ախտահարված երեխաները պետք է ստանան համապատասխան բուժում:

7. Գրունտային ջրերի աղտոտումը կրճատելու համար պետք է խրախուսվի էկոսան արտաքնոցների տեղադրումը մասնավոր տներում, և/կամ առնվազն բնակիչներին պետք է խորհուրդ տալ մեկուսացնել և ամրացնել իրենց հորանման արտաքնոցները, որպեսզի գրունտային ջրերը չաղտոտվեն արտաթորանքներով:

8. Դպրոցի տնօրենն ընդունում է, որ դպրոցի ջեռուցման վիճակն անընդունելի է: Դա ապահով չէ, և սենյակային աղտոտված օդը զգալի վնաս է հասցնում երեխաների առողջությանը, նրանց ճանաչողական ունակությունների և ֆիզիկական զարգացմանը: Անհրաժեշտ է գտնել էկոլոգիապես ավելի առողջ և մատչելի այլընտրանքներ դպրոցի ջեռուցման համար:

9. Առաջարկվում է Հայանիստի մերձակայքում գտնվող աղբանոցը պահպանել և ամրացնել, ներդնել աղբահավաքման համակարգը: Լավ կլիներ ներդնել թափոնների տեսակավորված հավաքման համակարգը, որի շնորհիվ

նվազագույնի կհասնեն թափոնների հոսքը և կավելանար կրկնաշրջանառությունը:

10. Առաջարկվում է փորձել հնարավորինս շատ տեղաբնակների ներգրավել սոցիալական և համայնքի գործունեությանը (հատկապես կանանց ու երիտասարդներին) և որոշումների կայացման գործընթացին:

4. Ձեռք բերված տվյալներ Ֆանտանի վերաբերյալ

4.1 Ֆանտան գյուղը

Ֆանտան գյուղը բավական փոքր և մեկուսացված գյուղ է, գտնվում է Գութանասար (2999.6 մ) լեռան հյուսիսային ստորոտում, ծովի մակրևայթից 1800 մ բարձրության վրա, գեղատեսիլ վայրում: Ֆանտանը պատկանում է Կոտայքի մարզի Չարենցավանի տարածաշրջանին: Գյուղն ունի ավտոբուսային ուղիղ հաղորդակցություն Չարենցավան քաղաքի հետ (մոտ 20 000 բնակիչ), օրական 3 անգամ: Հեռավորությունը գյուղից մինչև այս քաղաք 6 կմ է: Թեև մայրաքաղաք Երևանն ընդամենը 30 կմ հեռավորության վրա է գտնվում, սակայն գյուղի և Երևանի միջև ուղիղ տրանսպորտային կապ չկա:

Ֆանտանի բնակիչների թիվը 1117 է, ընդ որում մեծամասնություն են կազմում կանայք: Գյուղում ապրում է 340 ընտանիք, որոնք ապրում են 240 մասնավոր տներում: Գյուղում չկան փաքամասնություններ: Մոտ 60 ընտանիք հայ-ադրբեջանական հակամարտության հետևանքով ներգաղթած փախստականներ են:

Տեղաբնակներն ապրում են մեկ կամ երկու հարկանի քարե մասնավոր տներում, որոնք արտաքինից բավական մեծ և հարուստ տան տպավորություն են թողնում: Այնուամենայնիվ, միայն այդ տներն այցելելով մարդ կարող է կարծիք կազմել նրանց ապրելակերպի իրական պայմանների մասին: Այն հայերը, ովքեր վերջին անգամ եղել են Ֆանտանում նախկին խորհրդային տարիներին, հայտարարում էին, որ Ֆանտանը հարուստ գյուղ է, սակայն մեր այցն այնտեղ հակառակ իրավիճակը ցույց տվեց:

Տնտեսությունների 30-40 %-ը միացած է կենտրոնացված գազամատակարարման համակարգին: Որոշ ընտանիքներում կա հեռախոս: Նախկին խորհրդային տարիներին մոտ 50 տնտեսություն միացած է եղել կենտրոնացված ջրամատակարարման համակարգին: Զուրն օգտագործվել է թե խմելու և թե ոռոգման նպատակով: Ներկայումս այդ համակարգը քայքայված է և չի գործում:

Գյուղն ունի գյուղապետարան, փոքր բուժկետ, որտեղ աշխատում է մեկ բուժքույր, գյուղում կա դպրոց: Գյուղապետարանը գտնվում է գյուղի կենտրոնում: Վերջինիս հարևանությամբ, փողոցի հակառակ կողմում 1988 թ. երկրաշարժի հետևանքով քանդված նախկին ակումբի ավերակներն են (խորհրդային տարիներին ծրագրվել էր կառուցել նորը, որն ակնհայտ է, որ չի կառուցվել): Ներկայիս դպրոցի շենքը գտնվում է ակումբի ավերակների կողքին: Ներկայումս դպրոց է հաճախում 6-17 տարեկան 172 աշակերտ:

Ֆանտանում չկան աշխատանքի հնարավորություններ: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո երիտասարդների մեծ մասը մնում է գյուղում, քանի որ ոչ հնարավորություն ունեն վճարել հետագա կրթության համար, ոչ էլ կարողանում են աշխատանք գտնել: Համաձայն դպրոցի տնօրենի վկայության, շրջանավարտների միայն 5-6 % -ն է շարունակում կրթությունը:

4.2 Պատասխանողների և նրանց ընտանիքների նկարագիրը

2005 թ. փետրվարին Ֆանտան կատարած այցի ընթացքում անց է կացվել 8 «երկար» հարցում: Ավելին, AWHHE-ն իրականացրել է 3 «երկար» և 20 «կարճ» հարցում՝ օգտագործելով Քիթի Բենթլեյսենի կազմած հարցաթերթիկները: Ֆանտանում կատարած ուսումնասիրության ժամանակ հարցազրույցներ են տեղի ունեցել տեղեկատվությանը տիրապետող անձանց՝ գյուղապետի, գյուղխորհրդի քարտուղարի, դպրոցի տնօրենի և բուժկետի բուժքրոջ հետ 6 հարցազրույց կայացել է կանանց և 3 հարցազրույց՝ տղամարդկանց հետ: 2 հարցազրույցի մասնակցել են ամուսիններ, ընդ որում թոշակառուների երկու զույգն էլ ապրում էր իրենց չափահաս երեխաներից առանձին:

Հիմնական պատասխանողների տարիքը տատանվում էր 25-66 սահմաններում (1 պատասխանող 25տ. 2 պատասխանող՝ 30-40 տ., 2 պատասխանող 40-50 տ., 4 պատասխանող՝ 50 – 60 տ. և 2 պատասխանող՝ 60-ից բարձր տարիքի): Պատասխանողների մեծ մասն ուներ միջնակարգ կրթություն, բացառությամբ 2 պատասխանողի, ովքեր աշխատում էին Ֆանտանի և Չարենցավանի դպրոցներում՝ որպես ուսուցիչ:

11 պատասխանողներից 4-ը այնպիսի ընտանիքներից էին, որոնք բաղկացած էին ծնողներից և երեխաներից , 2 պատասխանող թոշակառու զույգեր էին ներկայացնում, մնացածները մեծ ընտանիքներից էին (3-4 սերնդի ներկայացուցիչներ, ովքեր ապրում են մեկ հարկի տակ): Ֆանտանում ընտանիքների մեծ մասն ունի 3 կամ 4 աշակերտ, այնուամենայնիվ, երեք երիտասարդ զույգ ուներ մեկ երեխա: Պատասխանողներից մեկն ուներ 7 երեխա:

4.3 Աշխատանք, եկամուտ և ծախսեր

Աշխատանք և եկամուտ

Ֆանտանում համարյա բացակայում են աշխատանքի հնարավորությունները: Միակ աշխատող հաստատություններն են՝ դպրոցը (19 ուսուցիչ, որոնց մեծ մասը Ֆանտանի բնակիչներ չեն), բուժկետը (1 բուժքույր) և գյուղական խորհուրդը (4 աշխատակից): Ըստ գյուղապետի վկայության, մոտ 30-40 բնակիչ (հիմնականում տղամարդիկ) գնում են Չարենցավան՝ աշխատանք որոնելու, բայց նրանց աշխատավարձերը շատ ցածր են (մոտ 1000 դրամ/օր կամ 0.20 ամ. դոլ./օր): Երևանում աշխատավարձերն հնարավոր է ավելի բարձր լինեն, բայց Ֆանտանի բնակիչները չեն մեկնում այնտեղ աշխատանք որոնելու, քանի որ Երևանի հետ ուղիղ փոխադրամիջոց չկա: Կոպիտ հաշվարկով, աշխատանքի տարիքի բնակիչների միայն 12 %-ն է ապահովված աշխատանքով: Ընտանիքների մեծամասնության համար եկամտի միակ աղբյուրը ընտանիքի թոշակառու անդամների նպաստներն են, որոնք շատ ցածր են (6000 -10 000 դրամ/ամիս): Պատասխանողներից մեկի մեկնաբանությամբ, այդ նպաստը «բավարար չէ

նույնիսկ սիգարետ գնելու համար»։ Որոշ բնակիչներ, օրինակ, հաշմանդամները և մանկահասակ երեխաների մայրերը պետությունից ստանում են դրամական օժանդակություն/սուբսիդիա։ Այնուամենայնիվ, սուբսիդիաները նպաստների համեմատ քիչ են (օր.՝ շատ երեխաներ ունեցող ընտանիքին տրամադրվող սուբսիդիան մեկ երեխայի համար ամսեկան 3000 դրամ է, հաշմանդամի համար սուբսիդիան՝ 4-5000 դրամ/ամիս)։

Հարցվողների պատասխանների հիման վրա կատարած հաշվարկը ցույց է տալիս, որ Ֆանտանում մեկ անձի եկամուտը տատանվում է 0-15 ամ. դոլարի սահմաններում։ Ընտանիքների մեծ մասը փորձում է լրացուցիչ եկամուտ ստանալ՝ վաճառելով սեփական արտադրանքը, օր.՝ կաթնամթերք, խոտ կամ ցորեն։

Ֆանտանում բնակվող ընտանիքների համար հեշտ է գոյատևել, եթե նրանք ունեն մեկ կամ մի քանի կով։ Մեկ կին նույնիսկ նշում էր, որ «իրենք գոյատևում են, որովհետև կով ունեն»։ Կովն ընտանիքների համար դարձել է եկամտի աղբյուրը։ Կով պահող ընտանիքների կանայք կաթնամթերք են պատրաստում և վաճառում Չարենցավանի շուկայում։ Շատ հաճախ նրանք ստիպված են լինում ողջ շաբաթ կաթնամթերքը հավաքել և միանգամից վաճառել։ Կանայք հաճախ երկուսից ավել պայուսակներով, ոտքով են գնում շուկա, որպեսզի խնայեն փոխադրածախսը։ Հուսահատությունից դրդված Ֆանտանի որոշ բնակիչներ մեկնել են Ռուսաստան՝ անլեգալ պայմաններում շինարարությունում աշխատելու նպատակով։ Պատասխանողներից մեկի ամուսինը տարիներ շարունակ աշխատել է Ռուսաստանում և հաճախակի գումար է ուղարկել, սակայն հետագայում առողջական լուրջ խնդիրներ ունենալու (մեջքի ցավի) պատճառով վերադարձել է գյուղ։

Ծախսեր

Տնտեսությունների մեծ մասն իրենց եկամտի զգալի մասը ծախսում են սննդի և կոմունալ ծառայությունների վճարումների վրա։ Ֆանտանի գյուղապետի վկայությամբ, գյուղի ընտանիքների 40 % այնքան աղքատ են, որ նույնիսկ ի վիճակի չեն վճարել կոմունալ ծախսերի դիմաց։ Ընդհանուր առմամբ, ինչպես նշում են պատասխանողները, միայն սպառած էլեկտրաէներգիայի և գազի դիմաց բնակիչները ստիպված են վճարել 4-10 000 դրամ/ամիս։ Այլ ծախսերից են հեռախոսավարձը (200 -1000 դրամ/ամիս), ջրի վարձը (1000 -2000 դրամ/ամիս), հողահարկը (14000 դրամ/հա/տարի) և դեղորայքի ծախսը (ավելացած գումարի դեպքում)։ Միայն որոշ ընտանիքներ կարող են իրենց թույլ տալ հագուստ գնել, այն էլ տարին մեկ անգամ, խոտի կամ հացահատիկի վաճառքից եկամուտ ունենալու դեպքում։ Որոշ պատասխանողներ էլ նշում են, որ իրենք գումար չունեն իրենց տները ջեռուցելու համար, այդ է պատճառը, որ փորձում են գազի կամ փայտի փոխարեն օգտագործել բոլոր հնարավոր միջոցները։ Օրինակի համար, մի ընտանիք տաքացնելու նպատակով օգտագործում է այն ամենը, ինչ հնարավոր է այրել։ Մեկ այլ ընտանիք օգտագործում է իր հին տան տանիքը (քանի որ տեղափոխվել են նոր տուն, որի կառուցումը դեռ չի ավարտվել)։

4.4 Սեռերի դերաբաշխում

Ֆանտան գյուղի ընտանիքներում սեռերի դերաբաշխումը համարյա նույնն է, ինչ Հայանիստի ընտանիքներում։ Այնուամենայնիվ, Ֆանտանում տղամարդիկ ավելի

շատ են ներգրավված գյուղատնտեսական աշխատանքներում (կատարում են հողագործական աշխատանքներ և պահում են անասուններ): Կանայք պատասխանատու են տան գործերը վարելու, երեխաների խնամքի համար (տուն ու բակը մաքրել, եփել, հաց թխել և այլն): Տղամարդկանց ավելի բնորոշ է աշխատանք որոնելը, հատկապես գյուղից դուրս (Չարենցավան, Ռուսաստան), իսկ կանայք իրենց պատասխանատու են համարում տան և ընտանիքի համար: Ահա թե ինչու բոլոր կին-պատասխանողները նշում են, որ իրենք տնային տնտեսուհիներ են և չեն աշխատում: Աշխատանք ունեցող կանանց մեծ մասն աշխատում է դպրոցում՝ որպես ուսուցչուհի (տնօրենը նույնպես կին է): Գրադարանավարը և գյուղխորհրդի քարտուղարը նույնպես կանայք են: Գյուղապետը և նրա տեղակալները տղամարդիկ են:

4.5 Համայնքի մասնակցությունը և սոցիալական ցանցը

Ֆանտան գյուղի համայնքն այնքան էլ ակտիվ գործունեություն չի ծավալում: Գյուղի ակումբն ավերվել է 1988 թ-ի երկրաշարժի հետևանքով և այլևս չի վերակառուցվել: Գյուղն, այնուամենայնիվ, բավական փոքր է, և գյուղաբնակները բավական լավ գիտեն միմյանց: Հարևաններն օգնում են միմյանց և օժանդակում են խիստ կարիքավորներին (ըստ հայկական ավանդույթի): Հարցումների ժամանակ, սակայն, հարևաններ չկային պատասխանողների տանը (ի տարբերություն Հայանիստի): Միայն մեկ հարցվողի տանը տեսանք մի հարևանի, որը ճաշում էր նրանց հետ և հեռուստացույց դիտում: Մնացած պատասխանողները զբաղված էին տարբեր տնային գործերով կամ իրենց ընտանիքի անդամների հետ էին հեռուստացույց դիտում:

Ֆանտան գյուղի դպրոցը չունի ծնողական կոմիտե: Որոշ ծնողներ օգնում են լուծել դպրոցի որոշ հարցեր, բայց նրանք չեն համարվում ծնողկոմիտեի անդամներ: Ծնողներն հիմնականում հաղորդակցվում են ուսուցիչների հետ: Դպրոցի տնօրենը ցանականում էր, որպեսզի ծնողներն ավել շատ ներդրումներ կատարեն դպրոցի համար:

Որոշ հարցվողներ նշում էին, որ խնդիրներ ծագելիս նրանք առաջին հերթին դիմում են գյուղապետին: Որոշ պատասխանողներ նշում էին, որ իրենք նույնիսկ օգնություն են ստացել գյուղխորհրդից: Օրինակ, մեկ պատասխանող հայտարարում էր, որ իր ընտանիքը 2003 թ. մարդասիրական օգնություն է ստացել (այլուր, բուսական ձեթ), մեկ այլ ընտանիք 9 այլ ընտանիքների հետ միասին 2004 թ. ստացել են հացահատիկի սերմեր: Գյուղապետը շահագրգիռ տնտեսություններից գումար է հավաքում՝ զեղչ գներով քիմիական պարարտանյութեր ձեռք բերելու համար: Ինչևէ, կային նաև պատասխանողներ, որոնք ղժգոհում էին այն բանից, որ իրենք կարիքի մեջ են, բայց գյուղապետն իրենց օգնության ձեռք չի մեկնում:

Բավական մեծ էր այն տղամարդ-պատասխանողների թիվը, ովքեր ցանկություն էին հայտնում անդամակցել գյուղի հասարակական կոմիտեին և հնարավորություն ունենալ ազդել որոշումների կայացման գործընթացի վրա: Որոշ կին-պատասխանողներ առաջարկում էին, որ իրենց ամուսինները դառնան այդ հասարակական կոմիտեի անդամներ:

4.6 Հող և հողագործություն

Հողի սեփականության իրավունքը

Վաղ 1990-ականներին, կոլտնտեսության վերացումից հետո, Ֆանտան գյուղի բոլոր բնակիչները ստացան հողակտորներ՝ որպես անձնական սեփականություն: Այլ գյուղերի համեմատ, Ֆանտան գյուղի կոլտնտեսությունն ավելի շատ հող է ունեցել, այդ պատճառով յուրաքանչյուր տնտեսություն ունեցել է մոտ 4 հա հող: Ներկայումս տնտեսություններն ունեն մոտ 1.5 – 5 հա հող: Ֆանտանի բնակիչները մինչև վերջերս հողահարկ չեն վճարել, բայց ներկայումս ողջ հանրապետությունում մտցվել է հողահարկ, որը, գյուղացիների կարծիքով, շատ բարձր է: Գյուղը բավական մեկուսացած է, և, դա է պատճառը, որ մարդիկ իրենց հողերը վաճառելու հնարավորություն չունեն: Որոշ տնտեսություններ, այնուամենայնիվ, իրենց դաշտերը վարձակալությամբ տվել են հարևաններին, որոնք հողատերերին վճարում են բնամթերքով (օր.՝ հացահատիկ, այլուր կամ խոտ):

Գյուղատնտեսական արտադրություն

Նախկին խորհրդային տարիներին ֆանտանի կոլտնտեսությունը հիմնականում զբաղվել է անասնաբուծությամբ և այգեգործությամբ: Եղել են նաև մշակովի դաշտեր, ուր աճեցրել են բանջարանոցային բույսեր, եգիպտացորեն, արևածաղիկ և վուշ: Այն ժամանակ յուրաքանչյուր տնտեսություն ունեցել է տնամերձ հողամաս՝ բանջարեղեն աճեցնելու համար: Այժմ համեմատաբար հարուստ տնտեսությունները զբաղված են անասնապահությամբ և ունեն դաշտեր, որտեղ աճեցնում են հացահատիկային մշակաբույսեր (ցորեն, գարի, աշորա): Շատ պատասխանողներ հայտարարում էին, որ իրենք հողի մասը՝ հատկացնում են խոտհարքի (նույնիսկ եթե կենդանի չեն պահում), մյուս մասը՝ հատիկավոր մշակաբույսերի համար: Սակայն, վերջիններիս մշակումն այնքան էլ շահութաբեր չէ: Ներդրումների ծախսերը շատ են (տրակտոր վարձել հողը հերկելու համար՝ 12 -14 000 դրամ/հա, կոմբայնի համար՝ 14 000 դրամ/հա և այլն): Պատասխանողներից մեկը, ով ցորեն և խոտ էր աճեցնում, նշում էր, որ նախորդ տարի իր արտադրանքի վաճառքից ստացված եկամուտը կազմել է 100 ամ. դոլար (ներառյալ ներդրման ծախսերը): Պատասխանողները դժգոհում էին, ասելով, որ իրենք պարտքով գումար են վերցրել անհրաժեշտ ներդրում կատարելու համար, արդյունքում իրենց պարտքերն ավելանում են տարեցտարի:

4.1 Կոլտնտեսությունը Ֆանտանում

Խորհրդային տարիներին Ֆանտան գյուղի կոլտնտեսությունը մեծ էր և բարգավաճող: Այն հիմնական գործատուն էր տեղաբնակների համար: Յուրաքանչյուրն ապահովված էր աշխատանքով: Գյուղում չկար գործազրկություն: Կոլտնտեսականներն հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ և այգիների մշակմամբ: Կոլտնտեսությունն ունեցել է 1200 կով, 2500 ոչխար, 450 խոզ և 1500 հավ: Կոլտնտեսության դաշտերում աճեցնում էին հացահատիկ, վուշ և կերային մշակաբույսեր: 1980-ականներին Ֆանտանում ստեղծվել է ոռոգման համակարգ: Վերջինս միացած է եղել Չարենցավանի ջրանցքին, ուր թափվում էին Սևանա լճի ջրերը (ամենամեծ լիճը Հայաստանում): Ոռոգվող դաշտերում հնարավոր էր աճեցնել տարբեր տեսակի բանջարանոցային բույսեր, օր.՝ կարտոֆիլ, սմբուկ,

արևածաղիկ և այլն: Կոլտնտեսությունը հազեցած էր տեխնիկայով (տրակտոր, կոմբայն և այլն):

Ոռոգման համակարգը, սակայն, գոյատևեց մի քանի տարի: Խորհրդային Միության փլուզումից հետո կոլտնտեսությունը փակվեց, և հողերը բաժանվեցին գյուղաբնակների միջև, բայց ոռոգման համակարգը մնաց առանց հսկողության: 1990-ականներին էներգետիկ ճգնաժամի պատճառով էլեկտրաէներգիան մշտապես օրական անջատում էին 22-23 ժամով, այդ պատճառով ոռոգման համակարգը չէր աշխատում: Նախկին կոլտնտեսության այգիները չորացան, մարդիկ գողացան ոռոգման պոմպերը:

Ֆանտանին ոռոգման ջրով ապահովող համակարգի վերացումից հետո, այգիներն ու բանջարանոցները ոչնչացան: Այժմ բոլոր տնտեսություններն իրենց տան կողքին ունեն որոշ քանակությամբ մրգատու ծառեր (խնձոր, սալոր, ընկույզ, բալ և այլն), բայց քիչ բերք են ստանում, որն էլ օգտագործում են սեփական սպառման կամ ապրանքափոխանակության նպատակով: Բոլոր պատասխանողներն էլ նշում են, որ առանց ոռոգման ջրի, հնարավոր չէ բանջարեղեն աճեցնել: Ահա թե ինչու, պատասխանողներից ոչ մեկը չունի տնամերձ հողամաս: Հացահատիկի բերքը նույնպես կախված է եղանակային պայմաններից: Անձրևների բավարար առկայության պարագայում հացահատիկի բերքը կարող է լինել 2 տոննա/հեկտար, անձրևների ոչ բավարար քանակության դեպքում բերք չի լինում:

Բավական շատ էին այն պատասխանողները, ովքեր գանգատվում էին, որ գումար չունեն սերմեր գնելու համար, որի հետևանքով հողերի 50-70 %-ը մնում են չհերկած:

Քիմիական պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործումը

Նախկին խորհրդային տարիներին Ֆանտան գյուղի կոլտնտեսությունում քիմիական պարարտանյութերն ու թունաքիմիկատներն օգտագործվում էին մեծ քանակությամբ: Ըստ պատասխանողների վկայության, խորհրդային տարիներին կոլտնտեսության դաշտերում մեկ հեկտարի հաշվով օգտագործում էին 400 կգ քիմիական պարարտանյութ (հիմնականում ազոտական պարարտանյութ): Այն տարիներին հարուստ բերք էին ստանում, այդ պատճառով պատասխանողների մեծ մասը ենթադրում էր, որ ազոտական պարարտանյութի կիրառումը լավ բերք ստանալու հիմնական երաշխիքն է: Ներկայումս պարարտանյութերի կիրառումը զգալիորեն կրճատվել է:

«Երկար» և «կարճ» հարցումների ժամանակ քիմիական պարարտանյութերի օգտագործման մասին հարցում է արվել ընդամենը 31 բնակչի: Երեք պատասխանող նշում էին, որ իրենք ընդհանրապես չեն զբաղվում գյուղատնտեսական աշխատանքներով: Միայն 6 պատասխանող (20 %) էր օգտագործում ազոտական պարարտանյութ հացահատիկի համար:

Օգտագործվող պարարտանյութը կազմում է 100-200 կգ/հա: Մնացած բոլոր պատասխանողները նշում էին, որ իրենք քիմիական պարարտանյութ չեն օգտագործում՝ հիմնականում գումարի բացակայության պատճառով:

Ֆանտանում գլխավոր վնասատուներ համարվում են մկները, որոնք զգալիորեն նվազեցնում են հացահատիկի բերքը: Խորհրդային տարիներին մկների դեմ պայքարելու համար նույնիսկ ավիատեխնիկայի միջոցով սրսկումներ էին կատարում: Ֆանտանի կոլտնտեսությունում օգտագործվում էին այլ

պեստիցիդներ ևս, բայց մարդիկ դժվարանում էին անվանել դրանք: Յուրաքանչյուր ընտանիք իր հողամասում նույնպես օգտագործել է թունաքիմիկատներ: Մեկ պատասխանող պատմում էր, որ իրենք անցյալում տարին մեկ անգամ, աշնանը բույսերի սնկային հիվանդությունների դեմ պայքարելու համար օգտագործում էին «Գրանոզան»: Այժմ աղքատության պատճառով մարդիկ գումար չունեն հիմնական կարիքները հոգալու համար, առավել ևս թունաքիմիկատ գնելու: Այդ է պատճառը, որ գյուղաբնակները շատ դեպքերում ոչ մի միջոց չեն ձեռնարկում վնասատուների ոչնչացման համար: Պատասխանողները գանգատվում են մկների հասցրած վնասից, բայց, ցավոք, գումար չունեն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

31 պատասխանողից միայն 6 հոգի էր նշում, որ իրենք որոշ տեսակի պեստիցիդներ են օգտագործում: Երկու պատասխանող քիմիկատներ է օգտագործում թրթուրների և ուտիճների (մրգատու ծառերի) դեմ: Չորս պատասխանող պեստիցիդներն օգտագործում է հացահատիկի պաշտպանության համար: Բոլոր 6 դեպքերում պատասխանողները պեստիցիդները ձանաչում էին՝ հաշվի առնելով նյութի գույնը: Ահա թե ինչու, կարելի է ենթադրել, որ ֆանտանում պեստիցիդների մասին իրազեկությունը շատ ցածր է: Ֆինանսապես ավելի լավ ապահովված լինելու դեպքում, բնակիչները ավելի մեծ քանակությամբ կարող են օգտագործել պեստիցիդներ և քիմիական պարարտանյութեր: Այդ է պատճառը, որ շատ կարևոր է բարձրացնել բնակիչների իրազեկությունը այն վնասների մասին, որ կարող է հասցնել չափից ավել քանակով և ոչ ճիշտ եղանակով պեստիցիդների օգտագործումը:

Անասնապահությունը

Ֆանտան գյուղը գտնվում է բարձր սարերում և շրջապատված է խոշոր արոտավայրերով, ահա թե ինչու անասնապահությունը գյուղի գերակա գործունեություններից մեկն է: Գյուղն իր տնօրինության տակ ունի 1000 հա արոտավայր: Գյուղից դուրս կային մարդիկ, ովքեր ցանկացել են գնել այդ հողերը, բայց գյուղապետը և գյուղաբնակները որոշել են չվաճառել դրանք: Բոլոր գյուղաբնակները տարվա տաք շրջանում իրենց անասուններին հովվի ուղեկցությամբ ուղարկում են արոտավայրերը՝ արածելու: Գյուղաբնակները, այնուամենայնիվ, վճարում են հովվին այդ ծառայության համար:

Պատասխանողների վկայությամբ, բնակիչները 1 կով և 5 այծ արածացնելու համար հովվին վճարում են համապատասխանաբար՝ 10 ամ. դոլար/սեզոնի ընթացքում և 5 ամ. դոլար/սեզոնին: Արոտավայրերում չկան ջրի աղբյուրներ, արոտավայրերը գտնվում են գյուղից շատ հեռու: Բնակիչների վկայությամբ, կովերի կաթնատվությունն այնքան էլ բարձր չէ (կովերի մի մասը օրական տալիս է առավելագույնը 3 լ կաթ):

Պատասխանողների 75 %-ն առնվազն 1 կով է պահում (մինչդեռ գյուղապետի վկայությամբ, ընտանիքների մեկ երրորդը մի քանի կով ունի): Որոշ տնտեսություններ կովի փոխարեն այծ են պահում: Շատ քիչ էին այն պատասխանողները, ովքեր ոչխար էին պահում: Ամենահարուստ ընտանիքն ուներ 1 կով, 1 հորթ, 20 այծ ու ոչխար և 2 խոզ: սովորաբար պահում են նաև հավ, բայց, ընդհանուր առմամբ, 10 հավից ոչ ավել:

4.7 Ջրային ռեսուրսներ, որակը և օգտագործումը

Ջրի քանակը և որակը

Ֆանտան գյուղի ամենամեծ հիմնախնդիրներից է ջրի աղբյուրներից օգտվելու սահմանափակ հնարավորությունը: Այս գյուղը նույնիսկ ստացել է «ցամաքած աղբյուր» մականունը, քանի որ այս տարածքում գրունտային ջրերն անմատչելի են: Նախկին խորհրդային տարիներին մոտ 50 ընտանիք օգտվել է կենտրոնացված ջրամատակարարումից: Խորհրդային Միության փլուզումից հետո պոմպերը գողացել են և ամբողջ համակարգի աշխատանքը դադարել է: Ներկայումս խմելու ջուրը գյուղում մատակարարվում է 2 կետից: Առաջին ջրամատակարարման կետը բնակիչներին ապահովում է լավորակ ջրով, բայց այս ջուրը պոմպով մղվում է հեռու տարածությունից, և մարդիկ ստիպված են վճարել էլեկտրաէներգիայի դիմաց` 1200 դրամ/ամիս (այսինքն, մոտ 2.4 ամ. դոլար): Քանի որ գյուղաբնակները ծայրահեղ աղքատ են, նրանք շատ հաճախ գումար չեն ունենում սպառած էլեկտրաէներգիայի դիմաց վճարելու համար, որի պատճառով անջատվում է պոմպը /այսինքն գյուղաբնակները գրկվում են ջրի այդ աղբյուրից/:

Երկրորդ ջրամատակարարման կետը, այսպես կոչված «հին» աղբյուրը, իրականում այն մակերեսային ջրերն են, որոնք հավաքվում են սարերի փոքր աղբյուրներից և սարերի ձյան հալոցքից: Հավաքված ջուրն անցնում է թունելներով և այնուհետև ենթարկվում է մեխանիկական մշակման, այսինքն` խոշոր այինպիսի առարկաներ, ինչպիսիք են ճյուղերը կամ քարերը, չեն ընկնում խողովակների մեջ, բայց ջուրը չի ախտահանվում: Արդյունքում, առաջանում են լուծի և վտանգավոր վարակիչ հիվանդությունների բռնկումներ /օր.` տուլարեմիայի դեպք 2004թ./: Ավելին, ամռանը, ջրի մատչելի քանակությունը նվազում է, և բավական հաճախ գոյանում են մարդկանց հերթեր ջրաղբյուրի մոտ (շատ հաճախ ամռանը բնակիչները կես ժամ սպասում են ջուր վերցնելու համար):

Չնայած ենթադրվում է, որ բոլոր ընտանիքները պետք է վճարեն առաջին կետից ջրամատակարարման ծառայության դիմաց, բայց շատ տնտեսություններ նախընտրում են օգտվել «հին» աղբյուրից, որովհետև այն շատ մոտ է տներին, ջուրն անընդհատ հոսում է, և որ ամենակարևորն է, այն անվճար է:

Ջրի օգտագործումը

Ֆանտանում ջրի սպառողական մակարդակը համեմատաբար ցածր է: Ջուրն օգտագործվում է հիմնական կարիքների համար` խմելու, եփելու, մաքրելու, լվացքի և անասունների կերակրման համար: Պատասխանողներից մեկը (ընտանիքի բաղակացած է 9 հոգուց, պահում են 1 կով) նշում էր, որ իր ընտանիքի կարիքների համար ամեն օր անհրաժեշտ է 4-5 հատ 20 լիտրանոց ցիստեռնով ջուր, որը շատ դժվար է կրել աղբյուրից: Միայն մեկ պատասխանող էր նշում, որ իր ընտանիքի անդամները երբեմն ջուրը ձեռքով բերում են բավական մեծ կոնտեյներներով` որպեսզի ջրեն իրենց տնամերձ հողամասերը: Ընտանիքներից ոչ մեկը լողասենյակ չունեն: Պատասխանողների մեծ մասը ասում էր, որ իրենք լվացվում են լվացարանում, որը գտնվում է հենց այն սենյակում, ուր հաց են թխում: Քանի որ բավական դժվար է լողանալու համար անհրաժեշտ քանակության ջուր բերելը (1 անձին անհրաժեշտ է 5-6 հատ 20 լիտրանոց ցիստեռնով ջուր), որոշ մարդիկ ստիպված են լինում լողանալ 2 շաբաթը մեկ: Լվացք անելը նույնպես խնդիր է Ֆանտանի բնակիչների համար: Նույնիսկ լվացքի մեքենայի առկայության դեպքում կանայք նախընտրում են ձեռքով լվանալ, քանի որ մեքենայով լվանալու համար ավելի շատ ջուր է

պահանջվում: Ձմռանը որոշ կանայք լվացքը կատարում են տաք ջրով, իսկ ամռան ամիսներին՝ սառը ջրով:
Ձնայած տեղաբնակների համար ջրի սպառման հնարավորությունը սահմանափակ է, բայց գյուղն, ընդհանուր առմամբ, շատ ջուր է օգտագործում և հետևաբար, շատ գումար է ծախսում, հատկապես՝ ձմռանը: Այդ է պատճառը, որ ձմռան ամիսներին ջրամատակարարման կետում մարդիկ ծորակը չեն փակում, որպեսզի խողովակները չպայթեն (Ֆանտանում ձմռանը ջերմաստիճանը ցածր է, գիշերը նույնիսկ կարող է -30°C լինել):

Համարյա բոլոր պատասխանողները կցանականային ունենալ խմելու ջրի բարելավված մատակարարում: Ամենամեծ ցանկություններից մեկը նրանք համարում էին իրենց տան միացումը ցանցին, որը զգալիորեն կբարելավեր նրանց կյանքի պայմանները: Եթե այդպիսի միացում լիներ, նրանք և խմելու ջուր կունենային, և բաղնիք կկառուցեին, նաև կկարողանային տնամերձ այգիները կամ բանջարանոցները ջրել: Բայց, միևնույն ժամանակ, նրանք անհանգստանում էին, որ այդ դեպքում իրենք ի վիճակի չեն լինի վճարել միացում ունենալու համար:

Ռոռզման ջուրը

Ռոռզման բացակայությունը զգալիորեն նվազեցրել է /համարյա վերացրել է/ հողագործական աշխատանքների ծավալը: Գյուղի բնակիչներն իրենց բակերում չեն կարողանում բանջարեղեն աճեցնել: Քիչ են այն տնտեսությունները, որոնք փորձում են հացահատիկ աճեցնել և/կամ հնձել, չորացնել այն դաշտերում՝ որպես անասնակեր: Բերքը կախված է եղանակից, և շատ հաճախ հացահատիկի մշակումը լինում է ոչ շահութաբեր: Ահա թե ինչու, շատ բնակիչներ ուղղակի հրաժարվում են մշակումից:

Շատ պատասխանողներ նշում են, որ Ռոռզման համակարգի վերակառուցումը օգուտ կբերի գրեթե բոլոր տնտեսություններին, կբարելավի նրանց բարեկեցությունը, մասնավորապես հնարավոր կդարձնի բակերում բանջարեղենի աճեցումը: Նախկին համակարգի խողովակները դեռևս իրենց տեղում են, սակայն պոմպերը գողացված են: Ինչպես գյուղապետն է նշում, Ֆանտան գյուղի նախկին Ռոռզման համակարգի վերակառուցումը կարժենա մոտ 10 – 15 000 ամ. դոլար, գումար, որը տվյալ գյուղը չունի:

4.8 Ջրահեռացում և թափոնների հեռացում

Ջրահեռացում

Ֆանտան գյուղում չկա Ռոռզման համակարգ: Տնտեսությունների մեծ մասն ունի հորատիպ զուգարան: Ամբողջ գյուղում միայն 2-3 ընտանիք կար, որոնք ունեին ջրով գործարկվող զուգարաններ, որոնք միացած էին սեպտիկ տարաներին: Հորատիպ զուգարանները սովորաբար չեն դատարկվում: Երբ հորը լցվում է, բնակիչը ծածկում է այն և բակի մեկ այլ մասում փորում նոր հոր զուգարանի համար: Նոր հորատիպ զուգարանը կառուցվում է միջինը 5 տարին մեկ: Բայց կան տնտեսություններ, որոնք նորը կառուցում են 2 տարին մեկ անգամ: Ֆանտանում մարդիկ այնքան էլ չէին գանգատվում կոյուղու բացակայությունից, ինչպես որ դա անում էին Հայաստանում բնակվողները: Պատասխանողներից համարյա ոչ ոք ցանկություն չի հայտնել ունենալ ջրով գործարկվող զուգարան, քանի որ նրանք արդեն սովոր են հորատիպ զուգարաններին: Բնակիչներին

հիմնականում անհանգստացնում է ցնցուղի կամ բաղնիքի բացակայությունը իրենց տներում:

4.2 Ջրահեռացումը Ֆանտանի դպրոցում

Ֆանտան գյուղի դպրոցը տեղակայված է երեք հարկանի շինությունում, գյուղի կենտրոնում: Դպրոցն ունի խնդիր՝ կապված ներսի պայմանների և ջրահեռացման վիճակի հետ: Դպրոցի հիմնախնդիրներից մեկը ջեռուցման համակարգի բացակայությունն է: Գյուղի բնակիչները դպրոցում տեղադրել են ինքնաշեն տաքացուցիչ, որն աշխատում է հոսանքով, և էլեկտրաէներգիայի նախորդ տարվա ծախսերը հոգացել են աշակերտների ծնողները: Ձմռանը դասասենյակներում համեմատաբար տաք էր (մինչև 15 °C): Այնուամենայնիվ, շատ հաճախ տարվա ցուրտ շրջանում աշակերտները մրսում են և հիվանդանում: Դասերը սկսվում են առավոտյան ժամը 9-ին և տևում են մինչև ժամը 14:00-ն: Շատ ցուրտ օրերին դասաժամի տևողությունը կրճատվում է: Դպրոցը միացած չէ ջրամատակարարման համակարգին: Բարեբախտաբար, դպրոցը գտնվում է գյուղի կենտրոնում՝ ջրաղբյուրին մոտ: Այդ է պատճառը, որ ջուրը կրում են դույլերով: Դպրոցի համար ամենամեծ խնդիրը, սակայն, դպրոցի զուգարանների վիճակն է: Վերջիններս հորատիպ են, գտնվում են դպրոցի բակում, սարսափելի քայքայված վիճակում: Զուգարաններն այնքան կեղտոտ են ու զարշահոտ, որ շատ երեխաներ զուգարանից օգտվելու համար իրենց տուն են վազում: Այն երեխաները, ովքեր բնակվում են դպրոցից հեռու, հարկադրված օգտվում են դպրոցի բակի զուգարաններից: Ուսուցիչները նույնպես խուսափում են զուգարանից օգտվելուց և նախընտրում են գնալ մասնավոր տներ: Ուսուցիչները խուսափում են ըմպելիքներից (նույնիսկ տանը թեյ չեն խմում դպրոց գնալուց առաջ), որպեսզի ստիպված չլինեն զուգարան գնալ: Ահա թե ինչու, նոր զուգարանի կառուցումը հիմնական գերակա խնդիրն է Ֆանտանի դպրոցի համար:

Կոշտ թափոնների հեռացումը

Կոշտ թափոնների հեռացումը նույնպես Ֆանտանի հիմնախնդիրներից է: Որոշ պատասխանողների վկայությամբ, անցյալում գյուղում գործել է աղբահավաքման ծառայությունը, բայց բնակիչները փող չեն ունեցել այդ ծառայության դիմաց վճարելու համար: Արդյունքում, ծառայության գործունեությունը դադարեցվել է: Հետևաբար, ինչպես պատասխանողներն են նշում, շատ սովորական բան է ամենուր, գյուղի առուններում աղբ տեսնելը: Նույնիսկ գյուղապետարանի որոշ աշխատակիցներ ժպտալով ասում էին, որ «աղբը հիմա չեք տեսնում, որովհետև ծածկված է ձնով, և ամեն ինչ այնքան սպիտակ է ու գեղեցիկ»: Այնուամենայնիվ, որոշ պատասխանողներ նշում էին, որ Ֆանտանում աղբի հեռացման համար գյուղից ոչ հեռու հատուկ տեղ է հատկացված: Այդ տեղը ոչ մեկուսացված է ցանկապատով, և ոչ էլ ամրացված որևէ կերպ, այդ պատճառով երբեմն քամին այդտեղի աղբը քշում-տանում է դեպի գյուղի փողոցները: 75 % պատասխանողներ նշում էին, որ իրենց աղբը մի մասը թափում են այդ աղբավայրը: Մեկ պատասխանող, սակայն, նշում էր, որ գյուղապետն արգելել էր աղբն այդտեղ թափել, բայց գյուղաբնակները, ներառյալ այդ պատասխանողը, շարունակում են այնտեղ թափել աղբը, որովհետև այլընտրանք չունեն: Շատ քիչ էին այն պատասխանողները, ովքեր իրենց աղբը թափում են դաշտերում կամ

առուններում: Գյուղապետարանը երբեմն կազմակերպում է չթույլատրված վայրում գտնվող այդ աղբանոցի մաքրման աշխատանքներ, այն է՝ տրակտորով աղբը հեռացվում և թափվում է կեղտաջրերի հորերը:

4.3 Կոշտ թափոնների հեռացումը Հայաստանում

Ամեն օր Հայաստանում գոյանում է մոտ 12 700 խոր. մ ծավալի չափով կենցաղային աղբ, որից օրական 10 200 խոր. մ առաջանում է քաղաքաբնակ տարածքներում և 2 500 խոր. մ՝ գյուղաբնակ վայրերում: Այսօր, կոշտ թափոններից ազատվելու միակ ձևը՝ դրանք աղբավայր փոխադրելն է: Ըստ վիճակագրության, Հայաստանում կա կառավարվող կոշտ թափոնների 54 աղբավայր, որոնք շահագործվում են թափոնների կառավարման գործում մասնագիտացված ձեռնարկությունների կողմից: Այդ աղբավայրերը զբաղեցնում են 196.0 հա տարածություն: Տարեկան այդ աղբավայրերն է փոխադրվում 1.5 մլն. տոննա կենցաղային աղբ մեծ ու փոքր քաղաքներից և 5 գյուղաբնակ վայրերից: Հայաստանում աղբավայրերի մեծ մասը չեն բավարարում առողջության և շրջակա միջավայրի համար սահմանված պահանջները:

Աղբյուր՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2001թ. Առողջապահության առանձնահատկությունները Հայաստանում: Էլեկտրոնային տարբերակ <http://www.euro.who.int/document/e72377.pdf>

Պատասխանողների մեծ մասը նշում էր, որ իրենք կոշտ թափոնների մի մասն այրում են: Մի աղքատ ընտանիք իր տունը տաքացնելու համար «այրում էր ցանկացած այրվող բան (օր.՝ թուղթ, պլաստիկ շշեր, հին կոշիկներ)»: Միայն մեկ պատասխանող գտնվեց, ով իր տան աղբը երբեք չէր այրում և այն թափում էր աղբավայրում:

Այն պատասխանողները, ովքեր այրում են աղբը, հիմնականում այրում են թուղթ և պլաստիկ իրեր: Պլաստիկ իրերի այրման պատճառները կարող են տարբեր լինել: Օրինակի համար, շատ պատասխանողների կարծիքով, պլաստիկ իրերը լավ են այրվում և ապահովում են որոշակի ջերմություն, այդպիսով ընտանիքը որոշ չափով խնայում է վառելիքը: Մեկ պատասխանող էլ նախընտրում էր այրել աղբը պլաստիկ շշերի հետ միասին, քան թե թափել աղբավայրը, որտեղից քամին աղբը քշում-բերում է փողոցները, որտեղ էլ կովերը ուտում են դրանք:

Պատասխանողների 22 %-ն պլաստիկ նյութերն այրում է տան պայմաններում, հատկապես՝ ձմռանը: Մի ընտանիք գանգատվում էր, որ իրենք ստիպված են այրել դրանք՝ տունը տաքացնելու համար, բայց մյուս կողմից, դրանց այրումից առաջացած հոտը սարսափելի է և անտանելի:

Պատասխանողների 60 % -ը հայտարարում էր, որ իրենք գիտեն պլաստիկ շշերի այրման հասցրած վնասների մասին, իսկ 40 %-ն ընդհանրապես չի լսել այդ մասին: Որոշ պատասխանողներ, ովքեր տեղյակ էին մարդու առողջության համար պլաստիկ շշերի այրման վտանգների մասին, դեռևս այն կարծիքին էին, որ տանը նորմալ օդափոխության պայմաններում պլաստիկ իրերի այրումը առողջությանը չի կարող վնասել: Պատասխանողներից ոչ մեկը տեղյակ չէր դիօքսինների մասին: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ բնակչության

տեղեկացվածությունը մարդու առողջության համար պլաստիկ իրերի այրման վտանգավորության մասին շատ ցածր է:

Օրգանական թափոններ և կոմպոստացում

Գոմաղբը Ֆանտանում թերևս չի կարելի համարել թափոն: 90 %

պատասխանողները հայտարարում էին, որ իրենք գոմաղբը հիմնականում օգտագործում են որպես վառելանյութ: Գոմաղբը հավաքում են, չորացնում ծղոտի մնացորդների հետ և որպես վառելիք օգտագործում տնտեսության ամենօրյա աշխատանքներում: Շատ պատասխանողներ գանգատվում էին, որ իրենք բավականաչափ գոմաղբ չունեն տունը տաքացնելու համար, ուր մնաց թե պարարտացնելու հնարավորություն ունենան: Միայն 3 պատասխանող գտնվեց, ովքեր գոմաղբն օգտագործում էին որպես պարարտանյութ:

Գոմաղբը հավաքում են ձմռանը և հաջորդ աշնանը լցնում են հողի վրա:

Պատասխանողները պատմում էին, որ իրենց անասուններն ամռանը գնում են արոտավայրերը, հետևաբար նրանք կարող են գոմաղբը կուտակել միայն տարվա վեց ամիսներին: Մեկ պատասխանող նշում էր, որ իր ընտանիքը գնում է արոտավայրերը՝ գոմաղբ հավաքելու: Այգու թափոնները, սակայն, պատասխանողների մի մասը համարում է ոչ պիտանի օգտագործման համար: Պատասխանողների համարյա 50 % -ն աշնանն ուղղակի այրում է այգու թափոնները: Շատ քիչ են այն պատասխանողները, ովքեր այգու թափոնները թափում են աղբավայրը, ոմանք էլ ոչինչ չեն անում այդ թափոնների հետ (այսինքն, թողնում են դրանք հողի վրա կամ գարնանը խառնում հողի հետ): Միայն 3 պատասխանող էր երբեմն կոմպոստացնում այգու թափոնները:

4.9 Առողջություն, սննդակարգ և հիգիենա

Ֆանտանի բնակիչների առողջ ական վիճակը լավ չէ: Գյուղի բնակիչների մեծ մասը բժշկին այցելելու հնարավորություն չունի: Պատասխանողները մեծամասամբ նշում էին, որ ավել գումար ունենալու դեպում նրանք առաջին հերթին կփորձեին բարելավել իրենց առողջությունը: Որոշ բնակիչներ նույնիսկ վիրահատության կամ հիվանդանոցում բուժում ստանալու կարիք ունեին, սակայն ի վիճակի չէին վճարել դրա համար: Մեկ պատասխանող ասում էր, որ իր եղբայրը, ով այդ ժամանակ գտնվում էր Ռուսաստանի Դաշնությունում, 200 ամ. դոլար էր ուղարկել պատասխանողի որդու աչքի վիրահատության համար: Ֆանտանի երեխաները շատ ընկալուն են տարբեր շնչառական հիվանդությունների (մրսածություն, գրիպ, թոքաբորբ) նկատմամբ: Շնչառական հիվանդությունների պատճառը ցածր կենսամակարդակն է (թերսնուցումը, դպրոցի շենքի և տների վատ ջեռուցումը): Նույն պատճառներով է բացատրվում զգալի թվով հասուն բնակիչների մոտ արթրիտի դեպքերը:

4.3 Ֆանտան գյուղի բուժկետը

Ֆանտանի բուժկետը գյուղի կենտրոնին բավական մոտ է գտնվում: Շենքը, ուր տեղակայված է բուժկետը, շատ փոքր է և բաղկացած է միջանցքից և 2 փոքր սենյակից: Մեկ սենյակի տանիքը կաթում էր, այդ պատճառով սենյակը դատարկ էր և չէր օգտագործվում: Մյուս սենյակի պատերին արդեն խունացած պաստառներ էին պատվաստումների և կրծքով կերակրելու կարևորության

մասին: Դարակներում կար 1970-1980-ական թվականների հրատարակության մի քանի բուկլետ:

Այս բուկլետն ունի ընդամենը 1 բուժաշխատող: Նա դժգոհում էր անհրաժեշտ սարքավորումների և դեղորայքի բացակայությունից: Առողջապահության նախարարությունը երբեմն բուկլետն ապահովում է երեխաների համար անհրաժեշտ պատվաստանյութերով: Ընդհանուր տպավորությունն այնպիսին էր, որ բուկլետը, արտակարգ իրավիճակում ի վիճակի չէ ցուցաբերել առաջին բուժօգնություն: Հավանաբար սա է պատճառը, որ բուկլետը համարյա միշտ փակ է: Տեղի բնակիչները գիտեն, որտեղ է ապրում բուժքույրը և անհրաժեշտության դեպքում, անմիջապես նրա տուն են գնում: Բուկլետը գյուղաբնակներին չի կարողանում ապահովել նաև դեղորայքով: Մարդիկ անհրաժեշտ դեղորայքը գնում են Չարենցավանի կամ Երևանի դեղատներից:

Ավելին, աղիքային և այլ վարակիչ հիվանդությունները բավական տարածված են Ֆանտանում: Օրինակի համար, 2003 թ. եղել էր տուլարեմիայի բռնկում, որը հայտնի է նաև որպես «ձագարի տենդ», որի ժամանակ գրանցվել էր այդ հիվանդության 157 դեպք: Հիվանդությունը տևել է 2 ամիս և ավել: Որոշ ընտանիքներում համարյա բոլոր անդամներն են հիվանդ եղել, նույնիսկ՝ հղի կանայք: Որոշ պատասխանողներ ասում էին, որ իրենք անվճար բուժօգնություն են ստացել երկրի կառավարությունից: Ասում էին, որ բռնկման պատճառը եղել է «հին աղբյուրի» ջուրը (սատկած առնետ էր ընկել խմելու ջրագծի մեջ): Այնուամենայնիվ, ոչ տարածաշրջանային, և ոչ էլ տեղական մարմինները ոչինչ չեն ձեռնարկել՝ հետազայում Ֆանտանի բնակիչներին անվտանգ ջրով ապահովելու համար:

4.5 Տուլարեմիա

Տուլարեմիա հիվանդության, որն այլ կերպ անվանում են նաև «ձագարի տենդ», հարուցիչը *Francisella tularensis* բակտերիան է: Այս հիվանդությունը հիմնականում հանդիպում է կենդանիների, հատկապես՝ կրծողների, ձագարների և նապաստակների մոտ: Սովորաբար մարդիկ հիվանդանում են վարակված միջատների խայթոցի (տզեր, եղջերաձանձ), վարակված հիվանդ կամ սատկած կենդանիներին ձեռք տալու, ախտահարված ջուր կամ սնունդ ընդունելու հետևանքով կամ օդա-կաթիլային ճանապարհով: Մարդու միջոցով այս վարակը չի փոխանցվում, հետևաբար հիվանդին մեկուսացնելու կարիք չկա: Այնուամենայնիվ, նշված բակտերիան խիստ վարակիչ է, քանի որ ամենափոքր քանակությունն անգամ (10-15 օրգանիզմ) կարող է հիվանդությունն առաջացնել: Բակտերիան կարող է շաբաթներ շարունակ կենսունակ մնալ ջրում և հողում: Տուլարեմիայի գաղտնի շրջանը 3-5 օր է, բայց կարող է տևել նաև 1-14 օր: Մարդկանց մոտ հիվանդության նշանները և ախտանիշները զարգանում են՝ կախված տուլարեմիայով ախտահարման ձևից: Հնարավոր ախտանիշներից են՝ մաշկային խոցերը, ուռած և ցավոտ լիմֆատիկ գեղձերը, բորբոքված աչքերը, կոկորդացավը, ցավերը բերանում, լուծը կամ թոքաբորբը: Թոքաբորբով հիվանդի մոտ կարող են լինել կրծքավանդակի ցավեր, շնչառություն, արյունոտ թքարտադրություն և շնչառության խանգարումներ; տուլարեմիան կարող է ճակատագրական լինել, եթե հիվանդը ժամանակին չստանա համապատասխան հակաբիոտիկներով բուժում:

Աղբյուրը՝ Առողջության և ծառայությունների բաժին: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոններ: Հաճախակի տրվող հարցեր տուլարեմիայի մասին: URL: <http://www.bt.cdc.gov/agent/tularemia/faq.asp>

Այնուամենայնիվ, բավական մեծ թվով պատասխանողների կարծիքով, խմելու ջուրը չի կարող վտանգավոր լինել իրենց առողջության համար: Նրանք աղիքային հիվանդությունների բռնկումները ավելի շուտ բացատրում են սննդի և ոչ թե խմելու ջրի որակով: Պատասխանողների մեծ մասը նույնիսկ ջուրը չի եռացնում խմելուց առաջ: Միայն մի քանի պատասխանող նշում էր, որ իրենք զարնանը խմելու ջուրը եռացնում են, երբ անզեն աչքով նկատելի է լինում ջրի աղտոտվածությունը: Ուսումնասիրությունն, այնուամենայնիվ, ցույց տվեց, որ լուծի բռնկումները հիմնականում տեղի են ունենում ամռանը:

Ֆանտանի բնակիչների սնունդը շատ սահմանափակ է: Յուրաքանչյուր ընտանիք օգտագործում է իր տնտեսությունից ստացված մթերքը, բերքն ու բարիքը, որոնք երբեմն փոխանակում է այլ ապրանքների հետ: Մեկ պատասխանող, որի ընտանիքը ամենաաղքատներից էր, նշում էր, որ իրենք գնում են միայն ձեթ և ալյուր, իսկ միակ կովից ստացած կաթը վաճառում են՝ որպեսզի մի փոքր գումար վաստակեն: Նույնիսկ այդ ընտանիքի երեխաներին թույլ չէր տրվում կաթ խմել: Նրանք սնվում էին լավաշով և թթու դրած կաղամբով (նույնիսկ կարտոֆիլ գնել չէին կարողանում):

Այլ, համեմատաբար բարվոք ընտանիքները կանոնավորապես սնվում էին հացով, կարտոֆիլով և կաթնամթերքով: Թարմ բանջարեղենը և մրգերը որոշ ընտանիքների համար մատչելի են բերքահավաքի շրջանում, բայց շատ տնտեսություններ կատարում են նաև ապրանքափոխանակություն: Որոշ ընտանիքներ կարողանում են ձմռան համար պատրաստել մուրաբաներ, բանջարեղենի պահածոներ, մինչդեռ աղքատ ընտանիքները չունեն նման հնարավորություններ:

Մսի և ձվի սպառումը սահմանափակ է: Պատասխանողները հայտարարում էին, որ իրենք ձու ուտում են ամիսը մեկ անգամ, իսկ միս՝ «միայն տոն օրերին»: Գյուղաբնակների մոտ ընդունված չէ այն կարծիքը, որ իրենց հորատիպ զուգարանները կարող են ազդել առողջության վրա: Կային պատասխանողներ, որոնք, սակայն, կարծում էին, որ զուգարանի տեսակը և ջրահեռացման վիճակը կարող է ազդել իրենց երեխաների առողջության վրա: Շատ քիչ էր այն պատասխանողների թիվը, ովքեր կարծում էին, որ ջրահեռացման վատ վիճակը կարող է ազդել իրենց և տան չափահաս անդամների առողջության վրա: Միևնույն ժամանակ, այդ գյուղաբնակները չէին փորձում նույնիսկ մտածել զուգարանի տեսակը, ջրահեռացման պայմանները փոխելու մասին, որովհետև այդ հարցերի լուծումը համարում են իրենց ուժերից վեր:

Ֆանտանում բավական ցածր է անձնական հիգիենայի մասին իրազեկությունը: Ավելին, նույնիսկ, եթե տվյալ անձը գիտե անձնական հիգիենայի կանոնները, միևնույն է, տարբեր պատճառներից ելնելով, չեն հետևում դրանց (նրանք կամ ուղղակի մոռանում են, կամ չունեն անձնական հիգիենայի միջոցներ, կամ ջուրը մատչելի չէ իրենց համար):

Ֆանտանում պատասխանողների մեծամասնությունը նշում էր, որ իրենք ձեռքերը լվանում են անասունների և գոմաղբի հետ աշխատելուց հետո:

Պատասխանողների 30 %-ը ձեռքերը լվանում է ուտելուց առաջ և միայն 10 %-ն է ձեռքերը լվանում զուգարանից օգտվելուց հետո: Բավական դժվար է որոշել, թե ինչպիսին է մնացած պատասխանողների իրազեկությունն անձնական հիգիենայի մասին, քանի որ նրանք տվել են աղոտ պատասխան, այն է՝ «ցանկացած աշխատանքից հետո» (30 %):

Մեկ հարցվող պատասխանել է հետևյալ կերպ՝ «մենք այնքան շատ գործ ենք ունենում անելու, որ ձեռքերը լվանալու ժամանակ չենք ունենում»:

4.10 Ֆանտանի գլխավոր հիմնախնդիրները՝ պատասխանողների ընկալմամբ

Ֆանտանի գյուղապետի վկայությամբ, գյուղի թիվ մեկ հիմնախնդիրը անվտանգ խմելու ջրի և ոռոգման ջրի մատչելիությունն է: Այս հիմնախնդիրն ընդգծել է պատասխանողների կեսը: Պատասխանողներից ոմանք կարոտով են հիշում այն ժամանակները, երբ իրենց տները միացած էին կոնտրոնացված ջրամատակարարման համակարգին: Պատասխանողներից մեկի կարծիքով, «եթե վերականգնվեր ոռոգման համակարգը, գյուղի յուրաքանչյուր բնակիչ դրանից օգուտ կքաղեր»: Պատասխանողների կարծիքով անհրաժեշտ է լուծել նաև հետևյալ հարցերը.

- Ֆանտան գյուղում ունենալ մանկապարտեզ
- Ունենալ ակումբ՝ երիտասարդների համար (62 %)
- Վերանորոգել և ասֆալտապատել ճանապարհները (25 %)
- Երիտասարդներին ապահովել աշխատանքով (25 %)
- Վերանորոգել դպրոցի շենքը (12.5 %)

Այն հարցին, թե ինչու է հարկավոր մանկապարտեզ ունենալ, եթե գյուղի կանայք մեծ մասամբ տնային տնտեսուհիներ են, մեկ կին-պատասխանող ասաց. «Մեր երեխաները կարիք ունեն հաղորդակցման, նրանք ուղղակի նստում են տանը: Մինչդեռ կան շատ օժտված երեխաներ, որոնց շնորհներն անհրաժեշտ է զարգացնել»: Որպես օրինակ, նրանք պատմում էին այն մասին, որ Ֆանտանի երեխաներից ոմանք հնարավորություն են ունեցել երգելու Հայաստանի հեռուստատալիքներից մեկով (մանկական երգի մրցույթ է եղել): «Նրանք տանն ավելի լավ էին երգում, իսկ տեսախցիկի առջև ամաչում էին և չգիտեին ինչպես պահել իրենց», - ասում էին այդ կանայք: Գյուղի ակումբի անհրաժեշտությունը բացատրվում էր նույն կերպ, ինչ մանկապարտեզինը, միակ տարբերությունն այն էր, որ մանկապարտեզը փոքր երեխաների համար է, իսկ ակումբը՝ դեռահասների ու երիտասարդների, որոնք կարիք ունեն հաղորդակցման և սոցիալական գործունեության մեջ նրանց ներգրավվելու:

4.11 Եզրակացություններ

1. Ծայրահեղ աղքատությունը գլխավոր հիմնախնդիրն է: Ընտանիքների մեծամասնությունը գտնվում է աղքատության շեմից ցած մակարդակում: Աղքատության հիմնական պատճառներն են՝ բարձր գործազրկությունը, աշխատանքի հնարավորությունների բացակայությունը, ցածր թոշակները, հողագործությամբ զբաղվելու անբարենպաստ պայմանները և, որոշ չափով, գյուղի մեկուսացված լինելը: Մարդիկ բավարար զումար չունեն կենսական անհրաժեշտության միջոցների համար /սնունդ, ջրուցում, անձնական հիգիենա/: Նույնիսկ կով ունենալու դեպքում, ընտանիքի անդամներն իրենք չեն սպառում

ստացված մթերքը, որովհետև այն վաճառում են: Գյուղի բնակիչների համար հատկանշական է թերսնուցումը:

2. Գյուղի բնակիչները սահմանափակորեն են օգտվում բուժօժանայությունից: Պատճառը նույնն է՝ առողջապահությունն անվճար չէ, և աղքատության պատճառով մարդիկ չեն կարողանում ոչ այցելել բժշկին, ոչ էլ վճարել նշանակված դեղորայքի համար: Շատ պատասխանողներ գանգատվում են առողջական խնդիրներից:

3. Անվտանգ խմելու ջրից օգվելը խնդրահարույց է: Ֆանտանում կա խմելու ջրի 2 աղբյուր՝ 1-ին աղբյուրն ապահովում է անվտանգ ջրով, բայց գտնվում է գյուղից դուրս և մարդիկ պետք է վճարեն ջրամատակարարման դիմաց, երկրորդ աղբյուրը՝ հին աղբյուրը, ջուրը մատակարարվում է անվճար, բայց ջրի որակը շատ վատ է, իսկ քանակը՝ սահմանափակ ամառ ժամանակ /շատ հաճախ բնակիչները կես ժամ հերթ են կանգնում աղբյուրից ջուր վերցնելու համար/: Աղքատ լինելու պատճառով բնակիչներն ի վիճակի չեն վճարել ապահով խմելու ջրի մատակարարման դիմաց, չվճարման դեպքում աղբյուրն հաճախ անջատվում է: Արդյունքում, գյուղը հույսը դնում է հին աղբյուրի վրա, որի ջուրը խիստ աղտոտված է միկրոօրգանիզմներով:

4. Շատ ցածր է իրազեկությունը անվտանգ խմելու ջրի և մարդու առողջության վրա աղտոտված ջրի ազդեցության մասին: Չնայած վարակիչ հիվանդությունների հաճախակի բռնկումներին, բնակիչների մեծ մասը ջուրը խմելուց առաջ չի եռացնում՝ շատ անգամ ծախսերից խուսափելու համար: Ցածր է իրազեկությունը նաև անձնական հիգիենայի մասին՝ միայն մի քանի պատասխանողներ են նշում, որ լվանում են ձեռքերը արտաքնոցից օգտվելուց հետո:

5. Ոռոգման համակարգի փլուզումը հանգեցրել է ողջ գյուղի աղքատացմանը: Կլիմայական անբարենպաստ պայմանների և ոռոգման ջրի բացակայության հետևանքով գյուղի բնակիչները հարկադրված թողել են դաշտերի, այգիների մշակումը: Քիչ են այն տնտեսությունները, որոնք շարունակում են մշակել հացահատիկ, որը հնձում և չորացնում են՝ որպես անասնակեր կովերի համար, բայց բերքը մեծապես կախված է եղանակից և շատ հաճախ այն լինում է ծայրահեղ ցածր: Ընդհանուր առմամբ, հողագործությամբ զբաղվելը շահավետ չէ, և երբեմն նույնիսկ ընտանիքներն ընկնում են պարտքերի մեջ:

6. Պլաստիկ իրերի այրումը տան ներսում սովորական երևույթ է: Իրազեկության բացակայության և աղքատության պատճառով շատ բնակիչներ պլաստիկ իրերն օգտագործում են որպես վառելիք իրենց վառարանների համար: Որոշ պատասխանողներ նշում են, որ իրենք գիտեն դրանց այրման վնասների մասին, բայց գումար չունեն վառելիք գնելու համար:

7. Աղքատության պատճառով մարդիկ չեն կարողանում բավարար չափով վառելիք ձեռք բերել ցուրտ սեզոնի համար: Չնայած գյուղի 40%-ը գազաֆիկացված է, շատ մարդիկ չեն օգտվում դրանից տաքացման նպատակով, քանի որ այն շատ թանկ է: Գյուղում հիմնական վառելիքը կովի թրիքն է, և հազվադեպ՝ սեփական այգու ծառերի ճյուղերը և այրվող թափոնը: Սա է պատճառը, որ շատ տներ վատ են ջեռուցվում և, արդյունքում, բնակիչների մոտ հաճախակի են դառնում շնչառական հիվանդություններն ու արթրիտը:

8. Ֆանտանի դպրոցի արտաքնոցներն ահավոր վիճակում են և կարիք ունեն շտապ վերակառուցման: Տնօրենն ընդգծում էր, որ արտաքնոցների հարցը դպրոցի համար թիվ մեկ հիմնախնդիրն է:

4.12 Առաջարկություններ

1. Ոռոգման համակարգի վերականգնումն օգուտ կբերի յուրաքանչյուր ընտանիքին: Այն թույլ կտա մարդկանց վերսկսել գյուղատնտեսական արտադրությունը, որի հետևանքով կբարելավվի նրանց ֆինանսական վիճակը: Ահա թե ինչու, առաջարկվում է հավաքել տեղեկություններ նախկին ոռոգման համակարգի և այն մասին, թե ինչ այլընտրանքային աղբյուրներ կան գյուղի ջրամատակարարման համար: Անհրաժեշտ է անցկացնել տնտեսագիտական ուսումնասիրություն /հարցում/ պարզելու համար, թե արդյոք ոռոգման ջուրը մատչելի կլինի սպառողների համար և արդյոք ոռոգման ծախսերը չեն գերազանցի օգուտը:
2. Անհրաժեշտ է կառուցել նոր արտաքնոցներ դպրոցի համար: Տնօրենը պաշտպանում է էկոսան արտաքնոցների ստեղծման գաղափարը: Այդ նպատակով նախ անհրաժեշտ է ճշտել դրանց համար հարմար տեղերը, համաձայնության գալ դրանց հետագա պահպանման շուրջ, նշանակել պատասխանատու անձնակազմ արտաքնոցների պահպանման և աշխատեցման համար: Նաև անհրաժեշտ է աշակերտների համար պատրաստել ուսուցողական նյութեր արտաքնոցներից օգտվելու մասին:
3. Պարզել, արդյոք Ֆանտանում կա աղիքային մակաբույծների խնդիր աշակերտների շրջանում, թեև կարելի է ենթադրել այդ խնդրի առկայության հավանականությունը: Սրանից ելնելով, առաջարկվում է կատարել աշակերտների կղանքի անալիզ մակաբույծների նկատմամբ և ավտահարված երեխաներին տրամադրել դեղորայք և համապատասխան բուժում: Այս տեղեկատվության շնորհիվ հնարավոր կլինի ճշտել կղանքային նյութի պահպանման օպտիմալ ժամկետը կոմպոստացման խցիկներում և այդ կերպ կրճատել դաշտերի վրա ոչ լրիվ մշակված կոմպոստի կիրառման վտանգը: Անհրաժեշտ է նաև պարզել, թե որ տնտեսություններն են շահագրգռված էկոսան արտաքնոցներից ստացված կոմպոստի կիրառման մեջ:
4. Վարակիչ հիվանդությունների բռնկումների հիմնական պատճառը «հին» աղբյուրի ջրից օգտվելն է, որը չի ստանում անհրաժեշտ մշակում: Այդ պատճառով առաջարկվում է պարզել, արդյոք հնարավոր է կառուցել խմելու ջրի ավտահանման կայան՝ հետագայում վարակիչ հիվանդությունների բռնկումներից խուսափելու համար: Հարկավոր է ուսումնասիրել, թե արդյոք ջրամբարը մասամբ կլուծի ջրի պակասի խնդիրը /ջրի ճնշումն ընկնում է խողովակներում/: Բնակիչներին պետք է խորհուրդ տալ ջուրը եռացնել օգտագործելուց առաջ, գոնե նորածինների ու մանկահասակ երեխաների համար: Միևնույն ժամանակ, ջուրը պետք է մատակարարվի նաև «լավ» աղբյուրից, գոնե նվազագույն քանակությամբ խմելու նպատակով, նույնիսկ եթե մարդիկ չեն կարող վճարել դրա դիմաց: «ՀԿՀԱԱՇՄ»-ն պետք է պարզի, թե ինչ օրենքներ են գործում, և ինչպիսին է ջրամատակարարող ընկերության հետ պայմանագիրը: Միևնույն ժամանակ, առաջարկվում է պարզել, թե արդյոք հնարավոր է կառուցել խմելու ջրի մաքրման կայան հենց այդ աղբյուրի համար, որպեսզի խուսափեն հետագայում աղիքային հիվանդությունների բռնկումներից: Այս դեպքում անհրաժեշտ կլինի կատարել հետազոտություն պարզելու համար, արդյոք ջրի այդ ռեզերվուարը մասամբ կլուծի ջրի պակասության հարցը ամռան ամիսներին:
5. Սովորական երևույթ է պլաստիկ իրերի այրումը: Բոլոր պատասխանողների 40 %-ը նշում է, որ իրենք չգիտեն առողջության համար պլաստիկ իրերի այրման վնասակարության մասին: Այդ պատճառով անհրաժեշտ է անցկացնել կրթական քարոզարշավ պլաստիկ նյութերի այրման վերաբերյալ:

6. Ցածր է իրազեկությունը մարդու առողջության վրա սանիտարական վիճակի, հիգիենայի և խմելու ջրի որակի ազդեցության մասին: Այդ նպատակով առաջարկվում է բնակիչներին ապահովել տեղեկատվությամբ խմելու ջրի, էկոմաքրության և առողջ շրջակա միջավայրի մասին: Անհրաժեշտ է պատրաստել և տարածել ուսուցողական նյութեր /բուկլետներ, բրոշյուրներ, պաստառներ և այլն/ տեղեկատվություն տրամադրող անձանց շրջանում (օր.՝ դպրոցի ուսուցիչներ, բուժժառայության աշխատող, գյուղխորհուրդ):
7. Առաջարկվում է ավելի շատ տեղեկատվություն հավաքել աղբանոցի համար հատկացված վայրի մասին: Անհրաժեշտ է պարզել, արդյոք աղբանոցը վտանգ չի ներկայացնում մարդու առողջության համար և ինչպես կարելի է այն բարելավել:
8. Թունաքիմիկատների օգտագործման և դրանց պահպանման մասին գյուղաբնակների իրազեկությունը շատ ցածր է: Բնակիչների մեծ մասը չի օգտագործում պեստիցիդներ, որովհետև գումար չունի դրանք գնելու համար: Այն քիչ թվով մարդիկ, ովքեր կիրառում են պեստիցիդներ, չգիտեն դրանց անվանումները, ճիշտ օգտագործումը և մարդու առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունների մասին: Մեծ է հավանականությունը, որ Ֆանտանում ֆինանսական վիճակի բարելավմանը զուգահեռ զգալիորեն կավելանա պեստիցիդների օգտագործումը: Այդ պատճառով կարևոր է Ֆանտանի բնակիչների շրջանում բարձրացնել իրազեկությունը պեստիցիդների մասին: Անհրաժեշտ է ծավալել տեղեկատվակրթական քարոզարշավ:

5. Ձեռք բերված տվյալներ Ձորաղբյուրի մասին

5.1 Ձորաղբյուր գյուղը

Ձորաղբյուր գյուղը, որը թարգմանաբար նշանակում է «աղբյուրների ձոր», գտնվում է մայրաքաղաքից 14 կմ հեռավորության վրա: Գյուղը պատկանում է Կոտայքի մարզին: Այն ունի մոտ 700 տնտեսություն և մոտ 2500 բնակիչ: Տղամարդկանց և կանանց թիվը գրեթե հավասար է, տղամարդիկ քանակով մի փոքր գերազանցում են կանանց (1022 տղամարդ և 1004 կին): Գյուղի բնակչությունը բավական երիտասարդ է: Ըստ գյուղապետարանի ներկայացուցչի հավաստման, միայն 50-100 տեղաբնակ է թոշակ ստանում: Ձորաղբյուրում չկան փոքրամասնություններ, բացառությամբ 4 ընտանիքի, որոնք Ադրբեջանից գաղթած փախստականներ են:

Շատ հայեր գյուղի անունը կապում են հարուստ և գեղեցիկ գյուղի հետ, քանի որ խորհրդային վերջին տարիներից սկսած Երևանի շատ հարուստներ իրենց ամառանոցներն էին այստեղ կառուցում: Այժմ այս գործընթացի շարունակման գլխավոր պատճառը հողահարկի ներմուծումն է /մոտ &10/հա/, որը ստիպում է աղքատ գյուղաբնակներին վաճառել իրենց հողը, քանի որ դժվարանում են վճարել հողահարկը: Արդյունքում, Ձորաղբյուրում կան շատ տներ, որոնք տարին բոլոր դատարկ են, քանի որ դրանք ծառայում են որպես «ամառանոց»:

Ձորաղբյուրը, թվում է, թե ծրագրում ընդգրկված 3 գյուղերից ամենահարուստն է, բայց, ընդհանուր առմամբ, տեղաբնակներն աղքատ են: Այս գյուղն ապահովված է էլեկտրաէներգիայով, կենտրոնացված գազամատակարարմամբ և տեղի ջրամատակարարման համակարգով: Գյուղապետարանը ամենաաղքատ ընտանիքներին օգնում է փոքր սուբսիդիաներ տրամադրելով, օրինակի համար, խմելու ջրի դիմաց վճարելու կամ դպրոցական դասագրքեր ձեռք բերելու համար:

Ձորաղբյուրի դպրոցում սովորում է 6-ից մինչև 16-17 տարեկան 400 աշակերտ: Հին դպրոցը վերանորոգվել է 3 տարի առաջ պետության ֆինանսական օժանդակությամբ: Դպրոցի առավելություններից մեկն այն է, որ ապահովված է կենտրոնացված ջեռուցմամբ (Կոտայքի մարզում այսպիսի ջեռուցում ունի ընդամենը 3 դպրոց): Ջեռուցման համակարգն այս տարի լրիվ վերանորոգվել է Միացյալ ազգերի «Աղքատության դեմ պայքարի» ծրագրի ֆինանսավորման շնորհիվ: Ձորաղբյուրում մանկապարտեզ չկա, բայց կա հարևան գյուղում:

5.2 Պատասխանողների և նրանց ընտանիքների նկարագիրը

Ձորաղբյուրում իրականացրած ուսումնասիրության ժամանակ 8 «երկար» հարցում են անցկացրել Քիթի Բենթվելսենը և Սոլոմիա Բաբիակը: Հարցազրույցներ են տեղի ունեցել նաև տեղեկատվությանը տիրապետող անձանց, օր.՝ գյուղապետի տեղակալների, դպրոցի տնօրենի և թերապևտի հետ: Հետազայում, ՀԿՀԱԱՇՄ ՀԿ, օգտագործելով Քիթի Բենթվելսենի կազմած հարցաթերթիկները, իրականացրել է 12 «երկար» և 18 «կարճ» հարցում:

Մարդկանց ապրելակերպի վերաբերյալ թվով 20 հարցումից 11-ի ժամանակ հիմնական պատասխանողը եղել է իզական սեռի ներկայացուցիչ, 6 հարցման ժամանակ եղել է արական, իսկ 3 հարցմանը՝ արական և իզական սեռերի ներկայացուցիչները միասին: Պատասխանողների 80 %-ն ունի կամ միջնակարգ կամ մասնագիտական կրթություն, մինչդեռ պատասխանողների 20 %-ն ունի բարձրագույն կրթություն: Երկու պատասխանողների երեխաները ներկայումս ուսանողներ են, մինչդեռ մյուս 2 պատասխանողի երեխաներն արդեն համալսարանական կրթություն ունեն, բայց չեն կարողանում աշխատանք գտնել:

Պատասխանողների կեսն այն ընտանիքներից էին, ուր ապրում էին 3 սերունդների ներկայացուցիչներ: Մի դեպքում 2 երիտասարդ ընտանիք ապրում էր ամուսնու ծնողների հետ: Մյուս երկու ընտանիքները բաղկացած էին ծնողներից, նրանց երեխաներից և ամուսնացած տղայի երիտասարդ ընտանիքից: Պատասխանողների 35 %-ը ներկայացնում էին ծնողներից ու երեխաներից կազմված ընտանիքները:

Երեխաների տարիքը տատանավում էր 3-30-ի սահմաններում: 10 %-ը թոշակառու զույգեր էին, ովքեր ապրում էին իրենց երեխաներից առանձին: Մեկ պատասխանող 4 սերնդի ներկայացուցիչներից բաղկացած ընտանիքից էր: Ամենամեծ ընտանիքի անդամները թվով 10-ն էին, մինչդեռ ընտանիքների անդամների թիվը միջինը չէր գերազանցում 6 հոգուց: Հարցումների մեծ մասն անց է կացվել ընտանիքի այլ անդամների ներկայությամբ:

5.3 Աշխատանք, եկամուտներ և ծախսեր

Աշխատանք

Ձորաղբյուրն աշխատանքի հնարավորությունների տեսակետից թվում է ավելի նպաստավոր, քան ծրագրում ընդգրկված մյուս գյուղերը, սակայն այստեղ իրավիճակը դեռևս շատ ավելի վատ է, քան նախկին խորհրդային տարիներին էր: Ձորաղբյուրին մոտիկ եղել է ռազմական գործարան, և շատ գյուղաբնակներ, ստանալով տեխնիկական կրթություն, աշխատում էին այնտեղ: Գործարանը փակվել է 1993թ., և տեղի բնակիչների համար աշխատանքի քիչ հնարավորություններ են մնացել: Ներկայումս գյուղում կա մրգերի ու

բանջարեղենի պահածոյացման մի փոքրիկ սեզոնային գործարան /մոտ 200 աշխատող/, մի մասնավոր կաթնամթերքի արտադրամաս /12 աշխատող/, գյուղապետարան, բուժկետ և դպրոց: Գյուղի որոշ բնակիչներ աշխատանք են փնտրում Երևանում կամ ունեն փոքրիկ բիզնես (օր.՝ մեկ կին դերձակուհի է և երբեմն կարի պատվերներ է ընդունում տանը):

Ընդհանուր առմամբ, Ձորաղբյուրի բնակչության մեծ մասը չի մեկնել արտերկիր աշխատանք որոնելու/գյուղից հեռացել է ընդամենը 5 ընտանիք/, որովհետև գյուղում սեզոնային աշխատանքի որոշ հնարավորություններ կան /օր.՝ ամառանոցների կառուցում դրսի հարուստների համար/:

20 հարցվող ընտանիքներից միայն մեկ ընտանիքի միակ եկամուտը թոշակառու անդամների նպաստն էր: 3 այլ ընտանիքների անդամները գործազուրկ էին և փորձում էին գումար վաստակել հողագործությունից կամ անասնապահությունից ստացված մթերքների վաճառքից:

Եկամուտներ

Ձորաղբյուրում պատասխանողների եկամուտները խիստ տարբեր էին: Մեկ անձի ամսեկան ամենացածր եկամուտը 2500 դրամ է (5 ամ. դու.), իսկ ամենաբարձրը՝ 32 500 դրամ (65 ամ. դու.): Ստորև բերված աղյուսակում ներկայացված է 18 պատասխանողների եկամուտների համեմատականը:

Աղ. 5.1 Ձորաղբյուրի ընտանիքների եկամուտների համեմատականը

	Մեկ շնչի ամսեկան եկամուտը (դրամ/ամ.դու.)	Ընտանիքների թիվը
1	Մինչև 10 000 դրամ/20ամ.դու.	10
2	10 000 – 20 000 դրամ/40 ամ. դու.	5
3	20 000 – 30 000 դրամ/60 ամ. դու.	1
4	30 000 դրամից ավել /60 ամ. դու.արից ավել	2

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պատասխանողների 90 %-ը (տես աղ. 5.1, 1-3 պատասխանողները) աղքատության շեմից ցած են գտնվում:

Ծախսեր

Ձորաղբյուրի ընտանիքների հիմնական ծախսերը կազմում են սննդի, վառելիքի, էլեկտրաէներգիայի, ջրի և հագուստի համար կատարած վճարումները:

Պատասխանողների 83 %-ից ավելին նշում էր, որ իրենց եկամտի 50 % և ավելին ծախսվում է սննդի վրա, մինչդեռ մոտ 17 %-ը սննդի համար ծախսում է եկամտի 1/3-ը: Համեմատաբար բարվոք ընտանիքներում սննդի վրա ծախսվում է եկամտի ավելի պակաս մասը: Երկրորդ, ամենակարևոր ծախսը պահանջում է վառելիքը (գազ, բալոնով գազ և փայտ): Ըստ գյուղապետարանի աշխատակիցների վկայության, ձմռանը ամբողջ տունը բնական գազով տաքացնելու համար ընտանիքը պետք է ամսեկան ծախսի մոտ 90 000 դրամ: Ամռան ամիսներին սպառած բնական գազի դիմաց կատարվող ծախսերը համեմատաբար քիչ են (1500 – 5000 դրամ/ամիս), ձմռանն այդ ծախսերը զգալիորեն ավելանում են (5000 – 50 000 դրամ/ամիս): Ամենահարուստ ընտանիքներն ամենաբարձր վարձավճարներն են մուծում, իսկ ավելի աղքատներն աշխատում են խնայել: Ընտանիքներին շատ բնորոշ է այն, որ ձմռանը տան սենյակներից մեկն է տաքացվում: Շատ պատասխանողներ նշում էին, որ իրենք տունը տաքացնելու նպատակով օգտագործում են նաև գոմաղբ կամ փայտ (իրենց այգիների

ծառերից): Որոշ ընտանիքներ լրացուցիչ գնում են փայտ կամ փայտյա տաշեղներ և սեզոնի ընթացքում ծախսում են մոտ 15 000 – 20 000 դրամ: Էլեկտրաէներգիայի ծախսերն ամսեկան տատանվում են 1000 – 7000 դրամի սահմաններում, ծնռանն էլեկտրաէներգիան ավելի շատ է սպառվում: Նշված այլ ծախսերից են խմելու ջրի վարձավճարը (1000-1600 դրամ/ամիս), ոռոգման ջրինը՝ 4-5000 դրամ/ամիս սեզոնի ընթացքում, դեղորայքի համար՝ 2000-10 000 դրամ/ամիս, փոխադրամիջոցի ծախսերը (700 դրամ/օր՝ Երևան հասնելու համար), դպրոցական ծախսերը, գյուղատնտեսական ներդրումների, անասնակերի ծախսերը:

5.4 Սեռերի դերաբաշխումը

Այն հարցին, թե որոնք են ընտանիքում տղամարդու հիմնական պարտականությունները, տրվեցին տարբեր պատասխաններ: Ամենից հաճախ հնչող պատասխաններն էին՝ «փող վաստակել ընտանիքը պահելու համար», «անասնապահությամբ և հողագործությամբ զբաղվել», «տունը վերանորոգել», «ցախ կոտրել, վարանը վառել», և նույնիսկ «գնումներ կատարել»: Ընտանիքներում կնոջ պարտականությանը վերաբերող հարցին հարցվողների մեծ մասը պատասխանում էր ընդհանուր արտահայտությամբ, այն՝ «տան գործերը կատարել (և երեխաների խնամել)»: Մեկ պատասխանող նշում էր, որ կնոջ գործերից մեկն էլ «կովը կթելն է ու պանիր պատրաստելը»:

5.1 Ձորաղբյուրի դպրոցի տնօրենի կարծիքը սեռային դերաբաշխման մասին Հայաստանում և մասնավորապես՝ իր գյուղում

Գյուղի դպրոցի տնօրենի կարծիքով, Հայաստանում կանայք և տղամարդիկ հավասար չեն: Աղջիկներն ավելի պատասխանատու են իրենց ուսման համար: Նույնիսկ եթե տղաներն ավելի օժտված են, միևնույն է, աղջիկներն ավելի լավ արդյունքերի են հասնում, որովհետև ավելի համառ են: Տնօրենը կարծում էր նաև, որ կանայք ընդհանրապես տղամարդկանց համեմատ ավելի պատասխանատու են: Ավանդաբար տղամարդիկ ավելի շատ իրավունքներ ունեն: Կանայք պետք է շատ գիտելիքներ ունենան, լինեն իրազեկ, որպեսզի որևէ դիրք ունենան հասարակության մեջ: Արդյունքում, ստացվում է այնպես, որ կանանց հնարավորություններն ավելի քիչ են (օր.՝ ՀՀ Ազգային ժողովում ընդամենը 4 կին պատանավոր կա): Այնուամենայնիվ, մեր օրերում, կանայք աշխատանքի ավելի շատ հնարավորություններ ունեն, քանի որ նրանք ավելի աշխատասեր են: Բայց, միևնույն ժամանակ, շատ տղամարդկանց համար անընդունելի է այն, որ իրենց կանայք ավելի հաջողակ են, քան իրենք: Տնօրենը սիրում է քաջալերել դպրոցական աղջիկներին, բայց բավական թվով ուսուցիչներ չեն խրախուսում տնօրենի հայացքները: Նա գանգատվում էր, որ երբեմն լսում է, թե ինչպես իր ուսուցիչներից մեկը հարցնում է. «Ինչու է այս աղջիկն այսքան ակտիվ»:

40 % ընտանիքներում տան գումարի ծախսման վերաբերյալ որոշումները կայացնում են հիմնականում տղամարդիկ, 30 % ընտանիքներում՝ կանայք (երբեմն՝ սկեսուրը):

Գյուղի մակարդակով որոշումները կայացնում է գյուղապետը, գյուղխորհրդի քարտուղարը և ավագանու 6 անդամները: Բոլոր թվարկված պաշտոնները զբաղեցնում են տղամարդիկ: Զարմանալի էր այն, որ սեռերի ավանդական

դերաբաշխումն ավելի զգալի էր Ձորաղբյուրում, որը, ծրագրում ընդգրկված մյուս գյուղերի համեմատ, Երևանին ամենամոտ գյուղն է:

5.5 Համայնքի մասնակցությունը և սոցիալական ցանցը

Ձորաղբյուրի բնակիչների հավաստմամբ, գյուղում սոցիալական գործունեության համար շատ հնարավորություններ չկան: Նախկին խորհրդային տարիներին գյուղում կար գրադարան և մշակույթի ակումբ, բայց վաղ 1990-ականներին դրանք փակվել են: Ձորաղբյուրում կա եկեղեցի, որը վերանորոգման կարիք ունի, այդ պատճառով այն չի գործում: Ներկայումս մարդիկ ուղղակի գնում են այնտեղ մոմ վառելու և աղոթելու համար: Վերանորոգվելուց հետո, եկեղեցին կվերսկսի իր աշխատանքը:

Ինչևէ, դպրոցի յուրաքանչյուր դասարան ունի իր ծնողկոմիտեն (18), կա նաև դպրոցական կոմիտե ողջ դպրոցի համար, որի կազմում ընդգրկված են ծնողական կոմիտեների ղեկավարները: Որպես կանոն, ամեն շաբաթ օր ծնողները գալիս են դպրոց՝ դասասենյակները մաքրելու և ախտահանելու համար: Տարվա ցուրտ շրջանում դպրոցի շենքի ջեռուցման համար ծնողկոմիտեները գումար են հավաքում:

5.2 Ձորաղբյուրի դպրոցը

2005թ. Ձորաղբյուրի դպրոց էր հաճախում 6-17 տարեկան 400 աշակերտ (10 դասարան՝ 182 տղա և 218 աղջիկ): Հայաստանի օրենսդրության համաձայն, կրթությունը պարտադիր է մինչև 9-րդ դասարանը: 8-րդ դասարանն ավարտելուց հետո աշակերտների մեծ մասը շարունակում է հաճախել դպրոց, սակայն տնօրենը բողոքում էր, որ բարձր դասարանների աշակերտները տնային առաջադրանքները չեն կատարում: Դպրոցն ավարտելուց հետո մոտ շրջանավարտների մոտ 70 %-ը ցանկություն ունի կրթությունը շարունակելու: Ցավոք սրտի, շրջանավարտների միայն 30 %-ն է ընդունվում առևտրական քոլեջ կամ համալսարան: Մնացած երիտասարդները, ԲՈՒՀ-ի ուսման վարձը վճարելու հնարավորություն չունենալու պատճառով, չեն դիմում ԲՈՒՀ:

Դպրոցի շենքը վերանորոգված է: Դպրոցն ունի կենտրոնացված ջեռուցում:

Դպրոցը գեղեցիկ է ու տաք: Կանանց և տղամարդկանց համար կան հոսող ջրով գործարկվող զուգարաններ (և աշակերտների, և ուսուցիչների համար):

Ձուգարանների կեղտաջրերը թափվում են ձորը:

Դպրոցն ունի համակարգչային գեղեցիկ դասասենյակ և լավ դահլիճ՝ բեմահարթակով և կինոթատրոնի աթոռներով: Դպրոցի ամենամեծ հիմնախնդիրը փոքր բյուջեն է, որը տարեց-տարի կրճատվում է: Բյուջեն հաշվարկվում է՝ հիմնվելով աշակերտների թվի վրա, այսինքն, եթե փոքր է աշակերտների թիվը, փոքր է նաև բյուջեն: Դժբախտաբար, Ձորաղբյուրում ծնելիությունը մշտապես նվազում է և այժմ ամենացածրն է վերջին 35 տարիներին (օր.՝ 2004թ. ծնվել է ընդամենը 15 երեխա): Սրանով է բացատրվում այն փաստը, որ այժմ ավելի շատ աշակերտներ են ավարտում, քան ընդունվում են դպրոց: Ներկայումս առաջին դասարանում սովորում է 35 աշակերտ, բայց 4 տարի հետո դրանց թիվը կհասնի 7-ի:

Այժմ դպրոցի բյուջեն ծախսվում է միայն աշխատավարձերի ու սոցիալական հարկերի վճարումների վրա: Միևնույն ժամանակ, դպրոցն ի վիճակի չէ վճարել սպառած գազի դիմաց: (օր.՝ 400 000 դրամ/ամիս տարվա ցուրտ շրջանում):

Բարեբախտաբար, գյուղապետն օգնում էր և այդ ողջ գումարի կեսը վճարում էր:

Գյուղապետը ծանրաբեռնված ընտանիքների 39 աշակերտի համար նաև ձեռք է բերել 125 000 դրամի արժողության դպրոցական դասագրքեր: Դպրոցը օգնության ակնկալիքով դիմել է նաև որոշ մեծահարուստների: Անհրաժեշտ է թարմացնել դպրոցի դիդակտիկ պարագաները: Դպրոցին հարկավոր են քարտեզներ, լաբորատոր սարքավորումներ, կահույք և այլն:

Պատասխանողների 45 %-ը նշում էր, որ իրենք կամ իրենց ընտանիքի անդամները ներգրավված են կամ ներգրավված են եղել գյուղի սոցիալական գործունեությունում, օր.՝ ծնողկոմիտեի կամ եկեղեցու աշխատանքներում: Մի պատասխանող գյուղխորհրդի անդամներից մեկի ընտանիքից էր, իսկ մեկ այլ պատասխանող ուսուցիչ էր, այդ պատճառով ակտիվորեն ներգրավված էր սոցիալական բնույթի աշխատանքներում:

Պատասխանողների 2/3-ը հայտարարում էր, որ պատրաստ է անդամակցել գյուղում ստեղծվելիք հանրային կոմիտեին, որի նպատակն է քննարկել գյուղի հիմնախնդիրները և գտնել դրանց համար համապատասխան լուծումներ: Մի կին ասում էր, որ ինքը շատ կցանկանար դառնալ այդպիսի կոմիտեի անդամ, սակայն վախենում է, որ ամուսինը թույլ չի տա, որովհետև շատ խանդոտ է և թույլ չի տախ տանից հաճախ բացակայել: Մեկ այլ պատասխանող նույապես ցանկություն հայտնեց մասնակցել կոմիտեի աշխատանքներին, սակայն, քանի որ ինքը սեզոնային աշխատանքով է զբաղված, ցավոք սրտի, կկարողանա մասնակցել կոմիտեի հավաքներին միայն ձմռանը:

Պատասխանողներից մեկը դժգոհում էր գյուղում ավագանու ընտրությունների անցկացումից, ասելով, որ դրանք դեմոկրատական բնույթ չեն կրում և կարծես թե կա նախնական պայմանավորվածություն, թե ով պետք է դառնա ավագանու անդամ հաջորդ ընտրությունների ժամանակ: Հայտնվում էր նաև այն կարծիքը, որ գյուղապետարանն աշխատում է ոչ թե գյուղի, այլ սեփական շահերի համար: Ահա թե ինչու էր տվյալ պատասխանողը ցանկանում դառնալ կոմիտեի անդամ: Որոշ պատասխանողներ, որպես կոմիտեի անդամի թեկնածու, նշում էին նախկին գյուղապետի, գյուղխորհրդի քարտուղարի կամ այդ ժամանակվա ավագանու անդամներից մեկի անունները: Կարելի էր ենթադրել, որ Ձորաղբյուրում գաղտնի պայքար է գնում իշխանության համար:

Ձորաղբյուրի բնակիչներին ուղղված այն հարցին, թե հարազատներից ու բարեկամներից ովքեր են օգնում կարիքի դեպքում, հարցվողների 39 % -ը պատասխանում էր, որ անհրաժեշտության դեպքում իրենք կարող են դիմել գյուղապետի օգնությանը, 28 % -ը՝ իրենց բարեկամներին կամ երեխաներին, 17 % -ը՝ ոչ ոքի, իսկ 11 % -ը՝ հարևաններին:

5.6 Հող և հողագործություն

Հողի սեփականության իրավունքը

Խորհրդային տարիներին Ձորաղբյուրի հողը, ինչպես Հայաստանի ցանկացած այլ վայրում, պատկանում էր տեղի կոլտնտեսությանը: Վաղ 1990-ականներին, համաձայն տեղական կառավարության որոշման, հողը բաժանվեց գյուղաբնակների միջև: Ձորաղբյուրում հողատարածքը կազմում էր 0.5-0.6 հա և լրացուցիչ 0.1 հա տնամերձ հողամասի համար: Ներկայումս գյուղում չկան խոշոր ֆերմերներ: Առավելագույն հողաբաժինը կազմում է 5 հա-ից ոչ ավել: Կա նաև

մասնավոր ֆերմա (ֆերմայի տերը ինչ-որ կերպ մասնավորեցրել է կոլտնտեսության ֆերման), որն ունի 400 կով, բայց չունի հողակտոր: Մեծահարուստները գնել են գյուղի արտավայրերը ամառանոցային տներ կառուցելու համար, որի պատճառով գյուղաբնակները զրկվել են իրենց անասուններին արտավայրեր տանելու հնարավորությունից: Հողահարկ մտցնելուց հետո (10 ամ. դոլ./հա), շատ բնակիչներ, չկարողանալով վճարել այդ ծախսերը, ուղղակի վաճառել են իրենց հողերը:

Գյուղատնտեսական արտադրություն

Նախկին խորհրդային տարիներին կոլտնտեսությունը հիմնականում զբաղված էր մրգի արտադրությամբ: Գյուղում եղել են մեծ մրգատու այգիներ, որոնք բարձր բերք են ապահովել: Սակայն, վաղ 1990-ականներին էներգետիկ ձգնաժամի պատճառով ոռոգման համակարգը դադարել է գործել, և մրգատու այգիների մեծ մասը չորացել է և օգտագործվել՝ որպես վառելանյութ:

Ձորաղբյուրը, համեմատած ծրագրում ընդգրկված մյուս գյուղերի հետ, ունի մեծ ներուժ հողգործության զարգացման համար: Հողն այստեղ բերրի է:

Տնտեսությունների մեծ մասն ունի հացահատիկի դաշտեր, խոտհարք և տնամերձ այգիներ և/կամ բանջարանոցներ: Եթե տվյալ տնտեսությունն ապահովված է ոռոգման ջրով, ապա աճեցնում է լոլիկ, լոբի, վարունգ, կաղամբ, կարմիր պղպեղ և այլն, երբեմն՝ կարտոֆիլ: Տնամերձ այգում որոշ ընտանիքներ ունեն խնձորի, բալի, սալորի, ընկույզի, ծիրանի ծառեր, աճեցնում են արքայամորի և պնդուկ: Մարդիկ իրենց տնամերձից ստացված բերքը հիմնականում օգտագործում են սեփական կարիքների համար: Ձորաղբյուրի բնակիչներին բնորոշ է մրգերի և բանջարեղենի պահածոյացումը՝ ձմռանն օգտագործելու համար:

Որոշ եկամուտ, այնուամենայնիվ, մարդիկ ստանում են հատիկավոր մշակաբույսերի մշակումից: Ամենից շատ մշակվող բույսերից է ցորենը, բայց պատասխանողներից մեկը նշում էր, որ գարին ավելի եկամտաբեր է և, որպես օրինակ, նշում էր նախորդ տարվա իր ստացած բերքի քանակը՝ 500 կգ/հա ցորեն և 900 կգ/հա գարի:

Միևնույն ժամանակ, 25 % պատասխանողներն հայտարարում էին, որ իրենք այլևս չեն զբաղվում հողերի մշակությամբ, իսկ 37 %-ը նշում էր, որ իրենք ունեն չհերկած հողակտորներ (հողաբաժնի 35-50 %): Հիմնական պատճառը ոռոգման բացակայությունն է և/կամ անհրաժեշտ ներդրումների բարձր գները: Օրինակի համար, մեկ պատասխանողի վկայությամբ, 1 հա հող վարելու համար տրակտորավարին պետք է վճարել 8000 դրամ, կոմբայնավարին՝ 15 000 դրամ: Արդյունքում, վաճառած բերքից ստացված եկամտի կեսը հազիվ ծածկում է տրակտորի և կոմբայնի համար կատարած ծախսերը, չհաշված սերմերի, պարարտանյութերի ձեռք բերման ծախսերը: Միևնույն ժամանակ, բերքատվությունը, կախված եղանակային պայմաններից, հատկապես, անձրևների պակասի դեպքում, կարող է ցածր լինել:

Քիմիական պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործումը

37 բնակիչի հարցում էարվել դաշտերում և տնամերձ հողամասերում քիմիական պարարտանյութերի օգտագործման մասին: Պատասխանողների 40 % -ը նշում էր, որ իրենք անպայման օգտագործում են քիմիական պարարտանյութեր բանջարաբուստանային կուլտուրաների և ցորենի համար: Դաշտերում և/կամ այգիներում օգտագործվող պարարտանյութերի քանակը տատանվում է 20կգ/հա

- 280կգ/հա սահմաններում: Միաժամանակ, բոլոր պատասխանողներն ասում էին, որ իրենք ագրոտական պարարտանյութից բացի ոչ միայն քիմիական պարարտանյութ չեն օգտագործում: Շատ քիչ էին այն պատասխանողները, ովքեր օգտագործում էին և քիմիական, և օրգանական պարարտանյութեր (չորացրած գոմաղբ):

Քիմիական պարարտանյութերը բավական թանկ են, ահա թե ինչու, գյուղապետարանը գյուղի այն բնակիչներից, ովքեր ցանկանում են հանքային պարարտանյութեր գնել ավելի էժան գներով, գումար է հավաքում և պատվիրում մատակարարներին:

Ձորաղբյուրում թունաքիմիկատների օգտագործումը տարածված է: 45 % պատասխանողներ պեստիցիդներն օգտագործում են տարին մեկ կամ երկու անգամ իրենց այգիներում: Ամենից շատ օգտագործում են միջատասպան նյութեր թրթուրների ուտիճների դեմ: Մի քանի պատասխանող օգտագործում էր նաև առնետասպան միջոցներ: Միջատասպան նյութերից ամենից հաճախ օգտագործվում են B-58-ը և «Karate»-ն: Այս երկու պեստիցիդները, ըստ վտանգավորության աստիճանի, պատկանում են 2-րդ դասին (հնարավորության դեպքում, պետք է խուսափել դրանց օգտագործումից): Այլ պեստիցիդներից հիշատակվում էին «Tzimbuzh», «Arevo» և «Chlorophos» (քաղցկեղածին, քոլինէսթերազի ինհիբիտոր):

43 % պատասխանողները, ովքեր օգտագործում են պեստիցիդներ, հայտարարում էին, որ այդպիսի նյութերի հետ աշխատելիս նրանք հագնում են պաշտպանիչ արտահագուստ, իսկ ընդհանրապես պաշտպանիչ միջոցներ չօգտագործող պատասխանողների (57 %) 1/4-ը գանգատվում էր ինքնազգացողությունից, հիմնականում՝ գլխացավից, որն ունենում են սովորաբար պեստիցիդներով սրսկումներ կատարելուց հետո:

Անասնապահություն

Գյուղապետարանի ներկայացուցիչների ներկայացրած տվյալների համաձայն, տնտեսությունների 70 %-ն ունի խոշոր եղջերավոր անասուններ: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ պատասխանողների 46 %-ը պահում է առնվազն 1 կով (առավելագույնը՝ 3 կով), մինչդեռ մնացած 54%-ը ընդհանրապես կով չունի: Ըստ պատասխանողների տվյալների, կովն օրական տալիս է 4-10 լ կաթ: Առավել հաճախ նշվող քանակը օրական 6լ-ն էր: Մի աղքատ պատասխանող նշում էր, որ իր ընտանիքի միակ եկամուտն առաջանում է տարին մեկ անգամ հորթի մսի վաճառքից: Պատասխանողների մեծ մասը կաթնամթերքն օգտագործում է սեփական կարիքների համար: Կաթնամթերքի վաճառքն այս գյուղում այնքան տարածված չէ, որքան ծրագրում ընդգրկված մյուս գյուղերում: Անասնապահության զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրը արոտավայրերի բացակայությունն է: Որոշ ընտանիքներ ունեն խոտհարքներ (մոտ 1-3.5 հա), այլ տնտեսություններ վարձակալում են իրենց հարևանների խոտհարքները և իրենք էլ հնձում են խոտը: Սովորաբար ընտանիքները 10 հավից ավել չեն պահում: Շատ քիչ էին այն պատասխանողները, ովքեր հնդկահավ են պահում: Ձորաղբյուրում ընդունված չէ խոզ, ոչխար կամ այլ անասուններ պահելը: Գյուղն ունի անասնաբույժ: Վերջինս հսկում է կենդանիների առողջական վիճակը և կատարում է պատվաստումներ:

5.7 Ձրի աղբյուրներ, որակը և օգտագործումը

Ջրի աղբյուրները և ջրի որակը

Անցյալում Ձորաղբյուրում կար 18 բնական աղբյուր, որի պատճառով գյուղը ստացել է «աղբյուրների ձոր» անունը: Սակայն, վերջին 30-50 տարիներին աղբյուրների մեծ մասը մասնավոր տներ կառուցելիս մնացել է հողի տակ: Ներկայումս մնացել է ընդամենը 5 աղբյուր: Ավելին, 3 աղբյուր գտնվում է ավելի ցածր մակարդակում, քան գյուղը, ահա թե ինչու գյուղաբնակներին ջրով ապահովելու համար տեղադրվել են պոմպեր: Այնուամենայնիվ, խմելու ջուրը մշակման չի ենթարկվում:

Համաձայն գյուղապետի վկայության, բոլոր տնտեսությունները խողովակներով միացած են ջրի աղբյուրներից մեկին: Շատ դեպքերում ջուրը խողովակներով հասցվում է մարդկանց տները: Գլխավոր փողոցի վրա կա նաև հանրային օգտագործման մեկ ջրածորակ:

Խմելու ջրի որակն ամեն ամիս ստուգվում է «Հայջրմուղ» ջրային պետական ընկերության կողմից: Երբ խմելու ջուրը խիստ աղտոտվում է, հատկապես անձրևոտ եղանակներին, «Հայջրմուղ»-ի աշխատողները քլորացնում են ձեռքի սարքավորման միջոցով: Ըստ որոշ պատասխանողների, այնուամենայնիվ, ընկերությունն այնքան էլ հետաքրքրված չէ արդյունքների հետազոտմամբ, բայց ջրի որակի վատթարացման դեպքում ընկերությունը տեղյակ է պահում տեղի բնակիչներին և խորհուրդ է տալիս եռացնել ջուրը: Այնուամենայնիվ, այս գյուղում ձմռանը հաճախակի են վարակիչ հիվանդությունների, հատկապես լուծի բռնկումները, նույնիսկ՝ ձմռան ամիսներին: Խմելու ջրի միկրոկենսաբանական խիստ աղտոտման գլխավոր պատճառը խմելու ջրի աղբյուրների շուրջ պաշտպանական գոտիների բացակայությունն է: Ավելին, սովորական երևույթ է ջրաղբյուրների մոտ գոմաղբի կույտերի և դրենաժային առուների գտնվելը: Ըստ բուժկետի բժշկի՝ ջուրը «Յաթախ»-ի աղբյուրներից մեկից պոմպով մղվում է մասնավոր տների բակերի միջով, որտեղ գտնվում են հորատիպ արտաքնոցները, և, հետևաբար, ջուրը կարող է հեշտությամբ աղտոտվել կղանքով: Այս աղբյուրի ջրի որակը միշտ վատ է՝ colli ինդեքսը վատ արդյունքներ է ցույց տալիս և ջրի օրգանական նյութերի պարունակությունը խիստ բարձր է:

5.3 Ջրամատակարարումը Հայաստանում

Հայաստանում ջրի պաշարների 95.5 % -ը գրունտային ջրեր են, որոնց որակը ամենուր նույնն է: Այն վայրերում, ուր ջրամատակարարումը ուղղակի աղբյուրից է, ջրի որակը սովորաբար բավարարում է թե պետական, թե ԱՀԿ-ի ստանդարտներով նախատեսված օրգանոլեպտիկ, թունաբանական և միկրոկենսաբանական պահանջները: Համարյա բոլոր քաղաքաբնակ և գյուղաբնակ վայրերում, չնայած ջրի բավարար քանակությանը, ջուրը մատակարարվում է գրաֆիկով, օրական 2-6 ժամ: Սա բացատրվում է ջրի խողովակների ցանցի անբավարար վիճակով: Հայաստանում ջրամատակարարման խողովակների համարյա կեսը ճնշումային ջրատարներ են, որոնք գործում են ընդհատումներով: Ջրամատակարարումը հաճախակի ընդհատվում է՝ էլեկտրաէներգիայի բարձր գների պատճառով: Բացի այդ, քանի որ խողովակները մաշված են, բաշխիչ ցանցում ջրի մեծ կորուստ է լինում: Վերոհիշյալ պատճառներով, կենտրոնացված ցանցից մատակարարվող ջուրը հաճախ չի համապատասխանում միկրոկենսաբանական ստանդարտներին, այդ պատճառով ջուրը աղբյուրից մինչև սպառողին հասնելը, ենթարկվում է

երկրորդային աղտոտման: Առողջության համար աղտոտված ջրի վտանգավորության աճն արտահայտվում է ոչ թե աղիքային վարակների պատճառով ընդհանուր հիվանդացության աճով, այլ ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների բռնկումներով, որոնք կարող են ազդել մեծ թվով մարդկանց առողջության վրա:

Աղբյուրը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ) 2001: Լուսաբանումներ առողջապահության վերաբերյալ Հայաստանում: Էլեկտրոնային տարբերակ:
<http://www.euro.who.int/document/e72377.pdf>

Համարյա բոլոր պատասխանողները դժգոհ են խմելու ջրի որակից և մատակարարումից: Բնակիչները գանգատվում են ամռանը խմելու ջրի վատ մատակարարումից: Ջուրը երբեմն օրական տալիս են 1-2 ժամով, իսկ ընտանիքների 30 %-ը, որ ապրում են ջրի աղբյուրից հեռու, բոլորովին ջուր չեն ստանում: Գյուղապետարանում, այնուամենայնիվ, նշում են, որ իրենք ստիպված են կրճատել ջրամատակարարման ծավալը՝ ամռան ամիսներին էլեկրաէներգիայի ծախսերը նվազեցնելու համար /քանի որ ջուրը մղվում է պոմպով, ձմռանը չեն անջատում, որովհետև ջուրը կարող է սառչել խողովակներում և վնասել դրանք/: Քիչ պատասխանողներ էին նշում, որ իրենք տանը ջուր են հավաքում լոգարաններում, կաթսաներում (երբ գրաֆիկով ջուր են տալիս), կամ գնում են ջուր բերելու ձորի աղբյուրից, որը գտնվում է տանից մոտ 500 մ հեռավորության վրա (ջրամատակարարումն ընդհատելու դեպքում): Բնակիչները հիմնականում դժգոհում էին խմելու ջրի պղտորությունից, հատկապես՝ գարնանը, քլորի սուր հոտից, ջրի մուգ գույնից և խիստ աղտոտվածությունից: Մի պատասխանող գանգատվում էր, որ կոյուղաջրերը խառնվում են խմելու ջրի հետ, իսկ 3 պատասխանողի վկայությամբ, խմելու ջրում նույնիսկ որդեր են հայտնաբերվել:

Ջրի օգտագործումը

Քանի որ տների մեծ մասը միացած է ջրամատակարարման համակարգին, հետևաբար այս գյուղում ջուրն ավելի շատ է օգտագործվում, քան Ֆանտանում և Հայանիստում: Օրինակի համար, պատասխանողների 76 % -ն ունի հոսող ջրով գործարկվող զուգարաններ, 72 % -ն օգտվում է ցնցուղից կամ բաղնիքից:

Տնտեսությունների 55 % - ն ունի հին լվացքի մեքենա: Ջրի սպառումը ձմռան ամիսներին, այնուամենայնիվ, նվազում է, քանի որ ջրի և կոյուղու խողովակները կարող են սառչել և պայթել, որի պատճառով տեղաբնակները խուսափում են ձմռանը խմելու ջրի և կոյուղու օգտագործումից: Այդ պատճառով, պատասխանողների մեծամասնությունը հայտարարում էին, որ իրենք տան ներսում գտնվող հոսող ջրով գործարկվող զուգարանից բացի, ունեն հորատիպ զուգարան բակում, որից օգտվում են ձմռանը: Իրավիճակը նույնն է լողասենյակների առումով: Ձմռան ամիսներին մարդիկ նախընտրում են լողանալ մեծ տաշտերում/լոգարաններում:

Ջրի սպառումն իր գագաթնակետին է հասնում ամռանը, երբ հակառակի պես, տարվա այդ եղանակին գյուղապետարանը փորձում է էլեկտրաէներգիայի խնայողություններ անել՝ անջատելով պոմպերը: Ջրամատակարարումը կրճատվում է, հասնելով օրական մի քանի ժամի: Ահա թե ինչու, երբ միացվում է ջրամատակարարումը, մարդիկ փորձում են հնարավորինս շատ ջուր հավաքել այդ ժամերին: Որոշ տնտեսություններ նույնիսկ այգիներն են ոռոգում այդ ջրով:

Արդյունքում, այն տները, որոնք գտնվում են աղբյուրից հեռու, ամենից շատն են տուժում (պատահում է, որ նույնիսկ ընդհանրապես ջուր չեն ստանում):

Ոռոգման ջուրը

Խորհրդային տարիներին գյուղում եղել է զարգացած ոռոգման համակարգ, գյուղում եղել են մեծ մրգատու այգիներ: Սակայն, վաղ 90-ականներին ոռոգման համակարգը դադարել է գործել ողջ երկրում էլեկտրաէներգիայի պակասի պատճառով, և մրգատու այգիների մեծ մասը չորացել է: Մոտ 10 տարվա ընդհատումից հետո էլ այն դեռևս չի գործում: Շատ տնտեսություններ թողել են իրենց դաշտերի և այգիների մշակումը: Ներկայումս 700-ից միայն 50-60 տնտեսություն է ի վիճակի ոռոգելու իրենց այգիները, որտեղ աճեցնում են բանջարեղեն գուտ անձնական սպառման համար: Ոռոգման ջուրը մատակարարվում է արհեստական լճից, որի մեջ են թափվում դրենաժային առուների կեղտաջրերը: Որոշ ընտանիքներ փորձում են ոռոգել իրենց այգիները խմելու ջրով, և, հավանաբար, դա է պատճառը, որ տների մի մասը ամռանը ջուր չի ստանում: Արժե նշել, որ խմելու ջրի համար վճարում են ամսեկան որոշակի հաստատված գումար, և հաշվի չի առնվում օգտագործված ջրի քանակը, այդ պատճառով էլ ոռոգման նպատակով խմելու ջրի շատ օգտագործումը չի մեծացնում ընտանիքի կողմից վճարվելիք ջրի վարձավճարը: Շատ պատասխանողներ նշում էին, որ իրենք ոռոգում ունենալու դեպքում կկարողանան շատ բույսեր մշակել:

5.8 Ջրահեռացում և թափոնների հեռացում

Ջրահեռացում

Չնայած գյուղի բոլոր տները ջրագիծ ունեն և տների 85 %-ն ունի հոսող ջրով արտաքնոցներ, գյուղում չկա կոյուղացված համակարգ: Տների 60%-ը ունի սեպտիկ տարողություններ, որոնք չեն դատարկվում և տեղի է ունենում ինֆիլտրացիա մակերեսային ջրերի մեջ: Տների մնացած 20-25%-ն իրենց կեղտաջրերը թափում են դրենաժային առուները, որտեղից էլ դրանք թափվում են արհեստական լճակը: Դրենաժային առուներն անցնում են գյուղի միջով և շատ մոտ են գտնվում ջրի աղբյուրներին: Օրինակի համար, լճակից մի քանի մետր հեռավորության վրա դրենաժային առուն անցնում է հենց խմելու ջրի աղբյուրի կողքով: Ահա թե ինչու էին տեղաբնակները դժգոհում կոյուղու համակարգի բացակայությունից և գտնում էին, որ խմելու ջրի որակը վատն է, որովհետև գյուղում չկա կեղտաջրերի հավաքման և մշակման կայան: Մեկ պատասխանող նշում էր, որ նախկին խորհրդային տարիներին կեղտաջրերը հավաքվում էին Ձորաղբյուրում և տեղափոխվում հարևան քաղաքը: Տնտեսությունների մի փոքր մասը չունի հոսող ջրով գործարկվող զուգարան և օգտվում է միայն հորատիպ զուգարանից: Միևնույն ժամանակ, հոսող ջրով զուգարաններ ունեցող տնտեսությունները, որոնք մեծ թիվ են կազմում, ունեն նաև հորատիպ զուգարաններ, որոնցից օգտվում են միայն ծմռանը կամ այն ժամանակ, երբ ընդհատվում է կենտրոնացված ջրամատակարարումը: Հորատիպ զուգարանները տեղակայված են բակերում: Դրանց մեծ մասը ամրացված չեն և լցվելու դեպքում մարդիկ ուղղակի ծածկում են դրանք և մեկ այլ տեղում բացում են նորը: Ձորաղբյուրում հորատիպ զուգարաններն ավելի խորն են, քան Հայանիստում: Պատասխանողներից մեկի վկայությամբ, այդպիսի զուգարանի խորությունը 4 մ է: Մեկ պատասխանող նշում էր, որ իրենք 2 տարին մեկ անգամ

դատարկում են հորը, պահում են այդ զանգվածը 1 տարի և հետո, խառնելով հողի հետ, դրանով պարարտացնում են տնամերձ հողամասը:

Կոշտ թափոնների հեռացումը

Գյուղում չկա ոչ կոշտ թափոնների հեռացման համակարգ, ոչ էլ որևէ աղբավայր: Աղբահավաքումը հիմնախնդիր է գյուղի համար և գյուղի ավագանու օրակարգի հարցերից է: Գյուղխորհրդի ներկայացուցիչները հայտարարում էին, որ անցյալ տարի ավագանու նիստում որոշում էր կայացվել մեքենա վարձել գյուղի աղբը տեղափոխելու համար: Սակայն, դեռևս որոշված չէր, թե յուրաքանչյուր ընտանիք որքան պետք է վճարի այդ ծառայության դիմաց, և արդյոք այդ գումարը մատչելի է տեղաբնակների համար:

Միևնույն ժամանակ, 31 պատասխանողներից 21-ը նշում էր, որ իրենք աղբի մի մասը այրում են, մյուս մասը թափում են գյուղում կամ գյուղից դուրս չնախատեսված վայրերում: 11 պատասխանող աղբը չէր այրում, պարզապես թափում էր չթույլատրված տեղերում: Միայն 2 պատասխանող նշում էր, որ իրենց աղբը մեքենայով տանում, թափում են քաղաքին մոտ գտնվող աղբամաններում, իսկ մեկ պատասխանող կեցադային աղբը լցնում է իր հողամասում փորած հորը: Պատասխանողների համարյա կեսը, պարզվեց, որ այրում է պլաստիկ առարկաները: Պատասխանողների 25 % -ը պլաստիկ շշերն այրում է միայն դրսում, մինչդեռ մնացած 25 % -ը՝ և տանը, և բացօթյա: Միևնույն ժամանակ, պատասխանողների 70 % -ը գիտե, որ պլաստիկ առարկաների այրումը վտանգավոր է առողջության համար: Այնուամենայնիվ, շատ մարդիկ կարծում են, թե տանը լավ օդափոխության համակարգ ունենալու դեպքում, այդ առարկաների այրումը չի կարող վնասել իրենց առողջությանը, քանի որ արտանետված նյութերը դուրս են գալիս սենյակից:

Աղբի այրման հմնական պատճառներից մեկը աղբահավաքման համակարգի և/կամ թույլատրված աղբավայրի բացակայությունն է: Բոլոր պատասխանողները շահագրգռված էին աղբահավաքման հարցի լուծմամբ և պատրաստ էին վճարել այդ ծառայության դիմաց: Գումարը, որ հարցվողները նշում էին, տատանվում էր 150-300 դրամի սահմաններում (առավել հաճախ նշվում էր 200 դր.):

Օրգանական թափոններ և կոմպոստացում

Հողագործությունը Ձորաղբյուրում ավելի զարգացած է, քան ծրագրում ընդգրկված մյուս գյուղերում: Օրգանական պարարտանյութեր այստեղ ավելի շատ է օգտագործվում: Օրինակի համար, 18 պատասխանող (հիմնականում նրանք, ովքեր եղջերավոր անասուններ են պահում), գոմաղբն օգտագործում են որպես պարարտանյութ կամ վառելիք, կամ օգտագործում են և որպես վառելանյութ, և որպես պարարտանյութ: Պատասխանողների 60 % -ը նշում էր, որ իրենք գոմաղբը լրիվ կամ մասամբ են օգտագործում իրենց դաշտերում, այնինչ 17 % -ն այն օգտագործում է պարարտացման նպատակով: Ավելին, պատասխանողների մեծ մասը կոմպոստացնում է գոմաղբը, իսկ որոշ մարդիկ՝ չորացնում են արևի տակ:

5.9 Առողջություն, սննդակարգ և հիգիենա

Ինչպես վկայում է գյուղի բուժքույրը, մեծահասակ մարդիկ հիմնականում զանգատվում են սրտի աշխատանքից և արյան ճնշման տատանումներից: Գյուղի երեխաների մոտ հաճախակի երևույթ են աղեստամոքսային խանգարումները և վարակիչ հիվանդությունները: Ամռան և ձմռան ամիսներին լինում են լուծ

հիվանդության բռնկումներ: Մի քանի պատասխանող նշում էր, որ իրենց երեխաները դիզենտերիայի կամ այլ էնտերիկ հիվանդությունների պատճառով պառկել են հիվանդանոցում: Մեկ պատասխանող պատմում էր, թե ինչպես անցյալ տարի իր 6 ամսեկան երխան մահացավ դիզենտերիայից: Պա շատ անսպասելի էր, որովհետև գյուղի բուժքույրը հավաստիացրել էր, թե մանկական մահացության դեպքեր գյուղում չեն եղել:

Աղիքային վարակները նույնպես բավական տարածված են: Բժշկի վկայությամբ, ամենից շատ գրանցվում են ասկարիդոզ և սրատուտով վարակման դեպքերը: 1 տարի առաջ գյուղին որպես մարդասիրական օգնություն տրամադրվել էր դեղորայք UNICEF –ի կողմից:

Սննդակարգը

Ձորաղբյուրի բնակիչների սննդակարգն ավելի բազմազան է, քան մյուս գյուղերի բնակիչներինը: Պատասխանողների մեծամասնությունը ամեն օր օգտագործում է հաց և կարտոֆիլ, քիչ թիվ են կազմում այն պատասխանողները, ովքեր ամեն օր կաթնամթերք են օգտագործում: Տեղաբնակներն աճեցնում են միրգ ու բանջարեղեն, որոնք սովորաբար օգտագործվում են սեփական կարիքների համար: Ընտանիքների մեծ մասը ձմռան համար պատրաստում է պահածոներ: Որոշ ընտանիքներ պահածոյացված միրգ ու բանջարեղեն օգտագործում է կանոնավորապես: Սակայն կան նաև տնտեսություններ, որոնք չեն մշակում իրենց այգիներն ու բանջարանոցները, հետևաբար, նրանք քիչ են օգտագործում միրգ և բանջարեղեն: Քանի որ այս գյուղի տնտեսությունների եկամուտները մյուս գյուղերի համեմատ ավելի մեծ են, մարդիկ հարկադրված չեն վաճառել իրենց արտադրանքը (իրենց այգու բերքը կամ կաթնամթերքը)՝ լրացուցիչ գումար վաստակելու համար և, հետևաբար, չեն սահմանափակում իրենց սնունդը: Պատասխանողների մեծամասնությունը հայտարարում էր, որ իրենք կաթնամթերք օգտագործում են կամ ամեն օր, կամ կանոնավորապես: Միս, համեմայն դեպս, մարդիկ քիչ են օգտագործում: Պատասխանողների 60 % -ը նշում էր, որ իրենք միս ուտում են միայն հատուկ առիթների դեպքում (տոներին, ծննդյան օրերին), կամ ամիսը մեկ անգամ: Մնացած 40 % -ը միս օգտագործում է բավական հաճախ:

5.4 Ինչպես են հայերը լավաշ թխում

Ձորաղբյուրի բնակիչներին հատկանշական է հաց (լավաշ) թխելու սովորույթը: Յուրաքանչյուր ընտանիք իր տան բակում ունի հացատուն, որտեղ հողում 1.5 – 2 մ խորությամբ փոս է փորված, այսպես կոչված՝ թոնիրը: Թոնրի պատերը հարթեցնում և ծածկում են կավով: Թոնրի հատակին այրում են չորացրած գոմաղբը և բացած խմորը ամրացնում թոնրի պատերին: Հաց թխելը կնոջ պարտականությունն է: Կանայք խմորը պատրաստում են թոնրի կողքին՝ ծալապատիկ նստած գետնին: Որոշ ամուսիններ իրենց կանանց ուղքերի համարության համար հատուկ անցքեր են պատրաստում, որովհետև հացաթխումը երկար է տևում և ծնկները կարող են ցավել երկար ծալված մնալու հետևանքով:

Լավաշի պատրաստումը շատ հին ավանդույթ է: Պատասխանողներից մեկի վկայությամբ, հայերն անվտանգության նկատառումներով են կրակը վառել հորերում, որպեսզի թշնամին չնկատի այն: Հայերը գոմաղբն օգտագործում են որպես վառելիք, որովհետև այս տարածաշրջանում քիչ են անտառները:

Հիգիենան և իրազեկությունը

Ընդհանուր առմամբ, այս գյուղի բնակչության շրջանում ցածր է իրազեկությունը ջրահեռացման, խմելու ջրի որակի և մարդու առողջության մասին: Չնայած վարակիչ հիվանդությունների բռնկումները կանոնավոր բնույթ են կրում, որոշ տեղաբնակներ առողջական խնդիրները դեռևս չեն կապում խմելու ջրի որակի հետ և ջուրը չեն եռացնում՝ խմելուց առաջ: Որոշ բնակիչներ էլ, թեև տեղյակ են այն մասին, որ իրենց հիվանդությունների պատճառը խմելու ջրի վատ որակն է, միևնույն ժամանակ, չեն գիտակցում, որ իրենց արարքներով նպաստում են խմելու ջրի աղբյուրների աղտոտմանը (օր.՝ գոմաղբի կույտերը տեղադրում են խմելու ջրի աղբյուրի մոտ): Մի քանի պատասխանող, ում ընտանիքի անդամները հիվանդացած են եղել դիզենտերիայով կամ աղիքային այլ խանգարումներով, սկսել են ջուրը եռացնել նախքան օգտագործելը կամ դա անել «Հայջրմուղ» ընկերության կողմից ջրի աղբյուրների աղտոտվածության մասին նախազգուշացվելուց հետո: Մի պատասխանող նշում էր, որ ինքը ջուրը գտում է՝ անցկացնելով այն բամբակե ֆիլտրի միջով:

Երբ 30 պատասխանողների տրվում էր այն հարցը, թե որքան հաճախ են նրանք ձեռքերը լավանում, նրանք շփոթվում էին, պատասխանելով՝ «Առավոտյան և երեկոյան (70%) կամ հաց ուտելուց հետո (7%)»: Պատասխանողների 13 % -ը անհրաժեշտ էր համարում ձեռքերը լավանալ յուրաքանչյուր անգամ գուգարանից օգտվելուց հետո, իսկ 30 % -ը՝ ճաշելուց առաջ: Այն պատասխանները, ըստ որոնց՝ մարդիկ լվանում են ձեռքերն առավոտյան արթնանալիս և քնելուց առաջ, ցույց են տալիս, որ մարդիկ ձեռքերը լվանալը դեռևս չեն դիտարկում որպես մանրէների պատճառած վտանգները նվազեցնելու միջոց:

5.10 Ձորաղբյուրի հիմնախնդիրները՝ պատասխանողների ընկալմամբ

Ըստ 76 % պատասխանողների, Ձորաղբյուրի համար գերակա խնդիր է խմելու ջրի մատակարարման բարելավումը (այսինքն, խմելու ջրի որակի բարելավում և/կամ չընդհատվող ջրամատակարարում): Մեկ պատասխանողի կարծիքով, անհրաժեշտ է հին ջրատար խողովակները և պոմպերը փոխարինել նորերով: Միանշանակորեն, անվտանգ խմելու ջրի մատչելիությունը առաջնահերթ գերակա խնդիրն է տեղաբնակների համար: Երկրորդ խնդիրը պատասխանողները համարում են մանկապարտեզի բացակայությունը: Պատասխանողների 47 % -ը (հիմնականում կին-պատասխանողները) ցանկանում էր, որ գյուղում լինի մանկապարտեզ, իսկ 30 % -ը կուզենար, որ գյուղում կառուցվեր հասարակական բաղնիք: Պատասխանողների կարծիքով մնացած կարևոր հարցերից են համարվում գյուղի ճանապարհների նորոգումը, ոռոգման համակարգի բարելավումը, նախկին ոռոգման ցանցի վերականգնումը, ակումբի և/կամ գրադարանի բացումը, հեռահաղորդակցության բարելավումը և այլն: Համեմատաբար բարեկեցիկ կյանքով ապրող մի պատասխանող նույնիսկ ցանկություն հայտնեց գյուղում ունենալ համակարգչային խաղերի սրահ:

5.11 Տարաբնույթ հարցեր

Աղքատություն

Աղքատությունը Ձորաղբյուրի տեղաբնակների համար կարևոր հիմնախնդիրներից մեկն է: Չնայած այս գյուղում աշխատանքի

հնարավորությունները, մյուս գյուղերի համեմատ, բարվոք են, դեռևս կան ընտանիքներ, որոնք մեծ դժվարությամբ են գոյատևում և համարյա եկամուտ չունեն: Մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պատասխանողների 90 % -ը աղքատության շեմից ցած է գտնվում: Որոշ տնտեսություններ, հողագործությամբ զբաղվելու և հողահարկերը վճարելու համար անհրաժեշտ գումարը չունենալու պատճառով, վաճառում են իրենց դաշտերը կամ տնամերձ հողամասերը, այդ կերպ, իհարկե, նվազեցնելով իրենց եկամտի աղբյուրը: Օրինակի համար, մեր հարցազրույցներից մեկի ժամանակ, որը տեղի էր ունենում դրսում, ձմռան մի արևոտ օր, պատասխանողներն ասում էին, որ այդ պահին դրսում ջերմաստիճանն ավելի բարձր է, քան տանը:

5.12 Եզրակացություններ

1. Գյուղի գլխավոր հիմնախնդիրը խմելու ջրի որակն է: Չնայած ջրաղբյուրների պահպանման և ջրի որակի ստուգման համար պատասխանատու ընկերության գոյությանը /«Հայջրմուղ»/, խմելու ջրի որակը տարվա բոլոր եղանակներին, հատկապես՝ անձրևների շրջանում, շատ ցածր է: Խմելու ջրի միկրոկենսաբանական խիստ աղտոտման հիմնական պատճառներն են՝ ջրաղբյուրների շուրջը պաշտպանական գոտիների բացակայությունը, աղբյուրի հարևանությամբ գոմաղբի և աղբի կուտակումը, հորատիպ արտաքնոցները և ջրի անհրաժեշտ մշակման բացակայությունը: Համապատասխան կոյուղու և կեղտաջրերի մշակման բացակայությունը հանգեցնում է թե՛ մակերեսային, և թե՛ գրունտային ջրերի աղտոտմանը:
2. Ջրի պակասի հիմնախնդիրը, հատկապես ամռան ամիսներին, նույնպես սուր է դրված: Տների համարյա 30%-ը ջուր չի ստանում, որովհետև գտնվում են ջրաղբյուրից հեռու, իսկ ջրամատակարարումն էլ կամայականորեն ընդհատվում է ջրի դիմաց ծախսերը նվազեցնելու նպատակով, քանի որ մարդիկ բավականաչափ ֆինաս չունեն վճարելու համար: Պատճառներից է նաև այն, որ որոշ ընտանիքներ խմելու ջուրն օգտագործում են ոռոգման նպատակով:
3. Ոռոգման համակարգի փլուզումը զգալի վնաս հասցրեց գյուղատնտեսությանը: 700-ից միայն 50-60 տնտեսությունն է ի վիճակի ոռոգելու իր այգիներն արհեստական լճի ջրով, որն իր հերթին ջուրը ստանում է դրենաժային առուներից: Շատ տնտեսություններ ստիպված թողել են մշակման աշխատանքները: Ոռոգման բացակայությունը բացասական ազդեցություն է թողել մարդկանց բարեկեցության վրա: Բերքատվությունը ցածր է, ներդրումների չափը հողագործությունում բավական մեծ է: Այդ է պատճառը, որ ամենաաղքատ ընտանիքները ի վիճակի չեն շարունակել մշակել իրենց դաշտերը: Նրանք հարկադրված վաճառում են իրենց հողերը, քանի որ հողագործությունն իրենց համար շահութաբեր չէ, և գումար չունեն հողահարկերը վճարելու համար:
4. Կենտրոնացված կոյուղու և կեղտաջրերի մշակման բացակայությունը առաջ է բերում մակերեսային և գրունտային ջրերի աղտոտում /կեղտաջրերը ներսփռվում են սեպտիկ տարողություններից գրունտային ջրերը կամ դրենաժային առուներով հոսում են դեպի արհեստական լիճ/: Դրենաժային առուները շատ մոտ են գտնվում խմելու ջրի աղբյուրներին: Վատ սանիտարական վիճակն ազդում է խմելու ջրի որակի վրա և նպաստում ողջ տարին վարակիչ հիվանդությունների բռնկմանը:
5. Տեղի բնակիչների մեծ մասն աղքատ է և հաճախ ի վիճակի չէ վճարել ջրամատակարարման դիմաց: Քանի որ Հայաստանում բուժօգնությունը անվճար

չէ, տեղի բնակիչները մեծ ծախսեր են կատարում շտապ բուժօգնություն ստանալու համար, օր.՝ լուծի դեպքում:

6. Տեղաբնակներն իրազեկ չեն խմելու ջրի որակի և մարդու առողջության միջև կապի մասին: Դեպքեր կան, երբ բնակիչները գիտեն այդ մասին, բայց անհրաժեշտ գործողությունների չեն դիմում հետագա ռիսկը նվազեցնելու համար /օր.՝ չեն եռացնում ջուրը, շարունակում են աղտոտել ջրաղբյուրները՝ գոմաղբը կուտակում են ջրաղբյուրին մոտ տարածքում, չեն դատարկում սեպտիկ տարողությունները և այլն/:

7. Գյուղում բացակայում է աղբի կառավարումը: Չկա ոչ աղբահավաքման համակարգ, ոչ համապատասխան աղբավայր: Արդյունքում, տեղաբնակները կամ աղբը թափում են չնախատեսված վայրերում կամ այրում են աղբը, ներառյալ՝ պլաստիկ առարկաները: Պատասխանողների համարյա կեսը գիտե, որ պլաստիկ նյութերի այրումը վտանգավոր է մարդու առողջության համար, այնուամենայնիվ, նրանք մեծամասամբ շարունակում են այրել դրանք վառարաններում:

8. Հողագործությամբ զբաղվող բնակիչները հիմնականում չեն կոմպոստացնում այգու թափոնը (հիմնականում այրում են): Գոմաղբի օգտագործումը որպես վառելիք ավելի շատ կիրառվում է Ձորաղբյուրում, քան ծրագրում ընդգրկված մյուս գյուղերում: Գոմաղբն օգտագործվում է նաև թոնրատանը որպես վառելիք՝ հաց թխելու համար: Նախկինում տնտեսությունների մեծ մասն օգտագործել է հանքային պարարտանյութեր, բայց այժմ մարդիկ բավարար գումար չունեն դրանց գնման համար: Այնուամենայնիվ, որոշ տնտեսություններ շարունակում են մեծ քանակությամբ ազոտական պարարտանյութեր օգտագործել (մինչև 280կգ/հա): Միևնույն ժամանակ, տնտեսությունները չեն օգտագործում ֆոսֆորական կամ կալիումական պարարտանյութեր, այդպիսով ստեղծելով բույսի աճի համար անհրաժեշտ սնուցիչ տարրերի անհավասարակշռություն:

9. Ընդունված է պեստիցիդների օգտագործումը հատկապես ուտիճների և թրթուրների դեմ: Գումար չունենալու պատճառով գյուղացիները պեստիցիդներն օգտագործում են ծայրահեղ դեպքերում: Ընդհանուր տպավորությունն այն է, որ տեղաբնակները չգիտեն վնասատուների վերահսկման այլընտրանքային միջոցների մասին:

5.13 Առաջարկություններ

1. Անհրաժեշտ է բարձրացնել իրազեկությունը բնակչության շրջանում անվտանգ խմելու ջրի, խմելու ջրի պաշտպանության և ախտահանման, մարդու առողջության և խմելու ջրի որակի միջև կապի մասին: Տեղաբնակներին պետք է խորհուրդ տալ աղբը չթափել ջրաղբյուրներին մոտ տարածքում, դատարկել սեպտիկ տարողությունները, եռացնել ջուրն օգտագործելուց առաջ:

2. Հարկավոր է հավաքել գեոհիդրոլոգիական տվյալներ գյուղի ջրաղբյուրների մասին և այդ տեղեկատվության հիման վրա ստեղծել համապատասխան սանիտարական գոտիներ: Հավանաբար, հնարավոր կլինի գտնել թաղված աղբյուրները, վերագործարկել դրանք, որի շնորհիվ կավելանա ջրամատակարարումը:

3. Ուսումնասիրել նախկին ոռոգման համակարգի վերականգնման հնարավորությունները, որը զգալիորեն կբարելավի տնտեսությունների մեծ մասի ֆինանսական վիճակը և շահութաբեր կդարձնի հողագործությամբ զբաղվելը:

4. Պարզել, արդյոք հնարավոր է բարելավել գյուղի դրենաժային /կոյուղու համակարգը, որպեսզի խուսափեն կեղտաջրերով խմելու ջրի և արհեստական լճի ջրերի աղտոտումից: Նպատակահարմար կլինեն ավելի շատ տեղեկատվություն ձեռք բերել նախկին խորհրդային տարիներին գոյություն ունեցած կեղտաջրերի մշակման համակարգի և դրա հնարավոր վերականգնման մասին:
5. Կազմակերպել իրազեկության բարձրացմանն ուղղված քարոզարշավ պլաստիկ իրերի այրման դեմ: Միգուցե հնարավոր է կազմակերպել պլաստիկ շշերի հավաքումը, եթե կա դրանք կրկնաշրջանառության մեջ դնող գործարան Հայաստանում:
6. Բարձրացնել իրազեկությունը օրգանական կամ պեստիցիդների նվազագույն օգտագործմամբ հողագործության, կոմպոստացման, վնասատուների այլընտրանքային օրգանական կառավարման շահավետության և այլնի մասին: Առաջարկվում է խրախուսել տնտեսություններում էկոսան արտաքնոցների ստեղծման գաղափարը հորատիպ արտաքնոցների փոխարեն, չնայած տնտեսությունների 70 % -ն ունի հոսող ջրով գործորկվող զուգարաններ:
7. Ներդնել աղբահավաքման համակարգ կամ զոնե հատկացնել դրա համար որևէ վայր: Լավ կլինեն, եթե ներմուծվեր թափոնների տեսակավորված հավաքման համակարգը, որը նվազագույնի կհասցներ թափոնների հոսքը և կավելացներ կրկնաշրջանառությունը:

Հավելված. Շրջագայությունների ժամանակացույցը

06.02.2005	Կատարինա Բենթվելսեն և Սոլոմիա Բաբիակ: Թռիչք՝ Ամստերդամ-Երևան
07.02.2005	Ժամանումը Երևան, հանդիպում ՀԿՀԱԱՇՄ ՀԿ հետ, TMF ծրագրի և վերջինիս գործընկերների («Քաչաթել», Աֆղանստան) ներկայացման վերաբերյալ սեմինար
08.02.2005	Ուզբեկստանի և Հայաստանի գործընկերների շնորհանդեսները: Վերապատրաստման դասընթաց Թեո վան Քուլվիկի ղեկավարությամբ
09.02.2005	Ծանոթության նպատակով այց Հայանիստ: Հարցազրույցներ տեղեկատու անձանց հետ Ծանոթության նպատակով այց Ֆանստան: Հարցազրույցներ տեղեկատու անձանց հետ Աշխատանքների ծրագրավորում, հատկապես՝ ծրագրի առաջին տարվա համար
10.02.2005	Հանդիպում խմբի բոլոր անդամների հետ: Ծրագրի մշակում: Վերապատրաստման դասընթաց Թեո վան Քուլվիկի ղեկավարությամբ
11.02.2005	TMF ծրագրի շնորհանդեսը և սեմինար Հայաստանի ՀԿ-ների համար, ՄԱԿ-ի շենքում
12.02.2005	Ծանոթության նպատակով այց Ձորաղբյուր: Հարցազրույցներ տեղեկատու անձանց և տեղի բնակիչների հետ: Փոփոխություններ Հայաստանում սոցիալ-տնտեսական հետազոտության վերաբերյալ հարցաթերթիկներում: Կարճ հարցաթերթիկների մշակում

13.02.2005	Կատարինա Բենթվելսեն և Սոլոմիա Բաբիակ: Աշխատանք ՀԿՀԱԱՇՄ ՀԿ անդամների հետ նախագծի ցուցիչների վերաբերյալ, նախագծի հնարավոր թեմաների քննարկում (օր.՝ ամարանտի արտադրություն, ջրային հակիմք և այլն) Սոլոմիա Բաբիակ: Հետազոտության հարցաթերթիկների թարգմանություն: Աշխատանք ՀԿՀԱԱՇՄ-ի և WECF-ի անդամների հետ՝ ծրագրի հիմնախնդիրների սահմանումների և աշխատանքների ծրագրավորման վերաբերյալ
14.02.2005	Կատարինա Բենթվելսեն և Սոլոմիա Բաբիակ: Հարցազրույցներ Հայանիստում տեղեկատու անձանց և բնակիչների հետ
15.02.2005	Կատարինա Բենթվելսեն: Հարցազրույցներ Ֆանտանում տեղեկատու անձանց և բնակիչների հետ
16.02.2005	Կատարինա Բենթվելսեն: Հարցազրույցներ Ձորաղբյուրում բնակիչների և տեղեկատու անձանց, ներառյալ՝ դպրոցի տնօրենի հետ
17.02.2005	Կատարինա Բենթվելսեն: Մեկնում Երևանից Երևան-Ամստերդամ չվերթով: Սոլոմիա Բաբիակ: Հարցազրույցներ Հայանիստում, հիմնականում տեղական բնակիչների հետ
18.02.2005	Սոլոմիա Բաբիակ: Հարցազրույցներ Ձորաղբյուրում, հիմնականում տեղական բնակիչների հետ
19.02.2005	Սոլոմիա Բաբիակ: Հարցազրույցներ Ֆանտանում, հիմնականում տեղական բնակիչների հետ
21.02.2005	Սոլոմիա Բաբիակ: Մեկնում Երևանից Երևան-Ամստերդամ չվերթով: